

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

Ն. Թովմայան
Ա. Վյուլումյան
Ֆ. Թոխյան
Ա. Թունյան
Ա. Խաչատրյան
Ն. Նազարյան
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3(91)
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
Վալերի ՊՈՂՈՍՅԱՆ7

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1385-1408)

* 2017 թվականի Հոկտեմբերի 24-ին Երեվանի ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ
ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1385 , 10 նոյեմբերի 2017 թվականի).....12

* ԳԱԳԻԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 70-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1386 , 14 նոյեմբերի 2017 թվականի)16

* ԱՐԱՄ ՀԱԿՈՒԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
142-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 143-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1387 , 21 նոյեմբերի 2017 թվականի)23

* 2017 թվականի ՄԱՅԻՄԻ 26-ԻՆ ԿԱԶԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՄԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ
ՍՈՒԲՄԻԴԻԱՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ
ԿԱՄԱՎՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ
ՍՈՒԲՄԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1388 , 21 նոյեմբերի 2017 թվականի).....39

- * 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏՐԱՍԵԿԱ ՍՈՒԼՏԻՍՈՂԱԼ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1389 , 21 նոյեմբերի 2017 թվականի).....45
- * 1968 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1390 , 21 նոյեմբերի 2017 թվականի).....48
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՓՈԽԱԴՐԱՂ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1391 , 23 նոյեմբերի 2017 թվականի).....52
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1» (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1392 , 23 նոյեմբերի 2017 թվականի).....55
- * ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 296-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1393 , 5 դեկտեմբերի 2017 թվականի).....60
- * ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 375-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 379-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1394 , 8 դեկտեմբերի 2017 թվականի)74
- * «ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1395 , 19 դեկտեմբերի 2017 թվականի).....89

- * «ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1396 , 26 դեկտեմբերի 2017 թվականի).....103

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «1997 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1397 , 23 հունվարի 2018 թվականի)122

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1398 , 23 հունվարի 2018 թվականի)125

- * «ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 68-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ «ՄԱՍՆԱԿՑԵԼ» ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՃՈՒՐԴՆ ՄԿՄՎԵԼՈՒ ՊԱՀԻՑ ԴԱՀԼԻՃ ՄՏՆԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է» ԴՐՈՒՑԹՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1399 , 30 հունվարի 2018 թվականի)129

- * ՍՑՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 57-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1400 , 6 փետրվարի 2018 թվականի)141

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1401, 6 փետրվարի 2018 թվականի).....151

- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՀՈՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1402 , 6 փետրվարի 2018 թվականի).....155
- * ՀՀ ՄԱՐԴՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 69-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, 70-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 72-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1403 , 13 փետրվարի 2018 թվականի)159
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՂՂԶՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1404 , 13 մարտի 2018 թվականի)173
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԽԼԻՄԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՅ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1405 , 13 մարտի 2018 թվականի)176
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՄԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՄՅՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1406 , 13 մարտի 2018 թվականի)180
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՅ, ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ

ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ
 ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ-1407 , 16 մարտի 2018 թվականի)183

* ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ԿՈՇՏՈՅԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ,
 ՆԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
 ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 154-ՐԴ
 ՀՈԴՎԱԾԻ, 158-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 159-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ-1408 , 19 մարտի 2018 թվականի)202

• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ԸՆՏՐՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
 ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ (13 սեպտեմբերի 2018 թվական).....226

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
 ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ (10 սեպտեմբերի 2018 թվական).....227

Վալերի ՊՈՂՈՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հանրահայտ է, որ յուրաքանչյուր հասարակությունում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ հակասություններ, անգամ սուր, թշնամանքի հասնող հակամարտություններ, քաղաքական, տնտեսական, սոցիալական, անձնական ու հասարակական շահերի բախումներ: Հետեւաբար, յուրաքանչյուր հասարակություն կարիք ունի այդ հակասությունները մեղմելու, ամեն տեսակի բախումները կանխելու եւ փոխհամաձայնություն հաստատելու խնդիր: Ժամանակին այդ խնդիրը լուծվում էր միապետական կառավարման միջոցով եւ դրա ապացույցը եւրոպական բացարձակ միապետությունների առկայությունն էր: Մակայն, վերջին մի քանի հարյուրամյակում այդ խնդիրը լուծելու լավագույն ճանապարհը դարձավ ժողովրդավարության հաստատումը, ինչը ենթադրում է ազգային համաձայնության հաստատում քաղաքական միասնության հիման վրա: Այդ խնդիրը լուծելու լավագույն ճանապարհը քաղաքական միասնության ստեղծումն է: Ինչպես նկատում է գերմանացի սահմանադրագետ Կ. Հեսսեն (Основы конституционного права ФРГ), քաղաքական միասնություն նշանակում է բոլոր քաղաքական ու հասարակական ուժերի փոխհամաձայնությամբ հաստատված հասարակական միջավայր, որտեղ գործող սուբյեկտների վարքագիծը կարգավորվում է փոխադարձ վստահության հիման վրա ձեւավորված կանոններով, որոնք, առանց բացառությունների, պարտադիր են դառնում բոլորի համար: Ընդ որում, այդ կանոնների հիմքում ընկած սկզբունքներն ու գաղափարները պետք է ուղղված լինեն ինչպես անհատների բարեկեցության ու ազատ գործունեության ապահովմանը, այնպես էլ ողջ հասարակության առաջընթաց զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Ազգային համաձայնության եւ քաղաքական միասնության հաստատման անհրաժեշտությունը որքան հասկանալի ու ցանկալի է, այնքան էլ դժվար հասանելի է, եթե դրա համար չկան բավարար պայմաններ: Եթե գոյություն ունի այնպիսի քաղաքական ուժ, որը մյուս բոլոր ուժերի համեմատ տվյալ պահին ունի գերակշիռ դիրք եւ թե՛ օբյեկտիվորեն եւ թե՛ սուբյեկտիվորեն համոզված է, որ իր ուժերն անսպառ են, եւ միշտ կարող է հաղթել, ապա այդ դեպքում քաղաքական միասնությունը դառնում է պատրանք, եւ ար-

դյունքում հաստատվում է բռնակալական քաղաքական «միասնություն»: Այսինքն, ըստ էության, ստեղծվում է բացարձակապետական տիպի իշխանություն: Սակայն, ակնհայտ է, որ բացարձակ ուժեղ քաղաքական ուժեր գոյություն չունեն եւ միշտ հանդես են գալիս նոր ուժեր, որոնք ունակ են հաղթել «բացարձակ» ուժեղներին: Եւրոպական երկրների (եւ ոչ միայն) պատմական փորձը վկայում է, որ քաղաքական ուժերի բախումները դրսևորվել են ինտրիգներով, խռովություններով, ապստամբություններով, քաղաքացիական պատերազմներով, հեղաշրջումներով, հեղափոխություններով, որոնք ուղեկցվել են մեծ արյունահեղություններով, եւ, որ ամենակարեւորն է, պարզվել է, որ հաղթանակը եղել է չափազանց անցողիկ, հաղթողը շուտով դարձել է պարտվող: Հետեւաբար, այդ դեպքում եւս աստիճանաբար դրսևորվել է այն պատկերացումը, որ անհրաժեշտ է որոշակի հարցերում փոխհամաձայնության գալ, վարել փոխզուրմային քաղաքականություն, մշտապես ղեկավարվել նույն կանոններով: Ի դեպ, նման մոտեցմամբ է ազգային համաձայնություն հաստատելու հրամայականը դարեր շարունակ լուծվել հայ իրականությունում, ինչի վկայությունն են ազգային-եկեղեցական ժողովները (մանրամասները՝ Գ. Հարությունյան «Սահմանադրական մշակույթ» մենագրությունում):

Քանի որ հասարակությունը եւ պետությունը մշտապես կարիք ունեն լուծել ինչպէս առկա, այնպէս էլ անընդհատ առաջացող նորանոր հիմնախնդիրներ, հաղթահարել դժվարություններ, հարթել կնճռոտ հարցեր ու կանխել տարբեր կարգի բախումներ ու կոնֆլիկտներ, ուստի անհրաժեշտ է ստեղծել բոլորի համար ընդունելի, որոշակի կանոններ ու կառուցակարգեր, այլ կերպ ասած՝ Սահմանադրություն: Այսինքն, Սահմանադրությունն, ընդհանուր առմամբ, հասարակական եւ քաղաքական ուժերի միջեւ կնքված համաձայնություն է, մի պայմանագիր, որով սահմանվում են այնպիսի ղեկավարող սկզբունքներ, որոնց միջոցով կարելի է ձեւավորել ազգային համաձայնություն եւ քաղաքական միասնության հաստատման, հասարակության, անհատի ու պետության միջեւ հարաբերություններ, պետական գործունեության կարգավորման հիմունքներ:

Սահմանադրության այսպիսի ըմբռնումը միաժամանակ նշանակում է ազգային համաձայնության եւ դրա կարեւորագույն բաղադրամասի՝ քաղաքական միասնության հաստատում, ինչը ենթադրում է, որ անհրաժեշտ է տվյալ պահին մեծամասնության եւ փոքրամասնության, ինչպէս նաեւ քաղաքական մեծամասնության (իշխանության) եւ քաղաքական փոքրամասնության (ընդդիմության) միջեւ հաստատել որոշակի ներդաշնակություն, փոխլրացում:

Սակայն, անհրաժեշտ ներդաշնակությունը չի հաստատվի, եթե միաժամանակ չպահպանվի փոքրամասնության իրավունքների երաշխիքը: Ինչպես հայտնի է, խորհրդարանական ընտրությունների միջոցով են որոշվում քաղաքական մեծամասնությունը եւ փոքրամասնությունը, այնուհետեւ այդ մեծամասնությունը ձեւավորում է կառավարություն: Այսինքն, ստացվում է, որ նույն քաղաքական ուժը ղեկավարում է եւ՝ օրենսդիր իշխանությունը, եւ՝ գործադիր իշխանությունը՝ անկախ այն բանից, որ Սահմանադրությունը իշխանությունների բաժանման եւ հակակշռման սկզբունքի հրամայականով պահանջում է այդ իշխանությունների միջեւ հաստատել հակակշիռներ եւ զսպումներ: Իսկ քաղաքական փոքրամասնությունը առհասարակ դուրս է մնում իշխանական գործառույթներից, և կարող է խորհրդարանում զբաղվել միայն հռետորաբանությամբ, որքանով նման համակարգում որեւէ ձեռով չի կարող մասնակցություն ունենալ որոշումների (մասնավորապես օրենքների) ընդունմանը: Ընդդիմությունը, զրկվելով որոշումների կայացման վրա որեւէ ազդեցություն ունենալուց, զրկվում է նաեւ պատասխանատվություն կրելուց: Եթե այս ամենին ավելացնենք նաեւ, որ մի շարք կարեւորագույն պաշտոններում (դատախազություն, քննչական մարմին, տարբեր հանձնաժողովներ եւ այլն) նշանակումները կատարում է այդ նույն խորհրդարանը, այսինքն միեւնույն քաղաքական ուժը, ապա ակնհայտ է, որ արդյունքում կունենանք տվյալ քաղաքական ուժի գերիշխանությունը: Հետեւաբար, կարծում ենք, պարզ է, որ քաղաքական փոքրամասնությունը անհրաժեշտաբար պետք է ունենա իշխանական որոշակի լծակներ՝ ինչպես մեծամասնությանը զսպելու եւ հակակշիռ լինելու առումով, այնպես էլ որոշակի պատասխանատվություն ստանձնելու համար: Եւ այս դեպքում կարող է ապահովվել իսկապես քաղաքական միասնություն եւ ներդաշնակություն:

Այս տեսակետից, կարծում եմ, որոշակի պաշտոններ պետք է հատկացնել քաղաքական փոքրամասնությանը, օրինակ, Ընտրական հանձնաժողովը, Վերահսկիչ պալատների բնույթ ունեցող մարմինները եւ այլն: Ումանք կարող են հակադարձել, թե այդ դեպքում, օրինակ, Ընտրական հանձնաժողովը կարող է ընտրության արդյունքները կեղծել հոգուտ ընդդիմության, սակայն դա չի կարող տեղի ունենալ, որովհետեւ իրավապահ մարմինները, որոնք ենթարկվում են քաղաքական մեծամասնությանը, ստիպված կլինեն գործել օրինականության պահանջներին համապատասխան, ինչն էլ կնպաստի օրենքի եւ իրավունքի գերակայության հաստատմանը: Սակայն, նշված տարբերակը խնդրի լուծման միակ տարբերակը չէ, կան բազմաթիվ այլ կառուցակարգեր, որոնք հաջողությամբ կիրառվում են ժողովրդավարական պետություններում: Օրինակ,

Մեծ Բրիտանիայում գործում է խորհրդարանական օմբուդսմենի ինստիտուտ, որը հսկողություն է իրականացնում վարչական գործունեության նկատմամբ՝ վատ կառավարման վերաբերյալ բողոքների առկայության դեպքում, երբ Համայնքների պալատի անդամները ներկայացնում են համապատասխան հետաքննություն կատարելու պահանջներ: Որոշակի պաշտոններ զիջելով ընդդիմությանը, իշխանությունը կստանա լրացուցիչ լծակներ՝ պատասխանատվությունը համամասնորեն բաշխելու համար, ինչպես նաև կարող է այդ հանգամանքը օգտագործել քարոզչական նպատակներով:

Քաղաքական միասնությունը մեծապես վտանգվում է, երբ իշխող քաղաքական ուժի պաշտոնատար անձինք եւ նրանց մերձակա շրջանակը իրենց գործողությունները չեն սահմանափակում Սահմանադրության պահանջներին համապատասխան եւ, փաստորեն, դառնում են օրինախախտներ, ու մնում անպատիժ: Հատկապես անհասկանալի է, թե ինչո՞ւ նման չինովնիկները, որպես կանոն, հրաժարական չեն տալիս, առավել եւս, երբ այդ դեպքերը դառնում են հանրահայտ եւ դրանց արձագանքում են ՋԼՄ-ները: Ժողովրդավար երկրներում այդպիսի պաշտոնյաները անհապաղ հրաժարական են տալիս, քանի որ նման դեպքերում այդ հանգամանքն անմիջապես ազդում է իշխող քաղաքական ուժի վարկանիշի վրա եւ առաջիկա ընտրություններում վտանգում նրա շանսերը: Մեզանում դա բացակայում է եւ դառնում կողմնակի ապացույց, որ ընտրություններում կարելուք վարչական պաշարներն են: Բնականաբար, այս պարագայում քաղաքական միասնության եւ ազգային համաձայնության մասին խոսք լինել չի կարող, որովհետեւ քաղաքական ուժերը գտնվում են անհավասար պայմաններում:

Ընդհանուր առմամբ, հասարակությունը նման է բաց ծովում հայտնված նավի, որին կայունություն կարող է հաղորդել միայն խարիսխը եւ այդ խարիսխի դերը կարող է կատարել Սահմանադրությունը, եթե միայն դրանում ամրագրված սկզբունքները դառնան անկասկածելի արժեքներ եւ յուրաքանչյուրի վարքագիծը ուղղորդվի այդ սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, եթե քաղաքական մեծամասնությունը սահմանափակված չէ Սահմանադրությամբ, այդ դեպքում հասարակությունը պառակտվում է եւ գայթակղություն է առաջանում հիմնախնդիրները լուծել ոչ իրավական ճանապարհով: Անհրաժեշտ է նշել նաև, որ Սահմանադրությունը կարող է իրականացնել այդ դերակատարությունը միայն այն դեպքում, երբ իսկապես բուն իմաստով Սահմանադրություն է, ամբողջությամբ համապատասխանում է Սահմանադրությանը բավարարող պահանջներին, այսինքն ամրագրված են ժողովրդավարական սկզ-

բունքները՝ իշխանությունը պատկանում է ժողովրդին, իշխանությունների տարանջատումը՝ զսպումների ու հակակշիռների կառուցակարգերով, ապահովվում է փոքրամասնությունների (այդ թվում՝ քաղաքական փոքրամասնության) իրավունքները եւ այլն, որոնց միջոցով երաշխավորվում է իշխանության սահմանափակումը:

Շնորհակալություն եւմ հայտնում պրոֆ. Ֆ. Թոխյանին մի շարք առաջարկությունների ու դիտողությունների համար:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 թվականի Հոկտեմբերի 24-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ
ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը^ա կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Ա. Զաքարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հոկտեմբերի 24-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության

միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 02.11.2017թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն (այսուհետև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի հոկտեմբերի 24-ին Երևանում՝ Հայաստանի Հանրապետությանը պետական արտահանման վարկ տրամադրելու նպատակով:

2. Ռուսաստանի Դաշնությունը (Ռուսական կողմ) Հայաստանի Հանրապետությանը (Հայկական կողմ) տրամադրում է մինչև 100 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով պետական արտահանման վարկ (այսուհետև՝ Վարկ) ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման համար՝ համաձայն Համաձայնագրի № 1 հավելվածում նշված ցանկի: Համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ ցանկը կարող է փոփոխվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Վարկի գծով պարտքի հաշվառումը կատարվում է ԱՄՆ դոլարով, և Հայկական կողմը Վարկը կարող է օգտագործել 2018-2022 թթ. ընթացքում:

3. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող 5 հավելված՝ Հավելված 1. «Ցանկ Հայաստանի Հանրապետությանը մատակարարվող ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի», Հավելված 2. «Հիմնական պարտքի գումարի մարման ժամանակացույց», Հավելված 3. «Դիմում պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու մասին», Հավելված 4. «Հաստատում պայմանագիրը ֆինանսավորման ընդունելու մասին», Հավելված 5. «Մերժում պայմանագիրը ֆինանսավորելու»:

4. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ հայկական և ռուսական լիազորված կազմակերպությունները միմյանց հետ կնքում են Պայմանագրեր, որոնցով որոշվում են Համաձայնագրի շրջանակներում արտադրանքի մատակարարումների ծավալները, ժամկետ-

ները և գները: Պայմանագրերն ընդունվում են ֆինանսավորման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից հաստատվելուց հետո:

Համաձայնագրի շրջանակներում հաշվառում կատարելու և հաշվարկների վարման նպատակով Հայկական կողմից լիազորված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և Ռուսական կողմից լիազորված «Վնեշէկոնոմբանկ»-ը Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան 60 օրացուցային օրվա ընթացքում կնքում են Համաձայնագրի շրջանակներում հաշվառման և հաշվարկների վարման տեխնիկական կարգի մասին համաձայնագիր:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Վարկն օգտագործել ԱՄՆ դոլարով հաշվարկված արտադրանքի մատակարարման վերաբերյալ պայմանագրերից (այսուհետև՝ Պայմանագրեր) յուրաքանչյուրի արժեքի մինչև 90 տոկոսի ֆինանսավորման համար, որոնք կնքվել են Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան հաստատված՝ պայմանագրերում նշված հայկական և ռուսական կազմակերպությունների միջև (այսուհետև՝ Լիազորված կազմակերպություններ) (հոդված 1, կետ 2),

- յուրաքանչյուր պայմանագրի արժեքի 10 տոկոսից ոչ պակաս չափով վճարել ԱՄՆ դոլարով կանխավճարներ հոգուտ ռուսական Լիազորված կազմակերպությունների (հոդված 1, կետ 3),

- Վարկի օգտագործման ժամկետը լրանալիս 30 օրացուցային օրվա ընթացքում Ռուսական կողմի օգտին կատարել կոմիսիոն վճարում Վարկի չօգտագործված գումարի 1 տոկոսի չափով, որը կատարվում է ԱՄՆ դոլարով կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև համաձայնությամբ ռուսական ռուբլով՝ ռուսական ռուբլու նկատմամբ ԱՄՆ դոլարի՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից վճարման ամսաթվից երկու օրացուցային օր առաջ սահմանված փոխարժեքով և ենթակա չէ Ռուսական կողմից փոխհատուցման (հոդված 2, կետ 5),

- սկսած 2023թ. մայիսի 15-ից մինչև 2037թ. նոյեմբերի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, մարել Վարկի փաստացի օգտագործված գումարը (այսուհետև՝ Հիմնական պարտք)՝ Համաձայնագրի №2 հավելվածում սահմանված ժամանակացույցին համապատասխան (հոդված 3, №2 հավելված),

- Վարկի յուրաքանչյուր գումարի օգտագործման ամսաթվից մինչև Հիմնական պարտքի վերջնական մարման ամսաթիվը ներառյալ յուրա-

քանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վճարել Վարկի տոկոսավճարները տարեկան 3.0 տոկոս տոկոսադրույքով (հոդված 4, կետեր 1 և 2),

- Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված Հիմնական պարտքի մարման և (կամ) Վարկի տոկոսավճարների վճարման համար կատարված ցանկացած վճարում համապատասխան վճարման ամսաթվին՝ հաջորդող 10 օրացուցային օրվա ընթացքում չկատարելու պարագայում՝ այդ պարտքը համարվում է ժամկետանց (այսուհետև՝ Ժամկետանց պարտք), վճարել դրա վրա հաշվեգրված տոկոսավճարները՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված վարկի դրույքի 150 տոկոսի չափով (այսուհետև՝ Ժամկետանց պարտքի տոկոսավճարներ)՝ սկսած վճարման համապատասխան ամսաթվից մինչև դրա ամբողջական ծավալով իրականացման ամսաթիվը ներառյալ (հոդված 5, կետ 1),

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Համաձայնագրի հետ կապված տեղեկատվության և գրագրության գաղտնիությունն ապահովելու նպատակով (հոդված 10):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հոկտեմբերի 24-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1385



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԳԱԳԻԿ ԲԱՂԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 70-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Լ. Դավթյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գագիկ Բաղայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(91)2018
16

Գործի քննության առիթը Գագիկ Բաղայանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Պետական տուրքը» վերտառությամբ 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հայցագինը մեծացնելու դեպքում պետական տուրքի չբավականացնող գումարը գանձվում է վճիռը կայացնելիս՝ ավելացված հայցագնին համապատասխան: Հայցագինը նվազեցնելու դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում»:

Ընդունումից ի վեր օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխության չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

04.04.2016թ. Գագիկ Սամվելի Բաղայանը դիմելով դատարան՝ պահանջել է Վարդան Հմայակի Եղիազարյանից բռնագանձել փոխառության պայմանագրով տրված 2500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսները: Գագիկ Սամվելի Բաղայանի կողմից սկզբնական հայցագնի երկու տոկոսի՝ 24800 ՀՀ դրամի չափով պետական տուրքը վճարվել է ամբողջությամբ: Ներկայացված հայցադիմումը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 07.04.2016թ. ընդունել է վարույթ: 08.04.2016թ. Գագիկ Բաղայանը միջնորդությամբ փոփոխել է հայցապահանջը՝ **ավելացրել է** հայցագինը և խնդրել է Վարդան Եղիազարյանից հոգուտ իրեն բռնագանձել 264.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսները: 04.05.2016թ. Գագիկ Բաղայանը միջնորդությամբ փոփոխել է հայցապահանջը՝ **նվազեցրել է** հայցագինը և խնդրել է Վարդան Եղիազարյանից հոգուտ իրեն բռնագանձել 2500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսները: Հիմք ընդունելով մինչև վճիռ կայացնելը Վարդան Եղիազարյանի

կողմից 2500 ԱՄՆ դոլարի չափով գումարի վճարման, այսինքն՝ սկզբնական հայցապահանջի կամավոր կատարման փաստը՝ 12.07.2016թ. Գագիկ Բաղայանը **հրաժարվել է** հայցից: 12.12.2016թ. դատարանը կայացրել է վճիռ, որով կարճել է գործի վարույթը՝ Գագիկ Բաղայանի կողմից հայցից հրաժարվելու հիմքով: Միաժամանակ, դատարանը վճռել է Գագիկ Բաղայանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել բռնագանձման պահին 5280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, ինչպես նաև վերջինիցս հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվարկել և բռնագանձել պետական տուրք՝ փաստացի վճարման պահին՝ 264.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվեգրված տույժերի գումարի 2/երկու/ տոկոսի չափով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել, որը մասնակիորեն բավարարվել է ՀՀ վերաքննիչ դատարանի՝ 14.03.2017թ. որոշմամբ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 12.12.2016թ. թիվ ԿԴ/0321/02/16 վճիռը մասնակի՝ բռնագանձման ենթակա պետական տուրքի մասով, բեկանել է և փոփոխել՝ որոշելով. «Վարդան Հմայակի Եղիազարյանից հոգուտ Գագիկ Սամվելի Բաղայանի բռնագանձել 24800 /քսանչորս հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես Վարդան Եղիազարյանից հոգուտ Գագիկ Բաղայանի բռնագանձման ենթակա 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի համար ընդհանուր իրավասության դատարան դիմելու համար վերջինիս կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վարդան Եղիազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 01.11.2015թ.-ից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկվելիք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներով սահմանված տոկոսագումարի 2 տոկոսը՝ որպես ընդհանուր իրավասության դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար:

Գագիկ Սամվելի Բաղայանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 5230 /հինգ հազար երկու հարյուր երեսուն/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես Վարդան Եղիազարյանից հոգուտ Գագիկ Բաղայանի բռնագանձման ենթակա 261.500 /երկու հարյուր վաթսուսմեկ հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի համար ընդհանուր իրավասության դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար:

Գագիկ Բաղայանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 261.500 /երկու հարյուր վաթսուներեկ հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ սկսած 08.04.2016թ.-ից մինչև հայցապահանջի նվազեցման օրը՝ 04.05.2016թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվելիք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներով սահմանված տոկոսագումարի 2 տոկոսը՝ որպես ընդհանուր իրավասության դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար»:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ դիմողի կողմից բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2017թ. որոշմամբ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 6-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ օրենսդրությամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, նախատեսված չէ այն դեպքը, թե ինչպես պետք է վարվի դատարանը պետական տուրքի չափը որոշելիս ավելացված հայցագինը նվազեցվելու դեպքում, երբ պետական տուրքը վճարված չէ ավելացված հայցագնին համապատասխան: Օրենսդիրը՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մակարդակով, նախատեսել է միայն այդ դեպքում վճարված պետական տուրքի անվերադարձնելիության հարցը, սակայն չի սահմանել, որ չվճարված պետական տուրքը ենթակա է վճարման ավելացված հայցագինը նվազեցնելու դեպքում:

Ըստ դիմողի՝ դատարան դիմելու համար պետական տուրքի հետ կապված վիճարկվող իրավանորմի անորոշությունը դատարաններին հնարավորություն է տալիս կամայականորեն, անկանխատեսելի և չափազանց հայեցողաբար լուծելու պետական տուրքի հարցը, ինչն ինքնին հանգեցնում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և սեփականության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների խախտման:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նաև նրանով, որ իր գործով ՀՀ վերաքննիչ դատարանը կիրառել է օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 29.01.2013թ. թիվ 129 որոշման 19-րդ կետի շրջանակներում տրված մեկնաբանությամբ, մինչդեռ, ըստ դիմողի, վիճարկվող նորմի իրավական անորոշությունը հարկ է գնահատել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի «ա» ենթակետի, օրենսգրքի 68, 69, 70, 72 և 73-րդ հոդվածների հետ համակարգային կապի և միասնության մեջ:

Վերագրյալի հիման վրա դիմողը խնդրում է օրենսգրքի վիճարկվող նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 6-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր, կամ օրենսգրքի վիճարկվող նորմը **իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ**, ճանաչել ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 6-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր, կամ բացահայտել օրենսգրքի՝ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը:

4. Պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ պետական տուրքը երկու կարևորագույն գործառույթներ է իրականացնում. նախ՝ այն միջոց է արդարադատության՝ որպես պետության կողմից իրականացվող ծառայության ծախսերի մի մասի փոխհատուցման, ապա՝ նաև քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար գործուն երաշխիք է, որ իրենց նկատմամբ անհիմն հայցեր չներկայացվեն: Վերջինս ընկած է ինչպես օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման կանոնների, այնպես էլ օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման հիմքում, այն է՝ երբ հայցագիրը հայցվորի կողմից մեծացվում է, հայցվորն ավելացնում է պետական տուրքի չափը՝ այն համապատասխանեցնելով նոր հայցագրին, իսկ նվազեցվելու դեպքում վճարված պետական տուրքը չի վերադարձվում:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, վկայակոչելով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2013 թվականի թիվ 129 որոշման 19-րդ կետը, գտնում է, որ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնության տեսակ է, ինչը, ի տարբերություն պետական տուրքի գծով արտոնության մեկ այլ՝ «պետական տուրքի նվազեցում» տեսակի, չի հանգեցնում օրենքով սահմանված կարգով հաշվարկված պետական տուրքի նվազեցման. վճարումը պարզապես հետաձգվում է որոշակի ժամկետով:

Պատասխանողի գնահատմամբ՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ վերը նշված որոշմամբ հաստատված կանոնն անմիջականորեն բխում է օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից:

Պատասխանողը գտնում է նաև, որ դիմումն ամբողջությամբ խարսխված է պետական տուրքի՝ վերը նշված գործառույթներից միայն առաջինի վրա՝ անտեսելով պետական տուրքի՝ անձանց նկատմամբ անհիմն հայցեր չներկայացնելու երաշխիք լինելու հանգամանքը: Արդյունքում, պատասխանողի գնահատմամբ, դիմողը հանգել է օրենքով սահմանված պետական տուրքի ինստիտուտի տրամաբանության հետ չհամընկնող եզրակացությունների:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կարծիքով Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված դրույթը: Ըստ դիմողի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթի սխալ կիրառումը պայմանավորված է նրանով, որ Վերաքննիչ դատարանն այն կիրառել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.01.2013թ. թիվ 129 որոշման 19-րդ կետի շրջանակներում տրված մեկնաբանությամբ, որում չի անտեսվում պետական տուրքի՝ անձանց նկատմամբ անհիմն հայցեր չներկայացնելու երաշխիք լինելու հանգամանքը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դիմողն ըստ էության բարձրացնում է իրավական նորմի կիրառման իրավաչափության հարց, ինչն իր լուծումը պետք է ստանար օրենքի միատեսակ կիրառման գործառույթի իրականացման շրջանակներում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել իրավական նորմի կիրառման իրավաչափության վերաբերյալ իր՝ 2009թ. մարտի 17-ի ՄԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաև այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց ..., ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**:

1. «Գազիկ Բադայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1386



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐԱՄ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 142-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 143-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչներ Տ. Եզոբյանի և Դ. Գյուրջյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արամ Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Արամ Հակոբյանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
23

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Մեղադրյալին կալանքից ազատելը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝

...

6) մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը»:

Օրենսգրքի «Գրավը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 143-րդ հոդվածի 5րդ մասը սահմանում է.

«5. Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես հանձնարարում է մեղադրյալին ազատել կալանքից»:

Օրենսգրքի 142-րդ հոդվածը ենթարկվել է փոփոխության «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2015 թվականի ապրիլի 7-ին սույն գործով դիմողը թիվ 69100615 քրեական գործով ձերբակալվել և ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: 2015 թվականի ապրիլի 10-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ մեղադրյալ Արամ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը՝ երկու ամիս ժամկետով: Դատարանի նույն որոշմամբ մեղադրյալ Արամ Հակոբյանի պաշտպանների համապատասխան միջնորդությունը բավարարվել է, և

մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը փոխարինվել է գրավով՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2015 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազի որոշմամբ Արամ Հակոբյանի ազատության իրավունքի խախտումը ճանաչելու և քննիչին պատասխանատվության ենթարկելու նպատակով անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու մասին մեղադրյալ Արամ Հակոբյանի պաշտպանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Արամ Հակոբյանի պաշտպանները բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ճանաչել գործի նախաքննությունը վարող քննիչի անգործությունը և դրա հետևանքով իրենց պաշտպանյալի ազատության իրավունքի խախտումը: 2016 թվականի մայիսի 24-ին հիշյալ դատարանի որոշմամբ վերոնշյալ բողոքը մերժվել է: Արամ Հակոբյանի պաշտպանների կողմից այդ դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ մերժվել է: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ մերժել է:

3. Դիմող կողմը վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ բերում է հետևյալ հիմնավորումները.

դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 4, 27 և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով այդ դրույթները հնարավորություն չեն տալիս քրեակատարողական հիմնարկների վարչակազմերին անհապաղ ազատ արձակել այն անձին, ում նկատմամբ դատարանի կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրված գրավը մուծված է ու ներկայացված է այդ մասին ապացույց, որով հնարավորություն են տալիս լրացուցիչ պահանջել անձին ազատ արձակելու վերաբերյալ նախաքննության մարմնի որոշում կամ հանձնարարություն:

Դիմողի գնահատմամբ, մի կողմից՝ վիճարկվող դրույթները, մյուս կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 12-րդ մասն ամրագրում են «իրարամերժ» իրավակարգավորումներ: Այսպես, ըստ դիմողի՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 12-րդ մասը նախատեսում է ընդամենը մեկ նախապայման՝ դատարանի նշանակված գրավը լրիվ մուծված լինելու փաստի հավաստում, որն անմիջապես առաջացնում է կալանավորված անձին անհապաղ ազատ արձակելու քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պարտականությունը, որպես անձի անձնական ազատության իրավունքի սահմանա-

փակման վերացման, այդ իրավունքի վերականգնման առավել արդյունավետ միջոց: Ի տարբերություն նշված իրավադրույթի, մյուս երկուսը՝ ամրագրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, նախատեսում են կալանավորված անձին գրավը մուծված լինելու պայմաններում ազատ արձակելու ավելի բարդացված մեխանիզմ և նախապայմաններ, հատկապես՝ նշվածներից առաջինն անձի ազատ արձակման համար նախատեսում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարական որոշման կայացման, իսկ երկրորդը՝ նույն վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին ազատ արձակելու հանձնարարականի առկայության անհրաժեշտություն»:

Դիմողը գտնում է, որ վերոգրյալ ենթադրյալ իրարամերժ իրավակարգավորումների գոյությունն ստեղծում է իրավական անորոշություն, որի պայմաններում կալանավորված անձի, նրա պաշտպանի, ինչպես նաև սահմանված չափի գրավը մուծած անձի համար որոշակի չէ, թե հատկապես որ պետական մարմնին պետք է ներկայացվի գրավը մուծված լինելու մասին ապացույցը, որպեսզի անհապաղ միջոցներ ձեռնարկվեն անձին ազատ արձակելու ուղղությամբ և հնարավոր լինի առավել արագ վերականգնել անձի սահմանափակված իրավունքը:

Դիմողը կարծում է, որ այդ մասով իրավական անորոշության խնդիր կա նաև քրեակատարողական հիմնարկի վարչակազմի լիազորությունների տեսանկյունից: Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ ենթադրյալ իրավական անորոշությունն անմիջականորեն անդրադարձել է անձնական ազատության իրավունքի իրացման վրա, ինչի արդյունքում ինքն ազատ է արձակվել գրավը մուծված լինելու և այդ մասին քրեակատարողական հիմնարկին ապացույցներ ներկայացնելուց հետո շուրջ 5 ժամ անց միայն:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթներով նախատեսված լրացուցիչ պայմաններն արհեստականորեն բարդացնում են անձի անհապաղ ազատ արձակման գործընթացը՝ հանգեցնելով դրա առավել ժամանակատարությանը: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները խնդրահարույց են նաև իշխանությունների տարանջատման սկզբունքի տեսանկյունից, քանի որ գործադիր իշխանության մարմնի լրացուցիչ գործողություններից, որոշումներից, ինչպես նաև բարեխղճությունից է առկախվում գրավը մուծված լինելու պայմաններում դատարանի՝ գրավ նշանակելու որոշման կատարումը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ:

Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներ սահմանում են խափանման միջոցը գրավով փոխարինվելու դեպքում մեղադրյալին կալանքից ազատելու հիմքերն ու կարգը: Դրանք, ըստ էության, ընթացակարգային նշանակություն ունեցող նորմեր են, որոնք սահմանում են դատարանի կողմից գրավ նշանակվելու դեպքում մեղադրյալին կալանքից ազատելու համար անհրաժեշտ գործողությունների շրջանակը և դրանց հաջորդականությունը՝ ամրագրելով այն փաստական կազմը, որի բոլոր բաղադրիչների առկայությամբ միայն հնարավոր է հասնել նախատեսված իրավական հետևանքի փաստացի առաջացմանը՝ անձին կալանքից ազատելուն: Ըստ պատասխանողի՝ այդ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ մեղադրյալի նկատմամբ սահմանված կալանքը որպես խափանման միջոց գրավով փոխարինելու դեպքում անհրաժեշտ է դատարանի համապատասխան որոշումը, ինչը նախադրյալ է գրավի սահմանված գումարը վճարելու համար, գրավի վճարման ապացույցը վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելը, ինչը նախադրյալ է վերջինիս կողմից համապատասխան որոշման կայացման համար, և այդ որոշումը կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարությանը ներկայացնելը, ինչը նախադրյալ է անձին կալանքից ազատելու համար: Սա նշանակում է, որ վերոնշյալ քայլերից յուրաքանչյուրի իրականացումն անհրաժեշտ, իսկ բոլորը միասին՝ բավարար նախադրյալ են մեղադրյալին կալանքից ազատ արձակելու համար:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթների սահմանադրականությունը պարզելու նպատակով հարկ է դրանք դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ նորմերի հետ համադրված՝ չհամարելով դրանք ինքնավար և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունից դուրս դրույթներ, ինչը հնարավորություն կտա դրանք ընկալել ընդհանուր կարգավորման համատեքստում՝ բացառելով իրավական անորոշության առաջացման հնարավորությունը:

Հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1213 և ՄԴՈ-1176 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ միևնույն ինստիտուտի, այն է՝ անձին գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ՝ վիճարկվող դրույթների կարգավորման շրջանակների տարաբնույթ լինելը, կամ, այլ կերպ ասած, նույն ընթացակարգի առանձին հատվածներն առանձին դրույթներում ամրագրելը, չի կարող գնահատվել որպես իրավական որոշակիության սկզբունքից շեղում այն պարզ պատճառով, որ դրանց վերջնական նպատակն իրավական հետևանքի առաջացումն է, այն է՝ անձին կալանքից ազատ արձակելը: Հետևաբար, հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթները ոչ միայն

միմյանց հետ համակարգային առումով փոխկապված են, այլև հստակության ու միատեսակ ընկալման իմաստով տարակարծությունների տեղիք չեն տալիս, պատասխանողը գտնում է, որ դրանք չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը:

Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի նկատմամբ դատական բոլոր ատյանների կողմից կայացված ակտերի հիմքում դրվել են ոչ թե վիճարկվող նորմերը, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք այլ հոդվածներ, հետևաբար, այս պարագայում առկա է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարցը Սահմանադրական դատարան բողոքարկելու իրավիճակ, որը, ըստ պատասխանողի, գործի վարույթը կարճելու հիմք է հանդիսանում:

5. Սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նախ պարզել վեճի առարկա իրավակարգավորումներում՝

- անձնական ազատության իրավունքի արդյունավետ իրացման, պաշտպանության և այդ իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչների պահպանվածությունը, ելնելով նաև՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից,

- կալանքը գրավով փոխարինելու քրեադատավարական գործընթացի շրջանակներում անձնական ազատության իրավունքի իրացման առանձնահատկությունները,

- իրավական որոշակիության, օրինականության սահմանադրական սկզբունքների իրացման ապահովումը, որպես, նախ՝ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իրենց լիազորություններին համապատասխան գործելու, ինչպես նաև անձանց իրենց գործողությունները նորմատիվ կանոններին համապատասխանեցնելու և այդ գործողությունների հետևանքները կանխատեսելու երաշխիք ու նախապայման,

- կալանքը գրավով փոխարինելու իրավական գործընթացների վերաբերյալ միջազգային պրակտիկայում հաստատագրված մոտեցումներն ու սույն գործի քննության շրջանակներում վեճի առարկա իրավակարգավորումների հետ դրանց համադրելիությունը:

Սահմանադրական դատարանն առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով դիմող կողմի հարցադրումները, սույն գործով քննության առարկա վեճի շրջանակներում, ի թիվս այլնի, անհրաժեշտաբար կարևորել է նաև պարզել Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը, ինչ-

պես նաև հանրային իշխանության մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները: Հետևաբար, ելնելով վեճի առարկա իրավակարգավորման համակարգային բնույթից, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթներով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի քննության շրջանակներում դիմող կողմի հարցադրումների սահմանադրական իրավավերլուծությունն իրականացնել ինչպես գրավի ինստիտուտը, կալանքը գրավով փոխարինելը կարգավորող, այնպես էլ՝ վերջիններիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի համադրված վերլուծության արդյունքում:

6. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը վեճի առարկա իրավակարգավորումների շրջանակներում հիմնականում բարձրացնում է **անձի ազատության իրավունքի առավել արդյունավետ իրացման** (ոչ իրավաչափ հնարավոր այլ սահմանափակումներից պաշտպանելու) **երաշխավորման** հիմնախնդիր՝ պայմանավորված կալանքը գրավով փոխարինելու իրավական գործընթացների պարզեցման, այդ գործընթացները կարգավորող իրավական նորմերը մատչելի ու միակերպ ընկալելի սահմանելու, ինչպես նաև քրեական գործով (մինչդատական և դատական) վարույթ իրականացնող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց Սահմանադրությունից բխող օրենքով նախատեսված լիազորությունների հստակեցման անհրաժեշտությամբ:

7. Անձնական ազատությունը հիմնական սուբյեկտիվ իրավունք է, որից զրկելու դեպքերը նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, իսկ կարգը օրենքով (ՀՀ Սահմ. 27-րդ հոդված): Միաժամանակ, օրենքով են կարգավորվում անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հետ կապված հարաբերությունները (ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի 5-րդ մաս):

Անձնական ազատության իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածներով, որոնցում նույնպես սպառնիչ կերպով սահմանված են անձին ազատությունից զրկելու դեպքերը և կանխորոշված են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակները, ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջներին:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-827, ՄԴՈ-913, ՄԴՈ-1059, ՄԴՈ-1295) արտահայտած իրավական դիրքորոշումներով բացահայտել է անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, հատկանշել է այդ իրավունքի հնարավոր սահմանափակման, ինչպես նաև պաշտպանության սահման

նադրաիրավական չափանիշները: Սույն գործով քննության առարկայի շրջանակներում Սահմանադրական դատարանը վերահաստատելով իր դիրքորոշումները՝ կարևորում է, մասնավորապես, որ.

- «...սահմանադիրը ... անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել» (ՄԴՈ-827), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27 և 75-րդ հոդվածների պահանջներին,

- հետապնդելով անձին կամայականորեն ազատությունից զրկելը բացառելու նպատակ՝ Սահմանադրությունն ամրագրում է այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանելու ազատությունից անօրինական զրկվելուց (նույն տեղում), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին,

- «...քրեական գործի մինչդատական վարույթի փուլում վերահսկողական իր գործառույթն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու ... Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման» (նույն տեղում), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

- «...եթե որևէ իրավական ինստիտուտի կիրառում անհրաժեշտաբար և անխուսափելիորեն ենթադրում է այս կամ այն իրավունքի իրավաչափ սահմանափակում, ապա նման ինստիտուտի կիրառումը չի կարող ենթադրել նաև տվյալ իրավունքի խախտում» (նույն տեղում), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջներին:

Այսպիսով, ինչպես անձնական ազատության իրավունքի իրացման, այնպես էլ այդ իրավունքի հնարավոր սահմանափակման պայմանները, որպես իրավական սկզբունքներ, ամրագրված են Սահմանադրությամբ, իսկ դրանց իրագործման կարգը՝ օրենքով: Մասնավորապես, եթե առկա չեն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում նախանշված հիմքերը, ապա անձն ազատ է «...անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին», ինչպես նաև «...չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով» (ՀՀ Սահմ. 39-րդ հոդված): Նման իրավական վիճակում հանրային իշխանության պարտականությունն է հարգել ու պաշտպանել այդ ազատությունը՝ ելնելով հիմնական իրավունքի անմիջակաևորեն գործելու հանգամանքից (ՀՀ Սահմ. 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մա-

սեր): Միաժամանակ, անձնական ազատության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված հիշյալ սկզբունքների իրավական ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե վերացել են անձնական ազատության իրավունքից զրկելու կամ սահմանափակելու սահմանադրական և դրանց հիման վրա օրենքով նախատեսված հիմքերը, ապա անձնական ազատության սահմանափակումն այլևս անիրավաչափ է, և այդ իրավունքը ենթակա է վերականգնման (պաշտպանության) հանրային իշխանության իրավասու մարմինների կողմից՝ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված կարգով ու իրավական պաշտպանության համապատասխան միջոցներով: ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից է նաև բխում հանրային իշխանության իրավասու այս կամ այն մարմնի իրավունքն ու պարտականությունը՝ սահմանափակելու հանրորեն վտանգավոր արարքի կատարման մեջ մեղադրվող անձի ազատության իրավունքը, եթե առկա են իրավական բավարար հիմքեր:

Վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է **«ազատությունից զրկում»** և **«ազատության սահմանափակում»** եզրույթների տարբերակումը՝ կապված կալանքը գրավով փոխարինելու արդյունքում առաջացած իրավական հետևանքների բնույթի վերաբերյալ դիմումում բարձրացված հարցադրումների հետ: Սահմանադրական դատարանը ելնում է այն մեկնակետից, որ անձնական ազատության իրավունքից **զրկված** անձը գտնվում է իրավական այնպիսի կարգավիճակում, երբ օրենքի ուժով անկարող է իրացնել սահմանադրական իր մի շարք հիմնական իրավունքներն ու ազատությունները, և առավել ընդարձակ են վերջիններս իրացնելու իրավական հնարավորությունները՝ անձնական ազատության իրավունքի **սահմանափակման** դեպքերում: Ելնելով քրեական վարույթի առանձնահատկություններից, օրենքով առաջադրված կոնկրետ խնդիրներից՝ Օրենսգիրքը նախատեսել է իրավականիսի մի շարք միջոցներ, որոնք կոչված են անհրաժեշտ պայմաններ ապահովելու վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) գործունեության՝ օրենքով նախանշված նպատակների իրագործման համար: Նման իրավականիսի միջոց է **գրավի ինստիտուտը**, որը, միաժամանակ, քրեադատավարական գործընթացներում անձնական ազատության իրավունքի՝ օրենքով նախատեսված հիմքով, **զրկումը վերացնելու**, կալանավորման (ազատությունից զրկելու) **այլընտրանքային** իրավական միջոց է, երբ առկա են այդպիսի «զրկումը» վերացնելու բարենպաստ իրավապայմաններ:

Գրավը քրեական վարույթում, նախ և առաջ, խափանման (դատավարական հարկադրանքի) միջոց է, որի կիրառմամբ մեղադրյալին ազատու-

թյան իրավունքից զրկումը փոխարինվում է այդ իրավունքի սահմանափակմամբ, որը «... ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:» (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մաս), այսինքն՝ պայմանավորված է անձի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու և քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների կողմից Օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Այսպիսով, «քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն» ինքնին ենթադրում է, որ քրեական վարույթի արդյունավետ իրականացման նպատակով անձը պարտավոր է գրավի, որպես խափանման միջոցի, կիրառման ողջ ժամանակահատվածում անվերապահ կատարել վարույթն իրականացնող մարմնի օրինական պահանջները (չթաքնվել վարույթ իրականացնող մարմնից, առանց թույլտվության չմեկնել այլ տեղանք (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն): Եվ եթե մեղադրյալը խախտել է քրեական վարույթն իրականացնող մարմնի «տրամադրության տակ գտնվելու» օրենքով նախատեսված իր պարտականությունը, ապա գրավի առարկա հանդիսացող գույքը կարող է օտարվել հօգուտ պետության (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս), կամ գրավը որպես խափանման միջոց կարող է փոխարինվել խափանման մեկ այլ միջոցով՝ կալանքով (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մաս): Այսինքն՝ անձը, որի անձնական ազատության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի սահմանադրաիրավական իմաստով) մինչ այդ սահմանափակված էր, կարող է զրկվել անձնական ազատության իրավունքից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական վարույթում խափանման միջոցների վերոհիշյալ իրավահաջորդությամբ (կալանք-գրավ-կալանք) խստացման (կամ մեղմացման) վերաբերյալ իրավակարգավորումը՝ պայմանավորված հասարակական վտանգավորություն (նվազ կամ առավել վտանգավոր) ներկայացնող արարքների արդյունավետ քննություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև մեղադրյալի սուբյեկտիվ բնութագրով, վարույթի ընթացքում նրա դրսևորած վարքագծով և այլ հանգամանքներով (Օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մաս), բխում է սահմանադրաիրավական սկզբունքներից ու նպատակներից (ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված, 40-րդ հոդվածի 4-րդ մաս, 78-րդ և 79-րդ հոդվածներ) և համարժեք է սահմանափակվող (զրկվող) հիմնական իրավունքի (ազատության) նշանակությանը:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ անձը, որի նկատմամբ քրեական վարույթի շրջանակներում օրինական հիմքով կիրառվել է խափանման (հարկադրանքի) որևէ միջոց (Օրենսգրքի 134-րդ հոդված), չի կարող և իրավասու չէ տվյալ միջոցի կիրառման ողջ ժամանակահատվածում իրացնել կամ լիարժեք իրացնել իր անձնական ազատության իրավունքը: Խափանման միջոցի, այդ թվում և՛ գրավի, կիրառման իրավական նպատակը հենց օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելն է: Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված է կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ (այսինքն՝ նաև գրավի) կիրառման հիմքը, համաձայն որի՝ մեղադրյալի նկատմամբ այն կարող է կիրառվել միայն այնպիսի դեպքերում, երբ «...բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները», այսինքն՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, չխոչընդոտել գործի քննությանը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ և այլն:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական վարույթում մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը կամ կալանքի փոխարինումը գրավով չի ենթադրում այդ անձի անձնական ազատության իրավունքի բացարձակ վերականգնում կամ չի կարող մեկնաբանվել որպես **այդ իրավունքի խախտում** (ՄԴՈ-827, 9-րդ կետ), այլ՝ այդ ազատության իրականացման երաշխավորում այնքանով, որքանով անհրաժեշտ է մեղադրյալի կողմից՝ Օրենսգրքի նորմերից բխող իր դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու համար: Հետևաբար, **վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում գրավի ինստիտուտը և դրա կիրառմամբ պայմանավորված իրավական հետևանքները բացարձակ (լիարժեք) իմաստով համադրելի չեն անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության հետ և չեն կարող քրեական վարույթում այդ իրավունքի ազատ իրացման երաշխիք հանդիսանալ**: Հետևաբար, դիմող կողմի փաստարկները՝ կապված «...գրավը լրիվ մուծված լինելու» հանգամանքով պայմանավորված՝ «անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակումը վերացնելու» հետ, Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում:

8. Անդրադառնալով հանրային իշխանության իրավասու մարմինների (պաշտոնատար անձանց) գործողությունների և դրանք կարգավորող նորմերի իրավական որոշակիության և դրանով պայմանավորված՝ անձի անձնական ազատության իրավունքի հնարավոր խախտման վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին՝ Սահմանադրական դատարանը կալանքը

գրավով փոխարինելու նորմատիվ կարգավորումների շրջանակներում անհրաժեշտ է համարում պարզել.

- կալանքը գրավով փոխարինելու և գրավը որպես դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու նորմատիվ կարգավորման բովանդակությունը,

- իրավասու մարմինների (պաշտոնատար անձանց) լիազորությունների բնույթն ու բովանդակությունը, դրանց համադրելիությունը Սահմանադրության 3-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքներին,

- գրավի՝ որպես քրեադատավարական հարկադրանքի միջոցի, կիրառմամբ պայմանավորված իրավական հետևանքների համարժեքությունը Սահմանադրությամբ ու օրենքով հետապնդվող նպատակներին:

Գրավի կիրառման հետ կապված հարաբերությունները կարգավորող՝ Օրենսգրքի «Խափանման միջոցները» վերտառությամբ 18-րդ գլխում ամփոփված նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

- գրավը՝ որպես կալանքին այլընտրանքային միջոց, կիրառվում է **միայն դատարանի որոշմամբ** (Օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը դատավարական երաշխիք է մեղադրյալի իրավունքների արդյունավետ իրացման ու պաշտպանության համար: Դատարանի հիշյալ որոշումը կարող է կայացվել կալանավորման մասին, կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու, կամ քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու հարցը որոշելիս (օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս, 139-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր),

- դատարանում գրավի կիրառման **միջնորդությամբ** կարող են հանդես գալ՝ **քննիչը, դատախազը, պաշտպանական կողմը**, ինչպես նաև այդպիսի նախաձեռնություն կարող է դրսևորել **դատարանը** (Օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսպիսով, գրավի նշանակման ու կիրառման որոշում կայացնելու բացառիկ իրավունքը, ըստ Օրենսգրքի վերոհիշյալ իրավակարգավորումների, պատկանում է **դատարանին**, որը բխում է քրեական գործով մինչդատական վարույթում այդ մարմնի իրավական կարգավիճակի առանձնահատկություններից (Օրենսգրքի 41-րդ հոդված), իսկ դատարանում գրավի՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի նշանակման ու կիրառման նախաձեռնությամբ (միջնորդությամբ) կարող են հանդես գալ՝ **դատարանը, քննիչը, դատախազը** (քրեական գործով վարույթ իրականացնող մարմիններ), ինչպես նաև պաշտպանական կողմը, որպիսի իրավակարգավորումը նույնպես բխում է այդ մարմինների և պաշտպանական կողմի դատավարական կարգավիճակից (Օրենսգրքի 53, 54, 55 և 65-րդ հոդվածներ):

Օրենսգրքի վերոհիշյալ 18-րդ գլխում ամփոփված նորմերով կարգավորվում են նաև գրավի նշանակման և կիրառման (և կալանքից ազատելու) վերաբերյալ դատարանի կայացրած որոշման **կատարման** հետ կապված հարաբերություններ: Ընդ որում, խափանման այդ միջոցի կիրառման և դրանով պայմանավորված՝ մեղադրյալին կալանքից ազատելու, այսինքն՝ **ազատության նրա իրավունքի զրկումը վերացնելու և այն սահմանափակմամբ փոխարինելու** պարտադիր իրավական նախապայմանը նախատեսված կարգով գրավի գումարը մուծելն է (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մաս) ու քրեական վարույթ իրականացնող մարմնին (քննիչին, դատախազին) համապատասխան ապացույց ներկայացնելը (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մաս): Ընդ որում, նման ապացույցի ներկայացմանը հաջորդում է **քրեական վարույթ իրականացնող համապատասխան մարմնի (քննիչի կամ դատախազի), ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի որոշումը** մեղադրյալին կալանքից ազատելու վերաբերյալ (Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 142-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր): Ինչ վերաբերում է Օրենսգրքի 146-րդ հոդվածի 5-րդ մասի այն իրավապահանջին, համաձայն որի՝ «...Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին անմիջապես **հանձնարարում է** մեղադրյալին ազատել կալանքից», ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն **չի կարող դատավարական լրացուցիչ նախապայման հանդիսանալ** քրեական վարույթ իրականացնող որևէ մարմնի վերոհիշյալ որոշումից բխող՝ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի պարտադիր գործողության համար այն դեպքում, երբ վերջինս պատշաճ իրազեկվել է մեղադրյալին կալանքից ազատելու որոշման մասին: Մասնավորապես, Օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «...կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացնելու կամ փոխելու մասին **քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճենը ստանալիս** մեղադրյալին անմիջապես ազատում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը»:

- Մյսայիտով, Օրենսգրքի վերոհիշյալ կարգավորումների համաձայն.
- **դատարանը** լուծում է մեղադրյալի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու, այն նշանակելու (չափը և գրավադրման ձևը որոշելու) հարցը կայացնելով համապատասխան որոշում,
- դատարանի հիշյալ որոշումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող համապատասխան այն մարմնի՝ **քննիչի, դատախազի, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի** կողմից իրենց որոշումներով, որոնց ներկայացվել է գրավի մուծման վերաբերյալ համապատասխան ապացույց: Այսինքն՝ օրենսդիրը հստակ տարանջատել է կալանքը գրավով փոխարինելու գործընթացներում, մի

կողմից՝ դատարանի, մյուս կողմից՝ քրեական վարույթ իրականացնող մարմինների (պաշտոնատար անձանց), ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի գործառնությունները,

- այն դեպքերում, երբ գրավի մուծման վերաբերյալ ապացույցը ներկայացվել է քրեական վարույթ իրականացնող քննիչին կամ դատախազին, ապա վերջիններիս որոշմամբ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը պարտավոր է առանց լրացուցիչ որոշում կայացնելու անհապաղ ազատ արձակել մեղադրյալին (Օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մաս):

Բոլոր դեպքերում, Օրենսգրքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «...մինչդատական վարույթում խափանման միջոց կիրառելու կամ այն մերժելու ... մասին դատարանի որոշումը **կարող է բողոքարկվել** վերաքննիչ դատարան», ինչը երաշխիք է կալանքը գրավով փոխարինելու գործընթացներում մեղադրյալի իրավունքների (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածով նախատեսված) պաշտպանության համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա նորմատիվ կարգավորումներում ամրագրված **վերոհիշյալ իրավապայմաններն** իրավական որոշակիությամբ սահմանել են կալանքից ազատելու և այն գրավով փոխարինելու դատավարական գործընթացներում իրավասու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները, որոնցից նաև միանշանակ կարող է բխել պաշտպանական կողմի դատավարական այս կամ այն գործողությունը՝ կապված գրավի մուծման վերաբերյալ ապացույցի ներկայացման, միջնորդությունների հարուցման, այդ մարմինների ու պաշտոնատար անձանց գործողության կամ անգործության բողոքարկման հետ, և այլն: Հետևաբար, անհիմն է նաև սույն գործով դիմող կողմի պնդումն այն մասին, թե վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսվում է վարույթ իրականացնող մարմնի կողմից գրավի նշանակման վերաբերյալ դատարանի կայացրած որոշման «ըստ էության հաստատում»: Նաև հստակ է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի երաշխավորումը՝ կապված, մի կողմից՝ դատարանի, մյուս կողմից՝ քրեական վարույթ իրականացնող մյուս մարմինների (քննչական մարմինների, դատախազի) սահմանադրաիրավական իրենց կարգավիճակից բխող, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի՝ Օրենսգրքից բխող կոնկրետ լիազորությունների կատարման հետ: Հետևաբար, այդ իրավակարգավորումների շրջանակներում Օրենսգրքի նորմերի՝ իրենց իրավական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան կիրառվելու պայմաններում սահմանադրականության խնդիր առաջանալ չի կարող, ինչը փաստում է նաև սույն գործի փաստական հանգամանքների, դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրումը:

Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ կալանքը գրավով փոխարինելու եվրոպական պետությունների օրենսդրական փորձի ուսումնասիրումը նույնպես վկայում է, որ քրեական վարույթի շրջանակներում գրավի ինստիտուտն ունի կիրառման հստակ չափանիշներ, մասնավորապես գրավի կիրառման մասին որոշումը կայացնում է դատարանը, մեղադրյալը կալանքից անհապաղ ազատ է արձակվում գրավի մուծման վերաբերյալ ապացույցների առկայության պայմաններում (օրինակ՝ Հունգարիա, Խորվաթիա, Լատվիա և այլն), ինչը վկայում է ոչ միայն մինչդատական վարույթի նկատմամբ դատական հսկողության արդյունավետության, այլև դատավարության այդ փուլում անձանց իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մասին:

9. Միաժամանակ, կալանքից ազատելու և գրավի նշանակման մասին դատարանի որոշման կատարման, դրա վերանայման հետ կապված հարաբերությունները կարգավորող և վեճի առարկա նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի այլ նորմերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ, ելնելով դատավարական անհրաժեշտությունից, օրենսդիրը քրեական վարույթ իրականացնող մարմիններին (պաշտոնատար անձանց) լիազորել է իրենց որոշումներով փոխել խափանման միջոցը, այսինքն՝ նաև վերացնել գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը, մասնավորապես Օրենսգրքի «Խափանման միջոցը փոփոխելը և վերացնելը» վերտառությամբ 151-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն:

«1. Անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել:

...

3. Կալանավորման և գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը կարող է փոփոխվել և վերացվել դատարանի կողմից, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ նաև **դատախազի կողմից:**

Գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը քրեական գործով մինչդատական վարույթում կարող է փոփոխվել և վերացվել **նաև քննիչի կողմից՝ դատախազի համաձայնությամբ:**

4. Կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացնող կամ փոփոխող մարմինը այդ մասին նույն օրը տեղեկացնում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին և նրան է ուղարկում իր համապատասխան որոշման պատճենը»:

Այսպիսով, եթե սույն գործով վեճի առարկա նորմերում հաստատագրված իրավակարգավորման սկզբունքներն են՝ որոշակիությունը, իրավահարաբերության սուբյեկտների իրավական կարգավիճակից բխող կոնկրետ լիազորությունների (գործառնությունների) սահմանումն ու դրանց իրացման երաշխավորումը, կալանքը գրավով փոխարինելու դատավարական

րական գործընթացների հստակ փուլայնությունը, ապա Օրենսգրքի վերոհիշյալ նորմերում այդ սկզբունքները հստակ պահպանված չեն:

Քրեական վարույթ իրականացնող մարմինները քննիչը, դատախազն ըստ էության լիազորված են **«անհրաժեշտությունից» ելնելով** քրեական գործով մինչդատական վարույթում փոփոխել կամ վերացնել գրավի ձևով **դատարանի որոշմամբ ընտրված** խափանման միջոցը (Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մաս), որն ըստ էության հանգեցնում է դատական ակտի վերանայմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը պարտավոր է ապահովել Օրենսգրքի 151-րդ հոդվածի վերոհիշյալ իրավակարգավորումների համարժեքությունը ՀՀ Սահմանադրության 4, 6, 78 և 79-րդ հոդվածների պահանջներին՝ հաշվի առնելով նաև սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի՝ մեղադրյալին կալանքից ազատելու մասին որոշման առկայության պայմաններում հանձնարարականը **չի կարող կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի համար դատավարական հավելյալ նախապայման հանդիսանալ** մեղադրյալին կալանքից **ազատելու հարցում**:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1387



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 թվականի մայիսի 26-ին ԿԱԶԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՍԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՄԻԴԻԱՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ ԿԱՍԱՎՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՄԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հ. Ազիզյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի մայիսի 26-ին Կազանում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի մայիսի 26-ին՝ Կազանում:

Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից և 26 հոդվածներից:

2. Համաձայնագրով կարգավորվում են անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջև անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված փոխգործակցության հարցերը, սահմանվում է անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրումը Հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու, ինչպես նաև անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված Հանձնաժողովի կողմից քննություն անցկացվելու կարգը (հոդվ. 1):

3. Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգի և քննության անցկացման հետ կապված

գործառույթներն իրականացվում են Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման պատասխանատու ղեկավարտամենտի կողմից:

4. Ըստ Համաձայնագրի 4-րդ հոդվածի՝ հատուկ սուբսիդիաների համաձայնեցումը կատարվում է կամավոր հիմունքներով՝ անդամ պետության կողմից Հանձնաժողովին դիմում ուղարկելու միջոցով:

Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում կիրառել արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգ, որը ներառում է.

ա) Հանձնաժողովի կողմից հատուկ սուբսիդիաների համաձայնեցման մասին անդամ պետությունների դիմումների ուսումնասիրություն (հոդվ. 5),

բ) պատասխանատու ղեկավարտամենտի կողմից հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգի մերժում (հոդվ. 6), կամ հատուկ սուբսիդիայի վերլուծության կատարում (հոդվ. 7),

գ) պատասխանատու ղեկավարտամենտի կողմից խորհրդակցությունների անցկացում (հոդվ. 8),

դ) հատուկ սուբսիդիաների համաձայնեցման արդյունքներով Հանձնաժողովի կողմից հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշման ընդունում (հոդվ. 9),

ե) Համաձայնագրի 10 և 11-րդ հոդվածներով նախատեսված չափանիշներին հատուկ սուբսիդիայի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ համաձայնեցման արդյունքներով եզրակացության նախապատրաստում:

5. Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները փոխհատուցման միջոցներ չեն կիրառում այն սուբսիդիաների նկատմամբ, որոնց տրամադրման ժամկետները, ծավալներն ու պայմանները համաձայնեցվել են Հանձնաժողովի կողմից (հոդվ. 4, կետ 3):

6. Համաձայնագրով սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը որոշվում է փաստացի սուբսիդավորվող ապրանքի ծավալի և դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գնի ու ազգային տնտեսության ճյուղի վրա այդ ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա (հոդվ. 20):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝

- փոխհատուցման միջոցներ չկիրառել այն սուբսիդիաների նկատմամբ, որոնց տրամադրման ժամկետները, ծավալներն ու պայմանները համաձայնեցվել են Հանձնաժողովի կողմից (հոդվ. 4, կետ 3),

- ապահովել, որ համաձայնեցման մասին դիմում ուղարկված՝ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը պատասխանատու դեպարտամենտի հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում նրան ներկայացնի բացակայող փաստաթղթերը և/կամ տեղեկությունները (հոդվ. 5, կետ 6),

- ապահովել, որպեսզի սուբսիդիաների տրամադրման առնչությամբ Պայմանագրի դրույթներին համապատասխանության մասով ՀՀ օրենսդրության մոնիտորինգն ու համեմատական-իրավական վերլուծության անցկացումը կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը, ամեն տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ից ոչ ուշ, Հանձնաժողով ներկայացնի Հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ տրամադրված հատուկ սուբսիդիաների մասին ծանուցում, եռամսյա պարբերականությամբ՝ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 30-ից ոչ ուշ, Հանձնաժողով և պայմանավորվող Կողմերին ուղարկեն հաշվետու եռամսյակում ընդունված այն նորմատիվ իրավական ակտերը, որոնցով նախատեսվում է հատուկ սուբսիդիաների տրամադրումը, ինչպես նաև միջգերատեսչական համաձայնեցում իրականացնելուց հետո պարտադիր տեղեկացման կարգով Հանձնաժողով և պայմանավորվող Կողմերին ուղարկի այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնցով նախատեսվում է հատուկ սուբսիդիաների տրամադրումը՝ Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնական ուղղություններին համապատասխան զգայուն ապրանքների շարքին դասվող ապրանքներ արտադրողներին (հոդվ. 12, կետ 2, մաս 1),

- ապահովել, որ բաց աղբյուրներում հրապարակված նորմատիվ իրավական ակտերի մասով Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը Հանձնաժողով ուղարկի այդ ակտերի վավերապայմաններն ու հրապարակման աղբյուրները պարունակող տեղեկություն, ինչպես նաև հատուկ սուբսիդիաների տրամադրում նախատեսող, բաց աղբյուրներում չհրապարակված նորմատիվ իրավական ակտերը (հոդվ. 12, կետ 2, մաս 2),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը պատասխանատու դեպարտամենտի ծանուցումն ստանալու օրվանից 15 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում նրան ներկայացնի բացակայող նյութերն ու տեղեկությունները (հոդվ. 14, կետ 8),

- ապահովել, որ Հանձնաժողովի հարցման հիման վրա հարցերի ցանկը Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից ուղարկվի սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողներին (հոդվ. 18, կետ 1),

- որպես դիմումատու պետություն կամ որպես սուբսիդավորող անդամ պետություն հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից պատասխանները ներկայացվեն Հանձնաժողովի հարցերի ցանկն ստանալու օրվանից 45 օրացուցային օրը չզերազանցող ժամկետում, իսկ սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողների պատասխանները Հանձնաժողով ներկայացվեն հարցերի ցանկն ստանալու օրվանից 60 օրացուցային օրը չզերազանցող ժամկետում: Հարցերի ցանկի առանձին կետերի վերաբերյալ տեղեկություն ներկայացվելու անհնարինության դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինը Հանձնաժողով ուղարկի համապատասխան հիմնավորում (հոդվ. 18, կետ 2),

- ապահովել, որ տեղեկությունը Հանձնաժողով ներկայացվի ռուսերենով, իսկ հայերեն կազմված փաստաթղթերը զուգակցվեն ռուսերեն թարգմանությամբ (հոդվ. 18, կետ 4),

- որպես շահագրգիռ կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որպեսզի քննության հետ կապված մեկնաբանությունները և տեղեկությունները Հանձնաժողովին ներկայացվեն Հանձնաժողովի կողմից քննությանը մասնակցելու մտադրության վերաբերյալ դիմումը գրանցվելու օրվանից 30 օրացուցային օրը չզերազանցող ժամկետում: Գաղտնի տեղեկությունը Հանձնաժողով ներկայացնելու պարագայում՝ ապահովել, որպեսզի ներկայացվի նաև այդպիսի տեղեկության ոչ գաղտնի տարբերակը, որը կպարունակի գաղտնի տեղեկության էությունը հասկանալու համար անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ (հոդվ. 19, կետ 1, մասեր 2, 3 և 4),

- համաձայնեցված հատուկ սուբսիդիաների առնչությամբ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից Համաձայնագրի 21-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելու դեպքում որպես սուբսիդավորող անդամ պետություն ապահովել, որպեսզի այդ որոշումն ընդունելու օրվանից ՀՀ լիազորված մարմինն ղաղարեցնի նշված սուբսիդիաների տրամադրումը (հոդվ. 21, կետ 4, մաս 2),

- Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում Հանձնաժողովին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի մասին և ապահովել ՀՀ լիազորված մարմնի մասին Հանձնաժողովին ուղարկվող տեղեկույթի թարմացումը (հոդվ. 23):

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրում հղում է կատարվում 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին և «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրությանը (վերոհիշյալ պայմանագրի 28-րդ հավելված), որոնք ՀՀ կողմից

վավերացվել են 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի վավերացմամբ (ՀՀ կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին, Ազգային ժողովի ԱԺՈ-132-Ն թվակիր որոշմամբ (ՄԴՈ-1175)):

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Մ Ե Ց**.

1. 2017 թվականի մայիսի 26-ին Կազանում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 նոյեմբերի 2017 թվականի
ՄԴՈ -1388



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏՐԱՍԵԿԱ
ՄՈՒԼՏԻՄՈՂԱԼ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը^a կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գ. Գրիգորյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի՝ 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, (Սահմանադրական դատարանի մասին) Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 16-ին ստորագրված՝ ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 26.10.2017թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2009 թվականի հունիսի 16-ին՝ Չոլպոն-Ատայում, տրանսպորտային գործընթացի բոլոր մասնակիցների գործունեությունը համակարգելու, մուլտիմոդալ փոխադրումների զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու և աջակցելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագիրը կիրառել Հիմնական բազմակողմ համաձայնագրի մասնակից պետությունների միջև և այն երկրների տարածքներով տարանցիկ մուլտիմոդալ բեռնափոխադրումների առնչությամբ, որոնք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված փոխադրողի կողմից, ՀՀ տարածքից կամ դեպի ՀՀ տարածք՝ տրանսպորտի բոլոր ձևերի օգտագործմամբ,

- ապահովել, որպեսզի մուլտիմոդալ փոխադրման օպերատորին (այսուհետ՝ ՄՓՕ) հնարավորություն ընձեռվի ինքնուրույն որոշելու ապահովագրման ենթակա առարկան, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, կախված պայմանագրի պայմաններից,

- ապահովել, որպեսզի ՄՓՕ-ի պատասխանատվությունը տարածվի իր կողմից բեռն ստանալու պահից մինչև բեռն ստացողին փոխանցելու պահը,

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվեն Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով և այլն:

3. Համաձայնագիրը պարունակում է վերապահում Ադրբեջանի Հանրապետության կողմից, որով Ադրբեջանի Հանրապետությունը հայտարարում է, որ Համաձայնագրում շարադրված ոչ մի իրավունք, պարտավորություն և դրույթ Ադրբեջանի Հանրապետության կողմից չեն կիրառվի իր տարածքով կատարվող մուլտիմոդալ այն փոխադրումների նկատմամբ, որոնց համար Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է սկզբնական, տարանցիկ կամ վերջնական տարածք, և առարկություն Հայաստանի Հանրապետության կողմից, որով Հայաստանի Հանրապետու-

թյունը խիստ առարկում է «ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին» Համաձայնագրի վերաբերյալ Ադրբեյջանի Հանրապետության կողմից ներկայացված վերապահման դեմ, նշելով, որ այդ վերապահումը հակասում է Հանձնաժողովի հիմնարար փաստաթղթերին և խոչընդոտում է ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում տրանսպորտի ոլորտում բազմակողմ տարածաշրջանային համագործակցության զարգացմանը:

4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որպես Համաձայնագրի կնքման վայր Հայաստանի Հանրապետության կողմից արված առարկության մեջ Չոլպոն-Ատա քաղաքի փոխարեն նշված է Բիշկեկ քաղաքը, ինչը, ըստ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից ներկայացված բացատրության՝ տեխնիկական վրիպակ է, և նախատեսվում է հայտ ներկայացնել ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարություն՝ համապատասխան ուղղումներ կատարելու նպատակով:

5. 2009 թվականի հունիսի 16-ին ստորագրված՝ ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 16-ին ստորագրված՝ ՏՐԱՍԵԿԱ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 նոյեմբերի 2017 թվականի
ՄԴՈ -1389



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1968 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գ. Գրիգորյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1968 թվականի նոյեմբերի 8-ին Վիեննայում ստորագրված՝ Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 26.10.2017թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 1968 թվականի նոյեմբերի 8-ին Վիեննայում՝ միջազգային ճանապարհային երթևեկության դիտարկման և ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով:

2. Կոնվենցիան սահմանում է ճանապարհային նշանների, ազդանշանների և պատկերանշանների, ինչպես նաև ճանապարհային գծանշումների միջազգային միասնական կարգ:

Կոնվենցիան ունի անբաժանելի մաս կազմող 9 հավելված՝ Հավելված 1. «Նախագուշացնող նշաններ՝ բացառությամբ խաչմերուկների կամ երկաթուղային գծանցների մոտ տեղադրվող նշանների», Հավելված 2. «Խաչմերուկների անցման առավելությունը կարգավորող նշաններ, խաչմերուկների մոտ տեղադրվող նախա գուշացնող նշաններ և ճանապարհի նեղ հատվածներում անցման առավելությունը կարգավորող նշաններ», Հավելված 3. «Երկաթուղային գծանցների վերաբերող նշաններ», Հավելված 4. «Կարգավորող նշաններ՝ բացառությամբ անցման առավելության, կանգառի ու կայանման նշանների», Հավելված 5. «Տեղեկատվության նշաններ՝ բացառությամբ կայանման նշանների», Հավելված 6. «Կանգառի և կայանման նշաններ», Հավելված 7. «Լրացուցիչ ցուցանակներ», Հավելված 8. «Ճանապարհային գծանշումներ», Հավելված 9. «1-7-րդ հավելվածներում նշված նշանների, պատկերանշանների և ցուցանակների գունային վերարտադրությունը»:

3. Հայաստանի Հանրապետությունը կատարել է առարկություն Ադրբեջանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի վերաբերյալ կատարված հայտարարության կապակցությամբ:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ընդունել Կոնվենցիայում նկարագրված ճանապարհային նշանների, ազդանշանների և պատկերանշանների, ինչպես նաև ճանապարհային գծանշումների համակարգը և ներդնել այն հնարավորինս կարճ ժամկետներում,

• ՀՀ տարածքում Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան չորս տարի հետո փոխարինել կամ լրացնել ցանկացած նշան, պատկերանշան, սարք կամ գծանշում, որը, Կոնվենցիայով սահմանված համակարգին պատկանող նշանի, պատկերանշանի, սարքի կամ գծանշման հատկանիշներ ունենալով հանդերձ, կիրառվում է ոչ այն իմաստով, որը նախատեսված է Կոնվենցիայով,

• ՀՀ տարածքում Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից տասնհինգ տարվա ընթացքում փոխարինել ցանկացած նշան, պատկերանշան, սարք կամ գծանշում, որը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված համակարգին,

• միջոցներ ձեռնարկել՝ արգելելու համար, որպեսզի նշանի, դրա հենապան կամ ճանապարհային երթևեկությունը կարգավորող որևէ այլ հարմարանքի վրա տեղադրվի այդ նշանի կամ հարմարանքի օգտագործման նշանակության հետ առնչություն չունեցող որևէ բան. այնուամենայնիվ, եթե Հայաստանի Հանրապետությունը կամ ՀՀ տարածքային ենթակառուցվածքները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող որևէ միավորման իրավասություն են տալիս տեղակայելու տեղեկատվության նշաններ, ապա թույլատրել այդ միավորումներին այդ նշանի կամ դրա հենասյան վրա դնել իրենց խորհրդանիշը՝ պայմանով, որ այն չի դժվարացնի նշանի ընկալումը,

• միջոցներ ձեռնարկել՝ արգելելու համար, որպեսզի տեղակայվի որևէ ցուցատախտակ, ազդագիր, գծանշում կատարվի կամ հարմարանք տեղադրվի, որը հնարավոր է շփոթել նշանների կամ ճանապարհային երթևեկությունը կարգավորող այլ հարմարանքների հետ, կարող է նվազեցնել դրանց տեսանելիությունը կամ արդյունավետությունը, կամ շեղել ճանապարհային երթևեկության մասնակիցների ուշադրությունը՝ վտանգելով երթևեկությունը,

• եթե Կոնվենցիան հնարավորություն է տալիս ընտրություն կատարել մի քանի նշանների կամ մի քանի պատկերանշանների միջև, ապա ՀՀ ամբողջ տարածքի համար ընդունել այդ նշաններից կամ պատկերանշաններից միայն մեկը՝ փորձելով ձեռք բերել ընտրված տարբերակի վերաբերյալ տարածաշրջանային մակարդակով պայմանավորվածություններ,

• եթե Հայաստանի Հանրապետությունը ցանկանում է Կոնվենցիայի համաձայն ներդնել Կոնվենցիայով չնախատեսված որևէ նշան կամ պատկերանշան, ապա փորձել տարածաշրջանային մակարդակով համաձայնություն ձեռք բերել այդ նոր նշանի կամ պատկերանշանի վերաբերյալ:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություն-

ները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1968 թվականի նոյեմբերի 8-ին Վիեննայում ստորագրված՝ Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 նոյեմբերի 2017 թվականի
ՄԴՈ-1390



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 թվականի Հունիսի 14-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 նոյեմբերի 2017թ.

3(91)2018

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետու-

թյան Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի նոյեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր քաջատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի հունիսի 14-ին՝ Երևանում:

Համաձայնագրով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության քաղաքացիներն արտասահման մեկնելու համար վավեր փաստաթղթերի հիման վրա կարող են մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ կամ գտնվել մյուս կողմի պետության տարածքում անընդմեջ կամ մի քանի այցելությամբ՝ վեց ամսվա ընթացքում 90 օրը չզերազանցող ժամկետով՝ հաշված մուտքի պետության պետական սահմանը հատելու օրվանից:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) Տաջիկստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք ժամանակավորապես գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ազատել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններում 30 օրվա ընթացքում գրանցման (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնելու) պարտավորությունից, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ավելի երկար ժամկետ նախատեսված չէ,

բ) Տաջիկստանի Հանրապետության քաղաքացիներին Համաձայնագրով սահմանված կարգով թույլատրել արտասահման մեկնելու համար վավեր փաստաթղթերով առանց մուտքի արտոնագրի մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ և գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում,

գ) Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման հետ միաժամանակ Տաջիկստանի Հանրապետության հետ փոխանակել արտասահման մեկնելու համար վավեր փաստաթղթերի նմուշները,

դ) դիվանագիտական ուղիներով Տաջիկստանի Հանրապետությանը տեղեկացնել մուտքի, գտնվելու և ելքի պայմանների փոփոխությունների մասին ոչ ուշ, քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ,

ե) Համաձայնագրի գործողությունն ամբողջովին կամ մասամբ կասեցնելու պարագայում, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության անվտանգության, հասարակական կարգի կամ Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պաշտպանության ապահովման համար, անհապաղ ծանուցել Տաջիկստանի Հանրապետությանը ոչ ուշ, քան նման որոշում կայացնելուց 72 ժամ առաջ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են նպաստելու երկու պետությունների քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի փոխադարձ այցելությունների ռեժիմի իրավական կարգավորմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1391



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1» (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2017 թվականի հոկտեմբերի 27-ին ստորագրված «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. ենթածրագիր 1» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորություն-

3(91)2018

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

ների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. ենթածրագիր 1» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել է 2017 թվականի հոկտեմբերի 27-ին:

2. Ասիական զարգացման բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով տրամադրում է քառասուն միլիոն (40,000,000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (Վարկ)՝ Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) իրականացման համար:

Ծրագրի գլխավոր նպատակն է Վարկառուի ֆինանսական շուկաների հնարավորության ավելացումը:

Ծրագիրը բաղկացած է երկու ենթածրագրից: Վարկային համաձայնագիրը վերաբերում է առաջին ենթածրագրին:

Ծրագիրը, մասնավորապես, ներառում է՝

ա) Վարկառուի պետական պարտքի և ֆիսկալ ռիսկի կառավարման հզորացումը,

բ) պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքի ամրապնդումը,

գ) ֆինանսական գործիքների բազայի ընդլայնումը և հաշվապահական ստանդարտների ու աուդիտի պահանջների բարեփոխումների միջոցով կորպորատիվ թափանցիկության բարձրացումը:

Ծրագիրն իրականացնող մարմինը և Ծրագրի ընդհանուր իրականացման պատասխանատուն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է:

Ծրագրի շրջանակներում իրենց համապատասխան բաղադրիչներն իրականացնող մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարի ժամկետ, ինչպես նաև Վարկային համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վարկի արտոնյալ ժամանակահատված:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) տարեկան կտրվածքով վճարել 0.15 տոկոսի չափով պարտավճար,

բ) Վարկի տոկոսագումարը և այլ վճարները կատարել կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին,

գ) կատարել կամ նպաստել, որ կատարվեն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված բոլոր պարտավորությունները,

դ) Բանկին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն բոլոր այն հաշվետվությունները և տեղեկությունները, որոնք Ծրագրի իրականացման համար Բանկի կողմից ողջամտորեն կպահանջվեն,

ե) Վարկի մայր գումարի մարումը և Վարկի մայր գումարի տոկոսները վճարել Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում,

զ) վարկային հաշվից առհանում կատարել Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո,

է) վարկային միջոցների որևէ առհանում չկատարել Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածում նշված չթույլատրվող ծախսերի համար, մասնավորապես, ծախսեր՝

- այնպիսի ապրանքների համար, որոնք ներառված են ՄԱԿ-ի Ստանդարտ միջազգային առևտրի դասակարգման 3-րդ փոփոխության Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածում նշված խմբերում և ենթախմբերում.

- Վարկառուի արժույթով կամ այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են Վարկառուի տարածքից.

- այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են այնպիսի պայմանագրի շրջանակներում, որը ֆինանսավորելու է կամ համաձայնել է ֆինանսավորել որևէ տեղական կամ միջազգային ֆինանսավորող հաստատություն կամ գործակալություն, ներառյալ Բանկից ստացված որևէ վարկի կամ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած պայմանագիր.

- այնպիսի ապրանքների համար, որոնք նախատեսված են ռազմական կամ ռազմական նպատակների համար կամ որպես պերճանքի առարկաներ օգտագործելու համար.

- թմրանյութերի համար.

- շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներկրումն արգելված են

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային այնպիսի համաձայնագրերով, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը.

- որոնք կատարվել են որևէ վճարի հաշվին, որն արգելված է Հայաստանի Հանրապետության կողմից՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի շրջանակներում ընդունված՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման,

ը) տեղեկացնել Բանկին օգնություն տրամադրող բազմակողմ և երկկողմ այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա,

թ) ընդունել, որ Բանկն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ կոռուպցիոն, խարդախ, դավադիր կամ հարկադրանք պարունակող գործելակերպը, և համագործակցել այդպիսի ցանկացած հետաքննության մասով և տրամադրել նման հետաքննության բավարար կատարման համար անհրաժեշտ աջակցություն,

ժ) ապահովել, որպեսզի Ծրագիրն իրականացնող մարմինները կատարեն պարբերական վերանայումներ՝ գնահատելու համար Ծրագրի իրականացման կազմակերպումը, առաջընթացը, ձեռքբերումները և ազդեցությունները և ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պատասխանատու լինի Ծրագրի մշտադիտարկման բոլոր տվյալները վարելու և արդյունքները գնահատելու համար, ինչպես նաև ժամանակին տրամադրել համապատասխան՝ մակրոտնտեսական և ֆինանսական տվյալներ և առնչվող տվյալներ՝ այնպիսի մանրամասնությամբ, որը Բանկի կողմից ողջամտորեն կպահանջվի:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է բյուջետային վարկ և դրա հետ կապված Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2017 թվականի հոկտեմբերի 27-ին ստորագրված «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. ենթածրագիր 1» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 նոյեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1392



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 296-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ. Բաղդասարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

296-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հուլիսի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Որոշում՝ գործը մեղադրողին վերադարձնելու մասին» վերտառությամբ 296-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից:

2. Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշման մեջ, բացի նման որոշում կայացնելու հիմքերից, նշվում է այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի մեղադրական եզրակացությունում առկա թերությունները: Եթե մեղադրյալը գտնվում է կալանքի տակ, նշված ժամկետը չպետք է 3, իսկ մնացած դեպքերում՝ 7 օրվանից ավելի լինի»:

Օրենսգրքի 296-րդ հոդվածը լրացման է ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007 թվականին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 18.12.2007 թվականին ստորագրված և 27.12.2007 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, որով, օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասը «պահանջներին» բառից հետո լրացվել է «, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից» բառերով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

փաստի առթիվ 30.08.2016թ. հարուցվել է թիվ 11811616 քրեական գործը: 30.11.2016թ. քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղար-

կվել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, որը 15.12.2016թ. որոշում է կայացրել գործը մեղադրողին վերադարձնելու մասին: Դատարանը հիշյալ որոշման մեջ պատճառաբանել է, որ, մասնավորապես, «Մեղադրական եզրակացությունը կազմելիս քննիչը բավարարվել է գուտ հիշյալ ապացույցների թվարկմամբ ու չի բացահայտել դրանց բովանդակությունը», «Մեղադրական եզրակացությունից պարզ չէ, թե փորձաքննության արդյունքում ստացված որ տվյալներն են հաստատում մեղադրյալների մեղավորությունը նրանց մեղսագրվող հանցանքներում», «... բացակայում է առգրավված տեսաձայնագրությունների զննության արդյունքում հայտնաբերված այն տվյալների բովանդակությունը, որոնք կարող են հիմնավորել մեղադրյալների մեղավորությունը»:

20.12.2016թ. Շենգավիթ վարչական շրջանի դատախազություն է ստացվել գործը մեղադրողին վերադարձնելու մասին Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 15.12.2016թ. որոշումը:

22.12.2016թ. մեղադրական եզրակացությանը կից հավելված տեղեկանքը վերակազմվել է, այն է՝ քննիչի կողմից կազմվել է նոր տեղեկանք, և քրեական գործը տեղեկանքի հետ մեկտեղ, ուղարկվել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2016թ. որոշմամբ գործը վերադարձվել է մեղադրողին՝ պատճառաբանելով, որ 15.12.2016թ. որոշմամբ դատախազի համար սահմանվել է թույլ տրված խախտումները վերացնելու պարտականություն և դատարանի չվերացված որոշման պայմաններում մեղադրողը հրաժարվել է կատարել դրանով սահմանված իր պարտականությունը:

09.01.2017թ. քրեական գործը՝ համապատասխան գրությամբ, վերադարձվել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նշումով, որ դատարանի որոշման՝ կատարման ենթակա բոլոր պահանջները կատարված են:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը 09.01.2017թ. որոշում է կայացրել գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ նշելով, որ դատարանի 15.12.2016թ. կայացված չվերացված որոշման պահանջները կատարված չեն:

Այս որոշման դեմ Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ. Խաչատրյանի կողմից 16.01.2017թ. բերվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ քրեական դատարանի 31.01.2017թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

Վերոգրյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 23.02.2017թ. վճռաբեկ բողոք է ներկայացրել, ինչի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 06.06.2017թ. որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:

3. ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների, ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը գտնում է, որ օրենսգրքի 296-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին (2015թ. փոփոխություններով) և 103-րդ հոդվածին (2005թ. փոփոխություններով):

Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է հետևյալով.

ա) դիմողը նշում է, որ մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց բնույթով և բովանդակությամբ էականորեն տարբեր են: Այդ պայմանների մի մասն ուղղակիորեն արտահայտում և ապահովում է մեղադրական եզրակացության՝ որպես մինչդատական վարույթի արդյունքներն ամբողջացնող և դատական քննության հիմքը կազմող դատավարական փաստաթղթի էությունը: Այս խումբ պահանջները, օրինակ, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները կամ առաջադրված մեղադրանքի ձևակերպումը նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված լինելն առանձնանում են նրանով, որ, կազմելով մեղադրական եզրակացության բուն բովանդակությունը, իրենց բացակայությամբ ազդում են այդ դատավարական փաստաթղթի պատշաճության վրա՝ ընդհուպ անհնարին դարձնելով դրա հիման վրա դատական քննությունը: Մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջների մյուս մասն ունի լրացուցիչ, ապահովող, երբեմն՝ տեխնիկական նշանակություն և կոչված է նպաստելու դատական քննության անխոչընդոտ ու դյուրին կազմակերպմանն ու ընթացքին (օրինակ՝ ի պաշտպանություն մեղադրյալի բերվող փաստարկներից մեկը մեղադրական եզրակացությունում չնշելը):

Այս համատեքստում դիմողը գտնում է, որ մեղադրական եզրակացության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրան ներկայացված՝ բացառապես ապացույցներ հետազոտելուց հետո դատական գնահատման ենթակա հանգամանքներին առնչվող պահանջներին անհամապատասխանության հիմքով քրեական գործը մեղադրողին վերադարձնելու հնարավորությունը չի համապատասխանում դատարանի անկողմնակալության՝ արդար դատաքննության իրավունքից բխող սահմանադրական պահանջին և ողջամիտ կասկած է հարուցում առ այն, որ դատարանը կանխակալ վերաբերմունք ունի գործով ձեռք բերված այս կամ այն ապացույցի ապացուցողական նշանակության վերաբերյալ:

Վերոնշյալի հիման վրա դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» նախադասությունը՝ դատական պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանության մասով, որը դատարանին հնարա-

վորություն է ընձեռում քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս **գնահատել քրեական գործով ձեռք բերված ապացույցները**, չի համապատասխանում արդար դատաքննության իրավունքից բխող անկողմնակալության պահանջին,

բ) օրենսդրությունը, սահմանելով մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար քրեական գործը մեղադրողին վերադարձնելու դատավարական հնարավորություն, անհրաժեշտ հստակությամբ չի կարգավորել դրա դատավարական հետևանքները, մասնավորապես, դատարանի կողմից արձանագրված թերությունները մեղադրողի կողմից վերացնելու մեխանիզմը: Համապատասխան դատավարական կարգի բացակայությունը հանգեցնում է դատարանի կողմից մեղադրողին վերադարձված քրեական գործի հետագա ընթացքի արգելափակման, գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման, իսկ երբեմն՝ գործի դատական քննության անհնարինություն: Այս հանգամանքը չի համապատասխանում արդարադատության պատշաճ կազմակերպման՝ պետության պարտավորությանը և չի երաշխավորում իրեն առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունն ստուգելու համար իր գործի դատական քննության, այսինքն՝ դատարանի և արդարադատության մատչելիության յուրաքանչյուրի իրավունքը: Բացի դրանից, առկա իրավական կարգավորումը խոչընդոտում է դատարանում մեղադրանքի պաշտպանության դատախազության սահմանադրական գործառույթի իրականացմանը:

Վերոնշյալի հիման վրա դիմողը գտնում է, որ մեղադրողին վերադարձված քրեական գործով մեղադրական եզրակացության թերությունները վերացնելու դատավարական մեխանիզմի բացակայությունը, հնարավորություն չտալով վերացնել դրանում առկա թերությունները և քրեական գործը կրկին ուղարկել դատարան ըստ էության քննության, չի ապահովում արդար դատաքննության իրավունքից բխող՝ դատարանի մատչելիության իրավունքը և, դատական պրակտիկայում հանգեցնելով դատախազի և դատարանի միջև քրեական գործի տևական փոխանցումների, չի ապահովում քրեական գործի ողջամիտ ժամկետում քննության պահանջը,

գ) դիմողը, նշելով, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ, փաստում է, որ այդ հանգամանքը հնարավորություն չի տալիս վիճարկել օրենքով նախատեսված հիմքերի սխալ մեկնաբանությամբ կամ դրանց ակնհայտ բացակայությամբ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը և նպաստում է նախնական դատական վարույթի փուլում քրեական գործի արգելափակմանն ու դրա դատական քննության անհնարինությանը: Այս առումով, քրեական գործն անհիմն կերպով մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը վիճարկելու և վերացնելու դատավարական հնարավոր

րության բացակայությունը սահմանափակում է դատավարության մասնակիցների՝ իրենց վերաբերյալ քրեական գործի արդար դատական քննությանը ընդհանրապես, և դրա ողջամիտ ժամկետում քննությանը՝ մասնավորապես: Դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքը սահմանափակող դատավարական որոշումը վիճարկելու անհնարինությունը, քրեական գործի հետագա ընթացքի անհնարինության և դրա օրինականության և հիմնավորվածության հետագա ստուգման մեխանիզմների բացակայության պայմաններում չի համապատասխանում իրավունքների պաշտպանության միջոցի արդյունավետությանը: Դատավարության մասնակիցների արդար դատաքննության իրավունքը խախտող դատավարական որոշման բողոքարկման անհնարինությունը չի ապահովում ողջամիտ համաչափությունը դրա հետապնդած նպատակների հետ:

Վերոնշյալի հիման վրա դիմողը գտնում է, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը, չսահմանելով դատավարության մասնակիցների արդար դատաքննության իրավունքը բացառող դատավարական որոշման վիճարկման հնարավորություն, չի ապահովում իրավունքների պաշտպանության միջոցի արդյունավետությունը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ օրենսգրքի 296-րդ հոդվածով սահմանված դրույթն ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին:

Պատասխանողը հիմնավոր չի համարում դիմողի դիրքորոշումը, ըստ որի՝ օրենսգրքի 296-րդ հոդվածը դատարանին հնարավորություն է տալիս քրեական գործը վերադարձնելիս կատարել քրեական գործում առկա ապացույցների դատական գնահատում, և այդ կապակցությամբ վկայակոչում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ԵԷԴ/0044/01/11 քրեական գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի նախադեպային որոշումը:

Հիշյալ որոշումը վկայակոչելով պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրական գործառույթի շրջանակներում ուրվագծել է սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթի կիրառման սահմանները, իսկ ստորադաս դատարանների կողմից Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին հետևելու հսկողությունը դուրս է սահմանադրական արդարադատության շրջանակներից: Նշվածի հիման վրա պատասխանողը, եզրահանգելով, որ իրականում դիմողը քողարկված կերպով բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց, գտնում է, որ սույն գործի նկատմամբ պետք է կիրառել Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի թիվ 21 աշխատակարգային որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական հետևանքները:

Քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշման բողոքարկման հնարավորության բացակայության հետ կապված պատասխանողը նկատում է՝ քանի որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու դեպքում թերությունների շտկումն **առավելապես տեխնիկական բնույթ է կրում**, հետևաբար՝ օրենսդիրն անհրաժեշտություն չի տեսել նման դատական ակտի բողոքարկում սահմանելու: Ըստ պատասխանողի՝ բողոքարկման հնարավորության սահմանումը ոչ միայն չի բխի մեղադրյալների իրավունքների պաշտպանության հրամայականից, ինչպես պնդում է դիմողը, այլև կվնասի նրանց լավագույն շահերը՝ էլ լավելի ձգձգելով դատական գործընթացը: Բացի դրանից, ըստ պատասխանողի՝ առկա է օրենսդրական երաշխիք, որ դատարանի կողմից օրենքի հնարավոր խախտումները հետաձգված կարգով բողոքարկվեն վերջնական դատական ակտի՝ դատավճռի հետ միասին:

Քրեական գործով մեղադրական եզրակացության թերությունները շտկելու դատավարական կարգի բացակայության հետ կապված **պատասխանողը գտնում է, որ առկա է օրենսդրական բաց**, սակայն, վկայակոչելով օրենքի բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ առկա օրենսդրական բացը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը, այլ հաղթահարելի է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

5. Օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասը կոչված է կանոնակարգելու դատական քննության նախապատրաստվելու փուլում դատարան-դատախազ իրավահարաբերությունները կապված մեղադրական եզրակացության պատշաճության հետ: Ընդ որում, մեղադրական եզրակացության կարևորությունն ընդգծված է նաև Սահմանադրական դատարանի ՄԴՈ-934 որոշման մեջ: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը. «... մեղադրական եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները, ներկայացվում են անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը և այն հիմնավորող ապացույցները, այլև հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալին (նրա օրինական ներկայացուցչին) կազմակերպելու և իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակում: Մեղադրական եզրակացությունն իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը»:

Օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է դատարանի կողմից գործը մեղադրողին վերադարձնելու իրավական հիմքերը, որոնք արտահայտվում են հետևյալ կերպ.

- երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին,

- կամ երբ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը,

- կամ երբ արարքի իրավաբանական որակումը չի բխում գործում առկա ապացույցներից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի կողմից՝ դիմողն ըստ էության բարձրացնում է ոչ թե օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի, այլ այդ մասում ամրագրված հիմքերից առաջինի, այն է՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտության՝ դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությանը պայմանավորված սահմանադրականության հարցը, մյուս կողմից՝ մյուս երկու իրավական հիմքերի կիրառման վերաբերյալ առկա է ՀՀ վճարեկ դատարանի՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից այդ հիմքերի միատեսակ կիրառությունն ապահովող որոշում (2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 քրեական գործով որոշում), սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը քննության առարկա է դարձնում օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտության՝ դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությանը պայմանավորված սահմանադրականության հարցը:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն ըստ էության բարձրացնում է նաև ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի, այլ այդ մասի առաջին նախադասության սահմանադրականության հարցը, սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը քննության առարկա է դարձնում 296-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականության հարցը:

6. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ, անաչառ դատարանի կողմից:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետա-

պնդման իրավական ելքից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով՝ անմեղության կանխավարկածը, *inter alia*, պահանջում է, որ իր պարտականությունները կատարելիս դատարանը չունենա կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, իսկ ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հոգուտ մեղադրյալի: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է համարել այն իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին համապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն նրա վերաբերյալ ընդունված դատական որոշումից կարելի է կարծիք կազմել, որ նա մեղավոր է (տե՛ս *Barbera, Messegue and Jabardo v. Spain*, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետեր 77, 91):

Օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

...

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը ...»:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանված են օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում: Մահմանադրական դատարանը գտնում է, որ՝

նախ, «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը **չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված հստակ պահանջներն են:**

Երկրորդ՝ օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված պահանջները, իրենց հերթին, չեն կարող մեկնաբանվել այնքան լայն, որ այդ մեկնաբանությունը ներառի ապացույցների գնահատումը կամ հնարավորություն տրվի դատարանին դրսևորելու այնպիսի վարքագիծ, որը դատարանը դատավարության տվյալ փուլում իրավասու չէ դրսևորել: Այսինքն, քրեական գործը վերադարձնելը պետք է ծառայի իր բուն նպատակին՝ ապահովելու դատավարական մի փուլից մյուսին սահուն և օրինաչափ անցումը, նպաստելու դատական քննության առավել արդյու-

նավետ իրականացմանը: Հիշյալ խնդրին անդրադարձ է կատարել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ փաստելով, որ «... դատարանի կողմից նման որոշման կայացումն արդարացված կլինի միայն մեկ դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը կազմված է քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներով, օրինակ՝ դատախազը չի հաստատել մեղադրական եզրակացությունը, այն ստորագրված չէ քննիչի կողմից, չունի նկարագրական-պատճառաբանական մաս, օրենքով սահմանված անհրաժեշտ հավելվածներ և այլն» (2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 քրեական գործով որոշում):

Երրորդ՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում առկա իրավիճակը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կողմից գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը վտանգում է ոչ միայն ողջամիտ ժամկետներում գործի քննության սկզբունքի իրացումը, այլև կարող է պարունակել գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու տարրեր /հակասելով ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին/, վտանգել դատարանի անաչառությունը, անհամատեղելի լինել իրավունքի գերակայության սկզբունքին:

Դատական պրակտիկայում վերոշարադրյալ եռատարր իրավական դիրքորոշումների պահպանման պարագայում խնդրին ամբողջական լուծում կտրվի և դատարանների ու դատախազի հայեցողության շրջանակներով պայմանավորված չի հանգեցնի փակուղային վիճակների:

Բոլոր դեպքերում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կարծիքով իր պահանջների ոչ լիարժեք կատարումը հիմք չէ գործը կրկին մեղադրողին վերադարձնելը: Դատարանը պարտավոր է գործն ընդունել քննության և դատաքննությունն սկսել օրենքով նախատեսված ժամկետներում: Իր հերթին, մեղադրող կողմը պետք է նկատի ունենա, որ թերություններով ու ոչ հիմնավոր մեղադրական եզրակացությունը կարող է հանգեցնել գործի վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման կամ արդարացման դատավճռի կայացմանը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը վերոնշյալ իրավական դիրքորոշումներին ոչ համահունչ կիրառելու դեպքում դատարանը դուրս կգա դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից: Այս պարագայում դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը կարող է խախտել ի շահ մեղադրանքի կողմի՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և 66-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը:

7. Անդրադառնալով օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դատախազի համար մեղադրական եզրակացությունում առկա թերությունները վերացնելու պարտականություն է առաջանում: Սակայն օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ **բացակայում է այդ պարտականության իրականացման ընթացակարգը, այսինքն՝ նյութական նորմով սահմանված պարտականությունն ապահովված չէ ընթացակարգային նորմերով:** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասը կոչված է կանոնակարգելու դատարան-դատախազ հարաբերությունները մեղադրական եզրակացությունում առկա թերությունները վերացնելու մասով, իսկ **դատախազ-քննիչ հարաբերություններն այս մասով իրավական կարգավորումից դուրս են մնացել:** Դատախազի և քննիչի հարաբերությունները մեղադրական եզրակացության մասով կանոնակարգված են օրենսգրքի 274-րդ հոդվածով, սակայն այն վերաբերում է այն դեպքերին, երբ քննիչը, ստորագրելով մեղադրական եզրակացությունը, քրեական գործն ուղարկում է նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին: Գործը մեղադրողին վերադարձնելուց հետո մեղադրական եզրակացությունում առկա թերությունները շտկելու համար դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը քննիչին ուղարկվելու, քննիչի կողմից դրանք վերացվելու խնդիրներն օրենսդրական հստակ և ամբողջական կանոնակարգումների անհրաժեշտություն ունեն: Դատախազ-քննիչ իրավահարաբերությունների բնական ընթացքը, դատախազի՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու սահմանադրական պարտականության արդյունավետ կատարումն ապահովելու հրամայականը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ ու իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվեն հետևյալ մոտեցմամբ. բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը վերադարձրել է դատախազին, վերջինս մեղադրական եզրակացությունում առկա թերություններն ուղղելու նպատակով այն կարող է ուղարկել քննիչին: Այս համատեքստում՝ իրավակիրառ պրակտիկայում հնարավոր անհստակությունները կանխելու համար Սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ դատարանի կողմից նշվող ժամկետի (ինչպես նաև 296-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանված 3-օրյա, 7-օրյա ժամկետների) հաշվարկն սկսվում է գործը մեղադրողին **վերադարձնելու մասին դատարանի որոշումը դատախազի կողմից ստանալու պահից:**

Միաժամանակ, հիմք ընդունելով օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտության՝ վերը բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ դատախազ-քննիչ հարաբերությունների կանոնակարգմանն ուղղված՝ սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը չի կարող մեկնաբանվել որպես քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հնարավորություն: Ուստի այս առումով Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի պնդումն առ այն, որ՝ «... մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար դատարանի կողմից վերադարձված քրեական գործով դատախազի կողմից գործը քննիչին վերադարձնելու անհնարինության մասին է խոսում նաև քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու դատավարական ինստիտուտի ոչ սահմանադրականությունը, ինչը ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-710 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում բացառում է դատարանն ուղարկված քրեական գործով թերությունները և խախտումները վերացնելու համար այն քննիչին վերադարձնելը»:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը վիճարկելու անհնարինությունը չի համապատասխանում իրավունքների պաշտպանության միջոցի արդյունավետությանը, չի ապահովում դատավարության մասնակիցների արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև ողջամիտ համաչափությունը դրա հետապնդած նպատակների հետ, Սահմանադրական դատարանն այդ կապակցությամբ արձանագրում է հետևյալը.

ա) դատարանի մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (ՄԴՈ-1257),

բ) դատախազի կողմից գործը մեղադրողին վերադարձնելու մասին դատարանի որոշման բողոքարկման իրավունքի բացակայությունը չի խաթարում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի էությունը, ավելին՝ պայմանավորված է ողջամիտ ժամկետներում գործի քննության ապահովման անհրաժեշտությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողով ներկայացված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում քննության առարկա դրույթը և փոխկապակցված այլ դրույթներն ունեն հետևյալ ձևակերպումը.

«Եթե նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը կազմվել կամ ներկայացվել է սույն օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ, ապա դատարանը հանրային մեղադրողին ողջամիտ ժամանակ է տրամադրում այդ որոշումը սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ կազմելու և ներկայացնելու համար: Եթե դատարանի սահմանած ժամկետում սույն օրենսգրքի պահանջների խախտումը չի վերացվում, ապա դատարանը վարույթը շարունակում է սկզբնական մեղադրանքով՝ այդ մասին կայացնելով առանձին որոշում» (հոդված 312, կետ 4):

- «Դատալսումները հետաձգվում են նաև այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջներին: Տվյալ հիմքով դատական նիստը հետաձգելիս դատարանը հանրային մեղադրողին պարտավորեցնում է դատարանի սահմանած ժամկետում մեղադրական եզրակացությունը համապատասխանեցնել սույն օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջներին, այն ներկայացնել դատարան, իսկ դրա պատճենը հանձնել դատական վարույթի մասնակիցներին: Եթե մեղադրյալը գտնվում է կալանքի տակ, ապա դատարանի սահմանած ժամկետը չպետք է երեք, իսկ մնացած դեպքերում յոթ օրվանից ավել լինի» (հոդված 277, կետ 5):

Մանրամասն կանոնակարգվում են նաև մեղադրական եզրակացության կազմման և ներկայացման հետ կապված հարաբերությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝

ա/ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված պահանջներն են: Իսկ վերջիններս չեն կարող մեկնաբանվել այնպես, որ այդ մեկնաբանությունը ներառի ապացույցների գնահատումը կամ հնարավորություն տրվի դատարանին դրսևորելու այնպիսի վարքագիծ, որը դատարանը դատավարության տվյալ փուլում իրավասու չէ դրսևորել,

բ/ գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը չի բխում իրավունքի գերակայության սկզբունքից և անձի սահմանադրական իրավունքների խախտման իրական վտանգ կարող է ստեղծել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը վերադարձրել է դատախազին, վերջինս մեղադրական եզրակացությունում առկա թերություններն օրենքի պահանջներին համապատասխան շտկելու նպատակով այն կարող է ուղարկել քննիչին՝ պահպանելով դատարանի կողմից սահմանված ժամկետները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 դեկտեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1393



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԱՐՏԳԵԶ ԳԱՄՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 375-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 379-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչներ՝ Տ. Եգորյանի, Դ. Գյուրջյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարսգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վ. Գասպարիի՝ 2017 թվականի հուլիսի 3-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատավճռի պատճենը հանձնելը դատապարտվածին կամ արդարացվածին» վերտառությամբ 375-րդ հոդվածը սահմանում է.

«Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը» վերտառությամբ 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որը լրացվել է 2006թ. մայիսի 25-ի ՀՕ-91-Ն օրենքով և խմբագրվել 2008թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-237-Ն օրենքով, սահմանում է.

«1. Վերաքննիչ բողոք բերվում են

1) առաջին աստիճանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում.»...:

ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2003թ. ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ին:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը» վերտառությամբ 343-րդ հոդվածը խմբագրվել է 2005թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-33-Ն և փոփոխվել է 2011թ. փետրվարի 8-ի ՀՕ-40-Ն օրենքներով: Այդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գործող խմբագրությամբ սահմանում են.

«2. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

3. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի մարտի 29-ի դատավճռով Վարտգեզ Գասպարին թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ մեկ այլ վարչական գործի դատավարության մասնակիցների և նախագահող դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար: Նրա նկատմամբ որպես պատիժ նշանակվել է 450.000 ՀՀ դրամի չափով տուգանք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի մայիսի 27-ի որոշմամբ առաջին ատյանի դատարանի նշված դատավճռի դեմ 2016 թվականի մայիսի 4-ին բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնվել է առանց քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նշված որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը խնդրում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը կամ դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 29, 61, 63, 69, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դատական ակտը կողմին այն հրապարակելու օրը չտրամադրելը և դրա բողոքարկման ժամկետը հրապարակման օրվանից հաշվարկելը հնարավորություն են տալիս այդ դրույթները կիրառել այնպիսի մեկնաբանությամբ, որի արդյունքում ընթացակարգային խնդիրներով պայմանավորված նվազեցվում է դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի առնչությամբ դիմողն իր դիրքորոշումը փաստարկում է նրանով, որ այդ հոդվածը դատարանի համար չի սահմանում դատական ակտն այն հրապարակելու օրը կողմին տրամադրելու պարտականություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առնչությամբ դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը պարունակում է իրավական անորոշություն: Ըստ դիմողի՝ իրավական անորոշությունը պայմանավորված է նրանով, որ հնարավորություն է ստեղծվում իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթին տալ հակասական

մեկնաբանություն. մի դեպքում դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկել դատական ակտի ստացման պահից, մյուս դեպքում՝ դատական ակտի հրապարակման պահից: Վերջին դեպքում, ըստ դիմողի, խնդրո առարկա դրույթն իրավակիրառողին հնարավորություն է տալիս բողոքարկման մեկամսյա ժամկետը նվազեցնել դատական ակտը դատավարության կողմին փաստացիորեն հանձնելու ժամկետով:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողը նշում է, որ օրենսդրի կողմից այս կամ այն դատական ակտը բողոքարկելու համար սահմանված ժամկետներն այն ժամկետներն են, որոնք կոչված են երաշխավորելու արդար դատաքննության, իրավական որոշակիության և դրանց բաղադրիչ հանդիսացող այլ իրավունքներ և սկզբունքներ, ուստի բողոքարկող անձանց համար այդ ժամկետներն իրավակիրառական պրակտիկայում պետք է ապահովվեն և չսահմանափակվեն այնպիսի սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք կանխատեսելի, որոշակի և կայուն չեն:

Ըստ դիմողի՝ դատական ակտի «բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետը որևէ այլ գործողության կատարման, առավել ևս՝ պետության կողմից իր պարտականության կատարման նպատակով նվազեցնելը չի կարող կրել որևէ իրավաչափ նպատակ, այն չի բխում որոշակիության սկզբունքից, պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին, որովհետև ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, չի նախատեսում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման այնպիսի հիմք, ինչպիսին արդարադատության հեղինակությունն է: Հետևաբար, դատավարության մասնակիցներին կամ նախագահող դատավորին ուղղված իր արտահայտությունները չեն կարող ստանալ քրեաիրավական գնահատական և պետք է դիտարկվեն բացառապես քաղաքացիաիրավական տիրույթում՝ մասնավոր անձի պատվի ու բարի համբավի պաշտպանության իրավունքի շրջանակներում:

4. Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող քրեադատավարական իրավակարգավորումներն ապահովում են դատարանի մատչելիության արդյունավետ կառուցակարգ, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն ողջամիտ ժամկետում իր իրավունքները շոշափող դատական ակտի բողոքարկման համար:

Պատասխանողի կարծիքով՝ տեխնիկապես հնարավոր չէ բոլոր դեպքերում ապահովել հրապարակման օրը դատավճռի պատճենի հանձնումը կողմերին, իսկ 5-օրյա ժամկետում դատավճռի հանձնումը կողմին բավարար է անձի համար հաջորդող 25-օրյա ժամկետում հիմնավոր բողոք ներկայացնելու համար: Բոլոր այն դեպքերում, երբ դատավճռի պատճենն անձն ստացել է սահմանված 5-օրյա ժամկետից հետո, նա կարող է բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու համար միջնորդություն ներկայացնել դատարան, և այդ դեպքում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) կհամարվի հարգելի:

ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի իրավակարգավորումների առնչությամբ պատասխանողը գտնում է, որ նախագահող դատավորը դատաքննության ընթացքում հանդես չի գալիս որպես մասնավոր անձ, այլ մարմնավորում է արդարադատությունը, հանդես է գալիս որպես դատարան, և վերջինիս նկատմամբ անհարգալից վերաբերմունքն ուղղված է արդարադատության հեղինակության դեմ և դրանով իսկ հանրորեն վտանգավոր արարք է:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածով և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ պարզել և գնահատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածով և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված իրավադրույթների և ընդհանուր իրավասության դատարանի կողմից դրանց տրված մեկնաբանության սահմանադրականությունը՝ մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության, դատապարտվածի բողոքարկման սահմանադրական իրավունքների երաշխավորվածության և ապահովվածության համատեքստում՝ հաշվի առնելով դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Դատավճռի պատճենը հանձնելը դատապարտվածին կամ արդարացվածին» վերտառությամբ 375-րդ հոդվածը պարտավորեցնում է դատարանին որոշակի ժամկետում իրականացնել դատաքննության ավարտին կայացված դատավճռի պատճենի հանձնումը դատավարության մասնակիցներին: Այդ նորմից հետևում է, որ հնգօրյա ժամկետում դատավճռի պատճենի հանձնումը դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին պարտադիր է, ինչը **երաշխիք է ինչպես դատապարտվածի բողոքարկման իրավունքի իրացման, այնպես**

Էլ այլ քաղաքացիաիրավական գործառույթների իրականացման համար: Դատավարության մյուս մասնակիցներին նույն ժամկետում դատավճռի պատճենը կարող է հանձնվել միայն նրանց միջնորդությամբ:

Վերոնշյալ իրավակարգավորումը դիտարկելով օրենսգրքի մյուս դրույթների հետ համակարգային փոխկապվածության մեջ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավճռի հրապարակումը և դրա հանձնումը դատավարության կողմերին իրար հաջորդող գործողություններ են, և թե ինչպիսի ժամանակահատված ընկած կլինի այդ գործողությունների միջև՝ կախված է տվյալ գործի առանձնահատկություններից:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհրաժեշտ բոլոր հարցերը լուծելուց հետո դատարանն անցնում է դատավճիռ կազմելուն: Այն կազմվում և հրապարակվում է **երկշաբաթյա ժամկետում:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **դատավճիռն ստորագրելուց անմիջապես հետո այն հրապարակվում է**, իսկ 375-րդ հոդվածին համապատասխան դատավճռի պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին՝ **հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում:**

Դատավճռի պատճենը հանձնելու համար որոշակի ժամկետ սահմանող դատավարական նորմը դատարանին հնարավորություն է տալիս առավել արդյունավետությամբ իրականացնել իր պարտականությունները, մասնավորապես այնպիսի պատասխանատու և վճռորոշ փաստաթուղթ կայացնելիս, ինչպիսին է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատավճիռը, որն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցն է լուծում:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը» դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին հանձնելը ենթադրում է, որ **հնարավորության դեպքում դատարանը պետք է ձգտի, որ դատավճռի պատճենը հանձնվի ավելի կարճ ժամանակահատվածում**, որպեսզի դատապարտվածը կամ արդարացվածը հնարավորություն ունենա ծանոթանալու իր նկատմամբ կայացված դատական ակտին և անհրաժեշտության դեպքում նախապատրաստվի դրա բողոքարկմանը:

7. Անօրինական դատավճիռները և դատական սխալները կանխելու և բացառելու նպատակով դատական ակտն ավելի բարձր դատական ատյանում բողոքարկելը քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի կարևորագույն իրավունքներից մեկն է:

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերահաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք: Այդ իրավունքն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 14, կետ 5) և Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայով (Արձանագրություն 7, հոդված 2):

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի (նախկին հանձնաժողովի) իրավական դիրքորոշումների համաձայն (2007թ., ընդհանուր կարգի դիտողություններ №32, կետ 47)՝ դատավճռի վերանայման իրավունքը պահանջում է, որպեսզի դատապարտվածը՝ հիմնավորված, պատշաճ կերպով ձևակերպված դատարանի դատավճռի և դատական նիստերի արձանագրությունների մատչելիության իրավունք ունենա, ինչն անհրաժեշտ է բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «...արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է, որ դատավարության կողմերը պետք է կարողանան օգտվել իրենց բողոքարկման իրավունքից այն պահից, երբ փաստացի ծանոթացել են դատական որոշումների հետ, որոնք կարող էին խախտել իրենց օրինական իրավունքները կամ շահերը, այլապես դատարանները կարող են էականորեն կրճատել բողոքարկման ժամկետը, անգամ դատական ակտի հանձնումը ձգձգելով անհնարին դարձնել դրա բողոքարկումը («Miragall Escolano and Others v. Spain», 25/01/2000, app. no. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 1487/98, 41509/98, § 37):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից բխում է, որ բողոքարկման համար նախատեսված մեկամսյա ժամկետը մեկնարկում է դատավճռի հրապարակման օրվանից, իսկ դատավճռի հանձնման համար նույն օրենսգրքի 375-րդ հոդվածով նախատեսված հնգօրյա ժամկետը փաստորեն ներառվում է այդ մեկամսյա ժամկետի մեջ:

Գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ սույն գործով դիմողին դատավճիռը ոչ թե հանձնվել, այլ ուղարկվել է հնգօրյա ժամկետում և նրան **հասանելի է դարձել միայն հրապարակումից հետո՝ վեցերորդ օրը:**

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել, թե նման իրավիճակներում, երբ դատապարտվածին բողոքարկման համար փաստացի մնում է քսանհինգօրյա կամ պակաս ժամկետ, արդյո՞ք

սահմանափակվում են արդար դատաքննության, դատարանի մատչելիության և դատավճռի բողոքարկման՝ նրա իրավունքները, և որքանո՞վ է այդ սահմանափակումն իրավաչափ:

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1249 որոշումներում նմանատիպ քրեադատավարական հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի սահմանադրականության հարցի վերաբերյալ արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ առանձնացնելով այն դեպքերը, երբ բողոքարկվող դատական ակտը շահագրգիռ անձին օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի դառնում նրա կամքից անկախ պատճառներով: Դատարանը գտել է, որ՝ «...բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի ուժով /ex jure/ բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը» (ՄԴՈ-1052):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առնչությամբ բարձրացված հիմնախնդիրը դիտարկել Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ **հաշվի առնելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածում ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու և 78-րդ հոդվածում ամրագրված՝ համաչափության սկզբունքները:**

Այսպես, ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպես՝ ՄԴՈ-1052 որոշման մեջ նշվել է, որ՝ «ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը,

միևնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՄԴՈ-652, ՄԴՈ-665, ՄԴՈ-690, ՄԴՈ-719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, **օրենսդրեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել** դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար»:**

ՀՀ սահմանադրական դատարանն այնուհետև արձանագրել է, որ «...վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է որպեսզի **վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի էլքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը»:**

ՄԴՈ-1062 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, ստացման և վճռաբեկության կարգով բողոքարկման մեկամսյա ժամկետի մասին նույնատիպ հարց, անդրադարձել է վերը նշված ՄԴՈ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ թեև այդ որոշմամբ քննության առարկա է դարձվել միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հիմնահարցը, այնուհանդերձ, համապատասխան իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև ըստ էության կայացված դատական ակտերի նկատմամբ: Դատարանն արձանագրել է, որ **հրապարակման պահից բողոքարկման ժամկետի հաշվարկն ինքնին համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին:**

Սահմանադրական դատարանը գտել է, որ «ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում ... սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **ժամանակ** ապահովող երաշխիքներ»: Սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին:**

9. ՀՀ Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքների և ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույթի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդրության զարգացումը կարող է հանգեցնել, մի կողմից՝ բողոքարկման փաստացի ժամկետի, մյուս կողմից՝ դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու ժամկետի միջև ոչ արդյունավետ հավասարակշռության: Օրինակ, չի բացառվում, որ հետագա օրենսդրական զարգացումների արդյունքում օրենսդիրը դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու համար նախատեսի ավելի մեծ ժամկետ, քան 5 օրն է՝ դրանով իսկ նվազեցնելով այն ժամկետը, որն անհրաժեշտ է կողմին հիմնավոր բողոք բերելու համար: Մինչդեռ ենթադրվում է, որ օրենսդիրը դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետ է սահմանում բողոքարկվող դատական ակտի բնույթի, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտության հաշվառմամբ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՄԴՈ-1062 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշումները, որ «...գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը», և որ «...անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար», ամրագրվել են տվյալ գործով վիճարկվող նորմում դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու համեմատաբար փոքր՝ **եռօրյա ժամկետի** հաշվառմամբ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում ՄԴՈ-1062 որոշման մեջ ամրագրված դիրքորոշումները չեն կարող պարզ անալոզիայով կիրառվել կոնկրետ գործով նմանատիպ հարաբերություններ կարգավորող այլ

նորմերի կիրառման դեպքում, այնպես, ինչպես դիմողի գործով արել են քրեական վերաքննիչ և վճռաբեկ դատարանները: Այսինքն, եթե դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու եռօրյա ժամկետի դեպքում Սահմանադրական դատարանն առնվազն 27-օրյա ժամկետի առկայությունը բավարար է համարել դատական ակտի բողոքարկման համար, ապա դա չի նշանակում, որ այն ինքնաբերաբար տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ օրենսդրությամբ սահմանված է տվյալ տեսակի դատական ակտի պատճենը կողմին **հանձնելու** հնգօրյա ժամկետ կամ նույնիսկ հնգօրյա ժամկետը խախտելու պարագայում: Ավելին, չպետք է մեխանիկական մոտեցում դրսևորել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի իրացման ու դատարանին անհիմն չճանրաբեռնելու մոտեցումների միջև ընտրություն կատարելիս:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի թերացման հետևանքով դատական ակտն ուշ է հասանելի դարձել իրավասու անձին, և դա փաստարկվել ու հիմնավորվել է, ապա նրա համար իրավունքի ուժով պետք է երաշխավորվի դատական ակտը հասանելի դառնալու պահից մեկամսյա ժամկետում բողոք բերելու հնարավորությունը:

Սահմանադրական վերջին փոփոխությունների հաշվառմամբ զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի հանձնումն անձին /նրա համար հասանելի դարձնելը/ այն հրապարակելու օրվանից հնգօրյա ժամկետում՝ ինքնին սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, **եթե երաշխավորվի դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման, և պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:**

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածին՝ ՍԴՈ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են **ամբողջական ակտի ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:**

10. ՄԴՈ-1052 որոշման մեջ Սահմանադրական դատարանը կարևորել է նաև դատական պաշտպանության երաշխավորման մեկ այլ կառուցակարգի՝ բաց թողնված ժամկետի վերականգնման ինստիտուտի առկայությունն ընդհանրապես, երբ այն տեղի է ունեցել դատարանից անկախ պատճառներով: Հետագայում՝ ՄԴՈ-1249 որոշմամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ «...որպես ընդհանուր կանոն, այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին **միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է**, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը»: Միննույն ժամանակ, որպես հատուկ կանոն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված չէ անձի կամքով, առաջացել է անձից անկախ պատճառներով, սահմանադրական դատարանը գտել է, որ այդպիսի դեպքերում նույնպես ներկայացված միջնորդությունը բավարարելը համապատասխան դատական ատյանի պարտականությունն է հանդիսանում: Այդ դեպքերի առնչությամբ Սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «...երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան **բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝** կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով /ex jure/՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

11. Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր ՄԴՈ-747 և ՄԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում կրկին ընդգծել է, որ «... օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:

Անդրադառնալով սույն գործով վիճարկվող դատավարական դրույթների կիրառման դատական պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանները ոչ միայն ՄԴՈ-1052 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումներն ինքնաբերաբար տարածել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վրա և յուրովի են ընկալել ու կիրառել Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները, այլև ձևավորել են հակասական իրավակիրառական պրակտիկա: Մասնավորապես, գործի նյութերը վկայում են, որ.

- ԵԱԴԴ/0049/01/15 գործով 13.08.15թ. դատավճիռն ստացվել է 26.08.15թ. և բողոքարկվել է ստացման պահից 30 օր անց՝ 25.08.15թ.,

- ԵԱԴԴ/0004/01/13 գործով 27.07.15թ. դատավճիռն ստացվել է 07.08.15թ. և բողոքարկվել է ստացման պահից 31 օր անց՝ 07.09.15թ.,

- ԵԱՆԴ/0078/01/12 գործով 24.03.14թ. դատավճիռն ստացվել է 15.04.15թ. և բողոքարկվել է ստացման պահից 30 օր անց՝ 15.05.14թ.,

- ՄԴ/0143/01/13 գործով 30.09.14թ. դատավճիռն ստացվել է 17.11.14թ. և բողոքարկվել է ստացման պահից 30 օր անց՝ 17.12.14թ.:

Ընդ որում, վերոհիշյալ բոլոր բողոքներն ընդունվել են վարույթ և դրանցից ոչ մեկն առանց քննության չի թողնվել:

Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի և դատապարտվածի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ՝ Սահմանադրական դատարանը վերստին ընդգծում է ՄԴՈ-690 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն»:

12. Հաշվի առնելով վերոշարադրյալը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 75 և 78-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև ելնելով մարդու իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերի ապահովման ու իրավակիրառական պրակտիկայում առկա հակասական մոտեցումների հաղթահարման անհրաժեշտությունից, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա/ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը դատարանի մեղքով օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի դարձել կամ չի հանձնվել իրավասու սուբյեկտին, ապա վերադաս դատական ատյան բողոք բերելու համար հիմք պետք է ընդունել օրենքով նախատեսված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման,

բ/ նման պարագայում, երբ բողոքաբերի կողմից հստակ փաստարկված ու հիմնավորված է, որ դատական ակտը դատարանի թերացման արդյունքում օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի դարձել կամ չի հանձնվել իրավասու սուբյեկտին, ապա բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի՝ առանց միջնորդության ձևական պահանջի ու դրա հայեցողական քննարկումների,

գ/ ՀՀ օրենսդիրը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ներկա պահանջները, ելնելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների անմիջական գործողության երաշխավորման անհրաժեշտությունից, դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հետագա բարեփոխումների համար հիմք պետք է ընդունի այն սկզբունքը, որ բողոք բերողի համար երաշխավորվի դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործն այդ մասով ենթակա է կարճման, քանի որ դիմողը չի սպառել օրենքով նախատեսված դատական պաշտպանության միջոցները: Հիմք ընդունելով սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն այս իրավիճակում պահպանում է իր նկատմամբ կայացված դատավճռի բողոքարկման հնարավորությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32, 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի մասով կարճել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝

հողվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորում է դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի վերաքննիչ բողոքի ընդունելիության վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքների հիմքով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրախիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2017 թվականի
ՄԴՈ-1394



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՀԵԼՄԻՆԿՑԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 2017 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (Օրենսգիրք)՝ «Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը» վերառությամբ 213-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից»:

Օրենսգրքի 213-րդ հոդվածը փոփոխության և լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2017 թվականի ապրիլի 10-ին հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի ու թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովին դիտորդի գնահատականն արձանագրելուն պարտավորեցնելու և թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 7-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասով: ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի ապրիլի 14-ի վճռով հայցը մերժվել է (ՎԴ/3108/05/17):

ՀՀ վարչական դատարանը վերոհիշյալ վճռի 3-րդ կետում թույլ է տվել վրիպակ՝ ամրագրելով, որ «...վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան մինչև օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը»: ՀՀ վարչական դատարանն իր՝ 2017 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ ուղղել է հիշյալ վրիպակը՝ ամրագրելով, որ

«...վճռի եզրափակիչ մասի 3-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ կերպ. «Սույն վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և վերանայման ենթակա չէ»:

3. Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին:

Դիմողը վկայակոչելով դատական պաշտպանության իրավունքի և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ընտրական վեճերով բողոքարկման չափանիշների և սկզբունքների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցներում ներկայացված առաջարկները եզրահանգում է, որ ընդհանուր սկզբունքն այն է, որ ընտրական գործերի շրջանակներում ներպետական օրենսդրությունը պետք է երաշխավորի ընտրական գործընթացին մասնակցող յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը՝ ներառյալ դատական ակտի բողոքարկման հնարավորությունը, ինչն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով չի ապահովվում:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին այնքանով, որքանով սահմանափակում է ՀՀ վարչական դատարանի կողմից Օրենսգրքի 28-րդ գլխի կանոններով քննվող գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանող կողմը վկայակոչելով ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի իրավակարգավորումները, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկվել իրավաչափ սահմանափակումների, ինչն առկա է, երբ սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, ինչպես նաև այդ սահմանափակումները համապատասխանում են արդարադատության ընդհանուր սկզբունքներին:

Պատասխանող կողմը նշում է, որ Օրենսգրքի 28-րդ գլխի դրույթներով ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության բացառումը

պայմանավորված է այդ գործերին բնորոշ առանձնահատկություններով, մասնավորապես, որպես այդպիսին հանդիսանում են ՀՀ ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետային սահմանափակումները:

Պատասխանողի կարծիքով՝ սույն գործի շրջանակներում ամբողջությամբ կիրառելի են ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-1314 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, պատասխանողի կողմից վկայակոչվում է նաև հիշյալ որոշմամբ արտահայտված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հավաքի անցկացման գործերով օրենսդիրը որպես արդյունավետ իրականացման երաշխիք դիտարկել է վարչական դատարանի կոլեգիալ կազմը, դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանափակ կազմը, դատարան դիմելու և դատաքննության՝ ընդհանուր կարգավորումից տարբեր առավել սեղմ ժամկետները:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման անհնարինության սահմանադրականության հարց: Նկատի ունենալով հիշյալ հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը, սույն գործի շրջանակներում, անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման և ապահովման խնդրին, մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով երաշխավորված ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի դատական պաշտպանության համատեքստում՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջը:

6. Անձի դատական պաշտպանության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Իր բազմաթիվ որոշումներով (մասնավորապես, ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-780, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-936, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289, ՍԴՈ-1314, ՍԴՈ-1394) անդրադառնալով դատական բողոքարկման ինստիտուտին, դրա արդյունավետ իրացման օրենսդրական

ապահովման անհրաժեշտությանը՝ Սահմանադրական դատարանը խնդիրը դիտարկել է ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու և ապահովելու տեսանկյունից և արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (ՄԴՈ-936),

բ) «... դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ)» (ՄԴՈ-936),

գ) «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրա-

վունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՄԴՈ-1037):

Վարչական դատավարության շրջանակներում ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի դատական պաշտպանության առումով նույնպես Սահմանադրական դատարանը, ինչպես վերոնշյալ, այնպես էլ ընտրությունների արդյունքներով ծագած վեճերի վերաբերյալ գործերով ընդգծել է ընտրական գործընթացներում բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ պահանջների առանձնահատկությունների կարևորությունը տվյալ գործընթացի բոլոր փուլերում:

Սահմանադրական դատարանը նկատի ունենալով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ գտնում է, որ դրանք նպատակաուղղված են ընտրական խախտված իրավունքները սահմանադրական արդարադատական կարգով պաշտպանելու համար կայուն իրավական նախադրյալներ ստեղծելուն, ինչպես նաև ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունն ապահովելուն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում ևս բավիցս անդրադարձել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին և նշել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի դրա էությունը: Դրանք համապատասխանում են կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (*Golder v. United Kingdom*, 21 feb. 1975, *Fayed v. United Kingdom*, 21 sept. 1990, *Ashingdane v. United Kingdom*, 28 may 1985, *Garcia Manibardo v. Spain* (15 feb. 2000), 29.06.2000, *Bellet v. France*, 4 dec. 1995, *Philis v. Greece*, 27 aug. 1991, *Tolstoy Miloslavsky v. United Kingdom*, 13 jul. 1995):

7. Ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար անհրաժեշտ երաշխիքների, ինչպես նաև կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության կարևորության լույսի ներքո Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական դատավարության շրջանակներում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին:

Նախ հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի մայիսի 8-ի ՄԴՈ-700 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի դրույթներով կարգավորվող ընտրական իրավունքների պաշտպանության և տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության հարցերին, ամրագրել է, որ, մասնավորապես. «Նկատի ունենալով, որ ընտրությունները ժամկետային գործընթաց են, օրենսդիրը սահմանել է այդ բնույթի դիմումների քննության հնարավոր կրճատ ժամկետներ: ... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի 155 հոդվածն ամրագրում է, որ ընտրական իրավունքի պաշտպանության վեճերով դատարանի վճիռը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Օրենքի այս պահանջը նպատակ է հետապնդում վերացնել ընտրական իրավունքի խախտումները մինչև ընտրությունների ավարտը, այլապես խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռը կկորցնի իր իմաստը դիմողը չի կարող մասնակցել ընտրություններին, ընտրել կամ ընտրվել: ...

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ և բացառելով վճռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները»:

Օրենսդրական հետագա զարգացումների համատեքստում Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (մասնավորապես՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԴՈ-780, 2012 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1028 որոշումներ) ընդգծել է, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցում կարևոր իրավագործություն է վերապահվել 2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործող վարչական դատարանին: Սահմանադրական դատարանն իր՝ ՄԴՈ-1028 որոշմամբ

ամրագրել է, որ. «Նկատի ունենալով ընտրական իրավունքի դատական պաշտպանության դատավարական առանձնահատկություններն ու այդպիսի գործերով ընդդատության հանգամանքը, ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածներ նախատեսում են, որ առանձին ընտրական վեճեր քննվում և լուծվում են **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: ...**

ՀՀ օրենսդրությամբ սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում, ինչպես նշվեց, **վերջնական են և վերանայման ենթակա չեն:**

Հաշվի առնելով նշված հանգամանքները և նկատի ունենալով ՄԴՈ-433, ՄԴՈ-703 և ՄԴՈ-736 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրական գործընթացներում թեկնածուների գրանցման և այն վեճերին, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է ՀՀ վարչական դատարանին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա չեն կարող հանդիսանալ, իսկ որպես ապացուցողական հիմք ընդունվում են վարչական դատարանի վերջնական ակտերը»:

Քննության առարկա հարցի համատեքստում հարկ է նկատել նաև, որ միջազգային արդարադատական մարմինների պրակտիկայում նույնպես դատավարական նման ընթացակարգերն իրավաչափ են համարվում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ (մասնավորապես *Staroszczyk v. Poland*, գանգատ թիվ 59519/00, 2007թ. մարտի 22-ի վճիռ, պարբ.125, *Sialkowska v. Poland*, գանգատ թիվ 8932/05, 2007թ. մարտի 22-ի վճիռ, պարբ.103): Իր հերթին, և՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, և՛ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, մասնավորապես, 1995թ. փետրվարի 7-ի R (95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածում, որպես կանոն, շեշտելով ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման հնարավորության անհրաժեշտությունը, միաժամանակ նկատի են առել, որ եթե նպատակահարմար է համարվում նախատեսել շեղում նշված սկզբունքից, ապա այդ շեղումը պետք է հիմնվի օրենքի վրա և պետք է համապատասխանի արդարադատության ընդհանուր սկզբունքներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրության շրջանակներում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը վարչական դատարանում իրականացվում է Օրենսգրքի 28-րդ գլխում նախատեսված իրավական կանոններով, որոնք, իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով, ամփոփված են Օրենսգրքի «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնում:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 11-ի ՄԴՈ-1314 որոշմամբ Օրենսգրքի ընդհանուր և հատուկ իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համակարգված վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, ըստ որի՝ «...հատուկ վարույթի շրջանակներում նախատեսված ընթացակարգերն օբյեկտիվորեն առանձնահատուկ են ըստ՝

- դատական վերահսկողության օբյեկտների (նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ընտրական իրավունքի պաշտպանության, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու, անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման, անձնական տվյալների պաշտպանության, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու, նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովի որոշումների վիճարկման վերաբերյալ գործեր),

- դատարանի կազմի (առաջին ատյանի կոլեգիալ և միանձնյա կազմով),
- գործ հարուցելու և վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման (դիմող անձանց կազմի) առանձնահատկության,
- հայց ներկայացնելու ժամկետների (կրճատ ժամկետների) և կարգի,
- հայցադիմումը վարույթ ընդունելու և մերժելու ընթացակարգի,
- գործի վարույթը կասեցնելու և կարճելու ընթացակարգի,
- դատաքննության կազմակերպման, փաստական հանգամանքների ապացուցման,
- գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և այդ ակտերից բխող իրավական հետևանքների և բողոքարկելիության (բողոքարկելի կամ բողոքարկման ոչ ենթակա) առանձնահատկության»:

Վերոհիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ հատուկ վարույթի շրջանակներում վարչաարդարատական ընդհանուր կանոններից տարբեր՝ առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսելը կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրու-

թյամբ նախատեսված (61-րդ հոդվածի 1-ին մաս, 75-րդ հոդված)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման կազմակերպական և ընթացակարգային ընդհանուր սկզբունքների իրացումը, միտված է արագ, արդյունավետ արդարադատության իրականացմանը, հանրային իրավական նշանակության հրատապ հարցերի լուծմանն ու անձանց Սահմանադրությամբ ու օրենքով ամրագրված իրավունքների պաշտպանությանը:

Սույն գործով քննության առարկայի համատեքստում Սահմանադրական դատարանը նաև հարկ է համարում վկայակոչել Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ 2016 թվականի հուլիսի 28-ի N 190/2002 եզրակացությամբ (CDL-AD (2002)023rev2) ամրագրված այն դիրքորոշումը, ըստ որի՝ բողոքարկման (ընտրական օրենսդրության խախտման փաստերի արտադատական և դատական բողոքարկման) ընթացակարգը պետք է առավելագույն սեղմ ժամկետում լինի՝ հատկապես ընտրությունների նախօրյակին ընդունվող որոշումների բողոքարկման մասով: Հիշյալ եզրակացությամբ ամրագրված է նաև, որ **նախ**՝ բողոքարկման ընթացակարգը չպետք է արգելակի ընտրական գործընթացը, **երկրորդ**՝ քանի որ բողոքարկման արդյունքում ընդունված որոշումները չեն կարող ընտրությունների ամսաթվի տեղափոխման հիմք հանդիսանալ՝ այդ որոշումները պետք է ընդունվեն ոչ թե ընտրություններից հետո, այլ ընտրություններից առաջ: Ընտրությունների արդյունքների բողոքարկման ժամկետները պետք է շատ սեղմ լինեն, և բողոքարկման գործընթացի արդյունքում ընդունված որոշումները պետք է հնարավոր չափ օպերատիվ կերպով ընդունվեն: Մինևույն ժամանակ, ընդգծվում է, որ բողոքարկման ժամկետները պետք է բավարար լինեն, որպեսզի հնարավոր լինի բողոքարկումը, երաշխավորվի պաշտպանության իրավունքի իրացումը և հնարավոր լինի ընդունել ծանրակշիռ որոշում:

Հաշվի առնելով վերոշարադրյալ մոտեցումներն ու դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է այն հանգամանքը, որ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով օրենսդիրը, ընտրական գործընթացի ժամանակային սահմանափակումների առանձնահատկություններից ելնելով, վարչական դատարանին առաջադրել է արագ (սեղմ ժամկետներում), գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու իրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից անշրջելի՝ անբողոքարկելի լինելով հանդերձ, կերաշխավորի նաև անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը,

- անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում որպես անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիք օրենսդիրը դիտարկել է առանձին գործերի քննության և լուծման համար **վարչական դատարանի կոլեգիալ կազմ** (մասնավորապես՝ 5 դատավորի կազմով՝ Օրենսգրքի 196, 208-րդ հոդվածներ, 3 դատավորի կազմով՝ 203-րդ հոդված),

- Օրենսգրքի 208-րդ հոդվածում 5 դատավորի կազմով քննության են ենթակա հատկապես այն գործերը, որոնք առնչվում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված վերջնական որոշումներին /որոնք Մահմանադրական դատարանում բողոքարկելի չեն/, այլև ողջ ընտրական համակարգին առնչվող այնպիսի իրավունքների պաշտպանությանը, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն ընտրական գործընթացի անխափան իրականացման և ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման տեսանկյունից: Դրանց թվին են դասվում, մասնավորապես, թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Նկատի ունենալով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության բարձրացման անհրաժեշտությունը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական դատարանին կարևորագույն դերակատարություն է վերապահված ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցում, Մահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վերոնշյալ օրենսդրական կարգավորումները դեռևս անհրաժեշտ ներդաշնակություն չեն երաշխավորել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումների առումով:

8. Անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում մարդու դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքների համատեքստում կարևորելով առանձին ընտրական գործերի կոլեգիալ քննության և լուծման կարգի նախատեսումը՝ Մահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վերջինս, ի թիվս այլնի, միտված է նվազեցնել ընտրական գործերի քննության ժամանակ հնարավոր սուբյեկտիվիզմի տարատեսակ դրսևորումները, նպաստել արդարադատության շահերի պաշտպանությանը և բացառել հնարավոր դատական սխալները:

Օրենսգրքի՝ «Ընտրական գործի ընդդատությունը և վարչական դատարանի կազմը» վերտառությամբ 208-րդ հոդվածի վերլուծությունը վկայում

է, որ օրենսդիրը գործերի քննության և լուծման կոլեգիալ կարգ սահմանել է, ինչպես նշվեց, ընտրական գործընթացի կազմակերպմանն ու իրավա-նացմանն առնչվող մի շարք կարևոր հանգամանքների առումով: Մինչդեռ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության պատշաճ մակարդակի, ընտրությունների օրինականության ապահովման, ընտրա-կան իրավունքների պաշտպանության համար պակաս կարևոր չեն ընտ-րական գործընթացներին առնչվող նաև այլ գործեր, որոնք քննվում և լուծվում են միանձնյա կարգով:

ՀՀ ընտրական օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը հատուկ կարևորել է ընտրությունների անցկացման և ամփոփման փուլերում կայացված առանձին որոշումների և համապա-տասխան մարմինների գործողությունների արդյունքում ընդունված իրա-վական փաստաթղթերի նշանակությունն ընտրությունների արդյունք-ների ամփոփման գործընթացում: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովում Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը» վերտա-ռությամբ 75-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանա-գրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշում-ները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյան-ներում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկու-թյան արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների ար-դյունքների վերաբերյալ:

Կարևորելով ընտրությունների անցկացման և ամփոփման փուլերում կայացված առանձին որոշումների և համապատասխան մարմինների գործողությունների արդյունքում ընդունված իրավական փաստաթղթերի առանցքային դերն ընտրությունների արդյունքների ամփոփման գործ-ընթացում ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշմամբ ամրագրել է, որ «ՀՀ սահմա-նադրական դատարանն իր որոշումներում (մասնավորապես ՍԴՈ-1028) նաև բազմիցս շեշտել ու ընտրական գործընթացին մասնակից իրավա-սուբյեկտներին պարզաբանել է, որ՝ ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփո-խություններով) գործող 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, «Սահմանադրա-կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշման հետ կապված վեճերով

Սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյո՞ք տվյալ որոշման ընդունման ժամանակ իրավական անհրաժեշտ հիմնավորմամբ են առկա եղել ու հաշվի առնվել.

ա) քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ) իրավասու դատարանների՝ ընտրական գործընթացին առնչվող ակտերը,

գ) ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,

դ) **տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,**

ե) քվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների ընդունված որոշումները»:

Սույն գործում առկա դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ թիվ ՎԴ/3108/05/17 վարչական գործի շրջանակներում քննության առարկա են հանդիսացել թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի ու թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովին դիտորդի գնահատականը գրանցամատյանում արձանագրելուն պարտավորեցնելու և թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 7-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջները: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովին՝ դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջի ինչպես արտադատական, այնպես էլ դատական քննությունը և քննության շրջանակներում պատշաճ դատավարական երաշխիքների ապահովումն անմիջականորեն առնչվում են **տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների՝** որպես ընտրության արդյունքներն ամփոփելու համար նախատեսված հիմքին:

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս է անդրադարձել ընտրական գործընթացում գրանցամատյանների վարման կարևորությանը, ինչը, սակայն, դեռևս պատշաճ մակարդակով չի իրականացվում: Սույն գործի նյութերը վկայում են, որ խնդրի լուծումը ոչ միայն իրավակիրառական պրակտիկայում առկա թերացումների հաղթահարմամբ է պայմանավորված, այլև առանձին օրենսդրական լուծումների վերանայում է պահանջում: Վերջինս հատկապես վերաբերում է ընտրական վեճերով անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում մարդու դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք հանդիսացող գործերի կոլեգիալ քննության կարգի օրենսդրական ամրա-

գրման բացակայությանը՝ այն դեպքերում, երբ դատարանի կողմից քննվում են ընտրական իրավունքի պաշտպանության և ընտրությունների արդյունքների ամփոփման ոլորտին վերաբերող առանցքային հարցեր:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրությունների արդյունքների ամփոփման համար հիմք հանդիսացող իրավական փաստաթղթերի և/կամ ակտերի, **այդ թվում՝ նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումներն արձանագրելու վերաբերյալ ծագած ընտրական վեճերի** քննության և լուծման ժամանակ օրենսդրի կողմից պետք է երաշխավորվեն անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում անձի դատական պաշտպանության արդյունավետ իրացման երաշխիքները, **մասնավորապես գործերի կոլեզիալ քննության կարգի ամրագրումը:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման շրջանակներում:

Անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությունից ելնելով պետք է ապահովվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար հիմք հանդիսացող իրավական ակտերի և փաստաթղթերի /այդ թվում՝ գրանցամատյանների/ առնչությամբ ծագող ընտրական վեճերի **կոլեզիալ կարգով քննությունը**՝ օրենսդրորեն անհրաժեշտ ներդաշնակություն ապահովելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի և ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումների միջև:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 դեկտեմբերի 2017 թվականի
ՍԴՈ-1395



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
8-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 դեկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Լ. Հակոբյանի և Վ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
103

հողվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ ընտրական օրենսգիրքը, լրագրողների հավատարմագրման հետ կապված հարաբերություններ կարգավորող օրենսդրության այլ ակտեր և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ ընտրական օրենսգիրքը (սահմանադրական օրենք) (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 2016 թվականի մայիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին:

Օրենսգրքի՝ «Դիտորդների և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների հավատարմագրումը, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների և այցելուների վկայականների տրամադրումը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները սահմանում են.

«8. Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի ներկայացուցիչները (այսուհետ՝ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներ) քվեարկության օրը կարող են իրականացնել ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է հավատարմագրել իր ներկայացուցիչներին, եթե առնվազն մեկ տարի իր անունից տարածում է լրատվության միջոց: Մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ:

Հավատարմագրվելու դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ: Յուրաքանչյուր լրատվական գործունեություն իրականացնող կարող է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրել իր անունից տարածվող միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների»:

Օրենսգրքի 31-րդ հոդվածում կատարվել է լրացում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-158-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 20-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի հոկտեմբերի 29-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 14-ին: Օրենսգրքի հիշյալ հոդվածի՝ վեճի առարկա նորմերը փոփոխության չեն ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2017 թվականի մարտի 9-ին սույն գործով դիմողը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմում է ներկայացրել, համաձայն որի՝ ինդրել է 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունները լուսաբանելու նպատակով որպես զանգվածային լրատվության միջոցներ հավատարմագրել դիմողի կողմից հիմնադրված և տարածվող երկու զանգվածային լրատվամիջոցների՝ «Ասպարեզ» օրաթերթը, asparez.am լրատվական կայքը և նրանց ներկայացուցիչներին՝ ընդհանուր թվով 1000 հոգի: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.03.2017թ. թիվ 90-Ա որոշմամբ դիմողի հիշյալ դիմումը մերժվել է հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները: Դիմողը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ընդունել վերոհիշյալ դիմումը բավարարող բարենպաստ վարչական ակտ: ՀՀ վարչական դատարանը 29.03.2017թ. մերժել է դիմողի հայցը, որպիսի որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի պահանջների հղումով, հրապարակման պահից ուժի մեջ է մտել:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 2, 3, 5, 7, 29, 42, 78, 80 և 81-րդ հոդվածներին՝ հանգեցնելով դիմողի «...արտահայտվելու inter alia տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության իրավունքի խախտմանը»: Մասնավորապես, ըստ դիմողի, «...Որևէ հիմնավոր պատճառաբանության և անհրաժեշտության բացակայության պայմաններում զանգվածային լրատվության միջոցների և նրանց ներկայացուցիչների նկատմամբ սահմանափակումները հատկապես ընտրական գործընթացներում թեև սահմանված են օրենքով (ՀՀ ընտրական օրենսգրքով), սակայն չեն հետապնդում իրավաչափ նպատակ, անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում և չեն բխում հանրային շահից»: Մասնավորապես, ըստ դիմողի՝ «... ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված սահմանափակումը մեկ իրավաբանական անձի անունից տարածվող մեկից ավելի զանգվածային լրատվության միջոցի և դրա 50-ից ավելի ներկայացուցիչների ընտրական գործընթացը

քվեարկության սենյակում դիտարկելու և լուսաբանելու համար հավատարմագրելու արգելքը, ինչպես նաև ԿԸՀ-ի և Վարչական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի ... 10-րդ հոդվածի անմիջական գործողությունը չապահովելը հանգեցրել է դիմողի ՀՀ Սահմանադրության 42-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներով սահմանված իրավունքների խախտման»:

Հղումներ կատարելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նորմերին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային, ինչպես նաև Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ դիմողը եզրակացնում է, որ լրատվամիջոցներն ու լրագրողներն ընտրական գործընթացներում որոշակի զսպող և հակակշռող ազդեցություն են ունենում ընտրական հանձնաժողովների և ընտրությանը մասնակցող քաղաքական ուժերի և նրանց ներկայացուցիչների նկատմամբ, ապահովում են հանրության տեղեկաց-վածությունը, դրանով որոշակի վերաբերմունքի ձևավորմանն ընտրական գործընթացի, ընտրությունների արդյունքների և ապագա իշխանության նկատմամբ, ուստի «բացակայում է որևէ հիմնավոր պատճառաբանություն և անհրաժեշտություն զանգվածային լրատվության միջոցների և նրանց ներկայացուցիչների նկատմամբ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումների համար ... և դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ, ... չեն բխում հանրային շահից»: Ըստ դիմող կողմի «...Եթե նույնիսկ ... ՀՀ ընտրական օրենսգրքի 38-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված խնդրո առարկա սահմանափակումների նպատակը քվեարկության բնականոն ընթացքի ապահովումն է քվեարկության սենյակներում մեծ թվով ՁԼՍ ներկայացուցիչների կենտրոնացում չթույլատրելու միջոցով, ապա այդ նպատակի համար ընտրված միջոցը համաչափ չէ, քանի որ այդ նպատակի՝ քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված են այլ միջոցներ», և, ինչպես գտնում է դիմող կողմը, նման իրավակարգավորումների պայմաններում «...առավել քան ակնհայտ է դառնում զանգվածային լրատվության միջոցների և նրանց ներկայացուցիչների հավատարմագրման վիճարկվող սահմանափակումների որևէ (նույնիսկ ենթադրյալ) իրավաչափ նպատակ չհետապնդելու հանգամանքը և հետևաբար ոչ իրավաչափությունը և սահմանափակման անհամաչափությունը»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին՝ հետևյալ հիմնավորումներով:

Ըստ պատասխանողի՝ պետությունն իր առջև խնդիր է դրել հավասարակշռել խոսքի ազատության իրավունքի և դրան առնչվող «...մի շարք այլ իրավունքների երկուստեք պաշտպանվածության նախադրյալները՝ մի կողմից, և այդ իրավունքների՝ ի շահ ժողովրդավարական հասարակության, լիարժեք իրացման հնարավորությունների ապահովումը՝ մյուս կողմից»: Քննության առարկա հիմնախնդրի կապակցությամբ օրենսդրի դրանորս մոտեցումը, ըստ պատասխանողի, «...լիովին տեղավորվում է այն տրամաբանության մեջ, որ մի շարք պետական մարմիններ, իրենց գործառույթների առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող ապահովել ինչպես անսահմանափակ քանակով լրագրողների ֆիզիկական մուտքն ու ներկայությունը համապատասխան մարմնում, այնպես էլ նման պայմաններում նրանց համար նպաստավոր ու արդյունավետ աշխատանքային պայմանների ստեղծումը՝ մասնագիտական գործունեության լիարժեք իրականացման համար», և որ «...լրագրողների կողմից ընտրական գործընթացների լուսաբանման իրավունքի ամրագրումը չպետք է կրի հոչակագրային բնույթ, այլ պետք է սահմանվեն այնպիսի կարգավորումներ, որոնք կապահովեն և՛ լրագրողական հանրության լայն ընդգրկվածությունն այդ գործընթացներում, և միաժամանակ կբացառեն ընտրական բնականոն պրոցեսի ցանկացած խաթարում՝ պայմանավորված լրագրողների քանակի, հաճախ՝ լրագրող չհանդիսացող, սակայն որպես այդպիսին ներկայացող անձանց ներկայությամբ և անհարկի ակտիվությամբ»:

Ըստ պատասխանող կողմի՝ ընտրական օրենսգրքի նախագծի մշակման փուլում վիճարկվող դրույթները հանդիսացել են նախագծի հեղինակների և լրագրողական հանրության համատեղ քննարկումների առարկա, և որ «...լրագրողների հավատարմագրման՝ ընտրական օրենսգրքին նախկինում անհայտ ինստիտուտի ներդրման հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում այն, որ մի շարք լրատվամիջոցներ նախորդ ընտրությունների ժամանակ լրագրողական տարբերանշաններ են տրամադրել լրագրող չհանդիսացող անձանց, ինչը գործնականում խոչընդոտներ է ստեղծել ընտրական գործընթացի բնականոն իրականացման տեսանկյունից»: Պատասխանող կողմի դիրքորոշման համաձայն՝ «Պրակտիկայում առաջացած խնդիրներին լուծում տալու և ընտրական գործընթացներն անհարկի բարդություններից բեռնաթափելու նպատակով պետությունն իր կարգավորիչ գործառույթի իրականացման միջոցով նախատեսել է որոշակի լուծումներ, որոնք, ապահովելով ընտրությունների թափանցիկությունն ու լիարժեք լուսաբանման հնարավորությունը, միաժամանակ կբացառեն խոսքի ազատության իրավունքի և լրատվամիջոցների՝ ժողովրդավարական հասարակության համար ունեցած դերի չարաշահման դեպքերը»: Պատասխանող կողմի համոզմամբ,

վիճարկվող դրույթների կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերություններն «ամեննին չեն տուժում ներդրված սահմանափակումների արդյունքում», քանի որ դրանք, ըստ էության, վերաբերում են «լրատվական գործունեություն իրականացնող մեկ սուբյեկտի կողմից իր անունից տարածվող միայն մեկ լրատվամիջոց հավատարմագրելուն և դրա ներկայացուցիչների առավելագույն քանակ նախատեսելուն, այլ ոչ թե ընդհանրապես ԿԸՀ-ում հավատարմագրման ենթակա լրատվամիջոցների առավելագույն քանակին»: Պատասխանող կողմը նաև կարծում է, որ վիճարկվող իրավակարգավորմամբ պաշտպանվող արժեքն ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացի «հնարավորինս հարթ ու անխոչընդոտ իրականացումն է, իսկ սահմանափակումները վերաբերում են ընդամենն այդ գործընթացների լուսաբանման կազմակերպմանը»:

5. Ելնելով դիմումում ներկայացված հարցի և այն հիմնավորող փաստարկների իրավական բովանդակությունից Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմող կողմն ըստ էության բարձրացնում է երկու հիմնախնդիր՝ կապված.

- ընտրություններում լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այսուհետ՝ լրագրող) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրման կառուցակարգի հետ,

- իր անունից տարածվող միայն մեկ զանգվածային լրատվության միջոցի և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրելու թվական սահմանափակման հետ:

Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեճի առարկա իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս պարզել.

- ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում նախատեսված՝ տեղեկատվության ազատության և վերջինս՝ բացառապես սահմանադրաիրավական նպատակներով սահմանափակելու իրավական պահանջի երաշխավորվածությունը,

- քվեարկության օրն ընտրական գործընթացներին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի իրացման և դրա հնարավոր սահմանափակման շրջանակներում՝ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովումը,

- տեղեկատվության ազատության և տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման վերաբերյալ Սահ-

մանադրության 75-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքների երաշխավորվածությունը:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ոչ միայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ վեճի առարկա նորմերի, այլև ՀՀ օրենսդրության համապատասխան այլ ակտերի («Ձանգվածային լրատվության մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներ, «Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, հավատարմագրման համար ներկայացվող զանգվածային լրատվության միջոցի հավատարմագրվող ներկայացուցիչների ցուցակի էլեկտրոնային ձևը և ներկայացման կարգը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների վկայականի ձևը և լրացման կարգը սահմանելու մասին» 2016թ. նոյեմբերի 9-ի N 120-Ն որոշում (այսուհետ՝ ՀՀ ԿԸՀ-ի 2016թ. նոյեմբերի 9-ի N 120-Ն որոշում) նորմերի իրավական բովանդակությունը՝ դիտարկելով դրանք համակարգային ամբողջականության շրջանակներում:

6. Արտահայտվելու ազատությունը և այն իրացնելու հիմնական միջոցների երաշխավորումը, որպես ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման կարևոր նախապայման, ունեն ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրաիրավական սկզբունքային նշանակություն: Այդ ազատությունը, որպես մարդու անօտարելի հիմնական իրավունք, երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 42 և 51-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու, առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ (այդ թվում՝ հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին, նաև՝ փաստաթղթերին ծանոթանալու միջոցով) ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն:

Արտահայտվելու ազատությունը (ներառյալ՝ կարծիքի, առանց պետական մարմինների միջամտության տեղեկատվության ու գաղափարներ փնտրելու, դրանք լրատվության ցանկացած միջոցով ստանալու և տարածելու ազատությունը) երաշխավորված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (19-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (10-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով կից կամընտիր արձանագրությամբ (19-րդ հոդված):

Միջազգային պայմանագրային վերոհիշյալ պարտականություններից բացի, արտահայտվելու ազատության երաշխավորման միջազգային և տարածաշրջանային համապատասխան չափորոշիչներ են սահմանված ԵԱՀԿ շրջանակներում ստանձնված հանձնառություններում (օր.՝ ԵԱՀԿ Մարդկային չափանիշի խորհրդածողովի Մոսկվայի և Կոպենհագենի խորհրդակցությունների համապատասխանաբար՝ 3.10. 1991թ. և 29.06. 1999թ. ընդունված փաստաթղթերը), Եվրոպայի խորհրդի քաղաքական մարմինների կողմից ընդունված հանձնարարականներում (օրինակ՝ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ Լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզարշավի լուսաբանման հետ կապված միջոցների մասին թիվ R 99(15) հանձնարարականի՝ վերանայված թիվ CM/Rec(2007)15 հանձնարարական), խոսքի ազատության բնագավառում ընդունելի չափորոշիչների հեղինակային մեկնաբանություններ տրամադրող փորձագիտական մարմինների խորհրդատվություններում և մեկնաբանություններում (օրինակ՝ Մարդու իրավունքների խորհուրդ և այլն):

Միաժամանակ, արտահայտվելու ազատությունն ինչպես միջազգային իրավական վերոհիշյալ փաստաթղթերով, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով և օրենքով սահմանված կարգով ենթակա է սահմանափակման պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության (հանրային շահերի) կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Պետության առջև է դրված տեղեկատվական միջոցների ազատությունն ապահովելու պարտականությունը (Սահմ. 42-րդ հոդվածի 2-րդ մաս), և որպես այն իրացնելու երաշխիք՝ օրենքով սահմանված կարգով են կարգավորվում տեղեկություններ ստանալու, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը (Սահմ. 51-րդ հոդվածի 3-րդ կետ):

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է:

Բացահայտելով արտահայտվելու ազատության սահմանադրաիրավական բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով կարևորել է այդ ազատության երաշխավորումը ոչ միայն անձի սուբյեկտիվ իրավունքների իրացման, այլև **հանրային իրավական հարաբերությունների կարգավորման շրջանակներում**, մասնավորապես, Սահմանադրական դատարանը գտել է, որ.

- «...Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը» (ՄԴՈ-1010, 06.03.2012թ.),

«...Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դաշնագիրը և միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարևոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը: Մակայն, դա չի խոչընդոտում այս ոլորտում ... հասարակության և պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը» (ՄԴՈ – 278, 11.01.2001թ.):

Հաշվի առնելով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման առանձնահատկությունը՝ հատկապես հանրային իրավական բնույթի հարաբերություններում, նկատի ունենալով, որ ընտրություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման հետ կապված իրավահարաբերություններն ուղղակի առնչվում են ինչպես զանգվածային լրատվության միջոցների և վերջիններիս ներկայացուցիչների, այնպես էլ հավատարմագրումն իրականացնող պետական մարմնի՝ օրենքով նախատեսված իրավունքների ու պարտականությունների հետ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական վերոհիշյալ դիրքորոշումները սույն գործով կիրառելի են և դիտարկելի՝ վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականության գնահատման համատեքստում:

7. Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում դիմող կողմի հարցադրմանը՝ կապված Կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման գործող կառուցակարգի հետ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին խնդիրը դիտարկել:

- իրավական ընդհանուր կանոնակարգման շրջանակներում՝ ելնելով հավատարմագրման, որպես պետության և հավատարմագրվող սուբյեկտի միջև ծագող հարաբերությունների կարգավորման գործընթացի օրենսդրական (այդ թվում՝ միջազգային իրավական) կարգավորումների էությունից ու բովանդակությունից,

- այն առանձնահատկությունների շրջանակներում, որպիսիք նախատեսված են ընտրական գործընթացների առնչությամբ լրագրողների հավատարմագրման նորմատիվ կանոնակարգումներից:

Պետական հավատարմագրման բնագավառում հարաբերությունները կարգավորող օրենսդրության ակտերի և ձևավորված միջազգային իրավական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հավատարմագրումը (լատ. accredo, վստահել) որպես պետության և որոշակի գործունեություն իրականացնող սուբյեկտի միջև ծագած հարաբերությունները կարգավորող ինստիտուտ, **իրավական գործընթաց է**, որի նպատակը հավատարմագրմանը հավակնող սուբյեկտի որոշակի չափանիշներով գործունեություն (ծառայությունների մատուցում) իրականացնելու նրա կարողության գնահատումն է պետական լիազոր մարմնի կողմից, և այդ կարողությունը հաստատող համապատասխան հավաստագրի (վկայականի) տրամադրումն է կամ հավաստագրման մերժումը: Հավաստագրի տրամադրման արդյունքում հավատարմագրմանը հավակնողը տվյալ գործունեությունից բխող հարաբերությունների շրջանակում ձեռք է բերում իրավասուբյեկտի կարգավիճակ, որն անհրաժեշտ է նորմատիվ ակտի հիման վրա իր և պետական լիազոր մարմնի միջև փոխադարձության սկզբունքով սահմանված իրավունքների ու պարտականությունների իրացման համար: Հավատարմագրման ընդհանուր նպատակը ոչ թե հավատարմագրված սուբյեկտի գործունեության սահմանափակումն է, այլ

- տվյալ իրավասուբյեկտի կողմից որոշակի տեսակի գործունեություն իրականացնելու (ծառայություններ մատուցելու) իրավասությունը հավաստելն է,

- հավատարմագրման ենթակա գործունեությունը (մատուցվող ծառայությունը) նորմատիվ ակտով կանխորոշված շրջանակներում իր նպատակին ծառայեցնելը,

- հավատարմագրված իրավասուբյեկտի գործունեությանը ոչ իրավաչափ ներգործությունից պաշտպանելն ու այդ գործունեության արդյունքների պաշտոնական ճանաչման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելն ու երաշխավորելն է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոշարադրյալ համանման իրավական ընդհանուր նպատակներ են հետապնդում նաև վեճի առարկա իրավակարգավորումը սահմանող և դրա հետ փոխկապակցված օրենսդրության այլ նորմերը, մասնավորապես համադրելով ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի նորմերը վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված օրենսգրքի այլ նորմերի, ինչպես նաև «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԿԸՀ-ի 2016թ. նոյեմբերի 9-ի N 120-Ն

որոշման համապատասխան նորմատիվ կարգավորումների հետ, առանձնացնելով սույն գործով քննության առարկա իրավակարգավորման սահմանադրաիրավական գնահատման հիմքում կարևորելի հետևյալ հիմնական սկզբունքները և դրանց համապատասխան կարգավորումները, որոնց համաձայն.

- պետական մարմինը պարտավոր է օրենքին և տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, սահմանված ժամկետում հավատարմագրել լրագրողին,

- հավատարմագրված բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող և ոչ խտրական՝ ողջամտության սահմաններում («Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մաս),

- լրատվական գործունեություն իրականացնողի կողմից այդ գործունեության իրականացումն օրենքի պահանջների խախտմամբ առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն («Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս):

Ինչ վերաբերում է **ընտրական գործընթացների շրջանակներում** լրագրողների հավատարմագրման վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումներին, ապա.

- ընտրություններում քվեարկության օրը զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչները կարող են իրականացնել ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո և գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության, հրապարակայնության, մատչելիության սկզբունքների հիման վրա: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մաս, 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր),

- լրագրողի հավատարմագրումն ընտրական գործընթացներում նպատակ ունի ապահովել խոսքի ազատության իրավունքի իրացման անհրաժեշտ երաշխիքներ և բարենպաստ պայմաններ, ինչպես նաև անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել հավատարմագրված լրագրողի՝ որպես իրավասուբյեկտի համար, ստանձնելու և իրացնելու Օրենսգրքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ իր իրավունքներն ու պարտականությունները, մասնավորապես, սահմանված կարգով

1) ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում, հետևելու քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին,

2) ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում,

3) հրապարակայնորեն հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

Միաժամանակ.

- զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ և այլն (Օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մաս),

- արգելված է զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի՝ Օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում (Օրենսգրքի 32-րդ հոդվածի 5-րդ մաս),

- ինքնին, հավատարմագրման գործընթացն իրականացվում է կամավորության, հրապարակայնության, կիրառվող կանոնների մատչելիության և արդյունքում ընդունվող որոշումների բողոքարկելիության սկզբունքներով:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրություններում լրագրողների հավատարմագրման գործընթացի կանոնակարգման միջազգային փորձի ուսումնասիրումը նույնպես վկայում է, որ այդ գործընթացն իր հանրային իրավական ըմբռնմամբ և բովանդակությամբ պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, մասնավորապես.

- «...հավատարմագրման համակարգերը թույլատրելի են միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ են լրագրողներին որոշակի վայրերում (միջոցառումներում) լուսաբանելու հնարավորություն տրամադրելու համար: Այսպիսի համակարգերը պետք է կիրառվեն ոչ խտրական ձևով և համապատասխանեն 19-րդ հոդվածին և դաշնագրի այլ դրույթներին, հիմնվելով օբյեկտիվ չափանիշների վրա և հաշվի առնելով, որ լրագրությունը բազմաթիվ դերակատարների կողմից իրականացվող գործառույթ է» (Մարդու իրավունքների խորհրդի թիվ 34 «Ընդհանուր մեկնաբանություն», Հոդված 19, «Կարծիքի և արտահայտվելու ազատություն» (<http://www2.ohchr.org/english/bodies/hrc/-docs/gc34.pdf>),

- «...հավատարմագրումը չպետք է կիրառվի որպես լրագրողի համար աշխատանքի թույլտվություն, այն պետք է օգտագործվի նրա աշխատանքը հեշտացնելու նպատակով»: ... «Հավատարմագրումը չպետք է պատճառ հանդիսանա, որի հիման վրա պետական մարմինները որոշում են կայացնում կոնկրետ լրագրողին այս կամ այն հանրային միջոցառումը այցելելու և լուսաբանելու թույլտվություն տալու կամ չտալու վերաբերյալ», ... «հաճախ հանդիպում են հավատարմագրման համակարգի թյուր ըմբռնումներ, որոնց համաձայն այն ունի «թույլատրող» գործառույթ, այսինքն՝ կառավարությունը կամ այլ կարգավորող մարմինը իրավունք ունի լրատվամիջոցին տրամադրել, մերժել կամ հետ կանչել հավատարմագրումը: Հավատարմագրման առումով կիրառելով նույն կանոնները, որոնք գործում են աշխատանքի թույլատրման համար, կառավարությունը իրականացնում է ոչ տեղին վերահսկողություն լրագրողների նկատմամբ», ... «հավատարմագրման չտրամադրման դեպքում պետք է սահմանվի բողոքարկման իրավունք» (ԵԱՀԿ, Լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցչի զեկույց, «Լրագրողների հավատարմագրումը ԵԱՀԿ տարածաշրջանում», «Դիտարկումներ և հանձնարարականներ», 25 հոկտեմբերի 2006թ., <http://www.osce.org-ru/fom/22066?download=true>):

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրություններում լրագրողների հավատարմագրման կառուցակարգը իր վերոհիշյալ իրավական ընդհանուր նպատակներով և դրան համապատասխան իրավակարգավորումներով, սահմանադրականության խնդիր հարուցել չի կարող, քանի որ բովանդակում է անհրաժեշտ երաշխիքներ՝ ապահովելու Սահմանադրության 51-րդ հոդվածով երաշխավորված տեղեկություններ ստանալու անձանց սահմանադրական իրավունքի իրացմանը և, մյուս կողմից՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված տեղեկատվական միջոցների ազատության ապահովմանը: Հետևաբար, ընտրություններում լրագրողների հավատարմագրման Օրենսգրքով սահմանված կառուցակարգը սույն որոշման 7-րդ կետում արձանագրված իր **ընդհանուր նպատակներով և դրանց համապատասխան՝ վերոհիշյալ կոնկրետ իրավակարգավորումներով** հետապնդում է իրավաչափ նպատակ և բխում է ժողովրդավարական հասարակության շահերից:

9. Անդրադառնալով լրագրողների հավատարմագրման գործընթացի՝ քննության առարկա իրավակարգավորումներով նախատեսված սահմանափակումներին և, հատկապես՝ նկատի ունենալով դիմող և պատասխանող կողմերի համապատասխան փաստարկները, միաժամանակ, համադրելով վիճարկվող և Օրենսգրքի՝ դրանց հետ փոխկապակցված նորմերը՝ լրագրողների հավատարմագրման հետ կապված հարաբերությունները

կարգավորող ՀՀ օրենսդրության համապատասխան այլ նորմերի հետ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ սահմանափակումները դիտարկել Սահմանադրությամբ նախանշված դրանց թույլատրելիության շրջանակներում, նկատի առնելով հատկապես խոսքի ազատության իրավունքի արդյունավետ իրացման երաշխավորման տեսանկյունից դրանց կարևոր ազդեցությունը:

Այս առումով Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման և դրանց սահմանադրաիրավական հնարավոր հետևանքների՝ ՀՀ Սահմանադրության 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներով կանխորոշված չափորոշիչները:

Լրագրողների հավատարմագրման գործընթացում հնարավոր սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական չափորոշիչների հետ համադրելիության տեսանկյունից **սկզբունքային նորմեր** են նախատեսված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, համաձայն որոնց՝ հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք՝

1) կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը՝ մասնակցելու տվյալ մարմնի, դրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ դրանց դոնփակ լինելու դեպքերի.

2) կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների՝ ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը.

3) անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար.

4) կսահմանափակեն լրագրողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու՝ օրենքով սահմանված իրավունքները:

Այդպիսով, ըստ իրենց իրավական բովանդակության՝ վերոհիշյալ նորմերով օրենսդիրը լրագրողների հավատարմագրման գործընթացում թույլատրելի համարելով հնարավոր սահմանափակումները, նախատեսել է դրանց կիրառման սահմանները, որպիսիք կոչված են անհրաժեշտ իրավական պայմաններ ստեղծելու լրագրողական գործունեության շրջանակներում Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու և տեղեկատվական միջոցների ազատության իրացման համար: Հետևաբար, այդ սահմանափակումները, հետապնդելով իրավաչափ նպատակ, բխում են Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներով նախանշված սկզբունքներից:

Միաժամանակ, Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից են բխում լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրեն-

քի 6-րդ հոդվածի 3-րդ մասում, 8-րդ հոդվածում նախատեսված սահմանափակումները պայմանավորված մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու հետ, բացառությամբ՝ եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

Համադրելով լրագրողների հավատարմագրման իրավակարգավորումներ նախատեսող «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ընտրական օրենսգրքի, այդ թվում՝ նաև վիճարկվող նորմերը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա են իրարամերժ իրավակարգավորումներ, որոնց համաձայն՝

ա/ պետական մարմինը պարտավոր է տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, **հնգօրյա ժամկետում** հավատարմագրել լրագրողին («Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս), մինչդեռ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներին տրվող վկայականներն այդ զանգվածային լրատվության միջոցին է հանձնում դիմումն ստանալուց հետո՝ **12 օրվա ընթացքում**: Համանման նորմ է սահմանված Օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերությունում, համաձայն որի՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներին տրվող վկայականներն այդ զանգվածային լրատվության միջոցին է հանձնում դիմումն ստանալուց հետո՝ **12 օրվա ընթացքում**»,

բ/ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում սահմանվում են.

1) լրատվության միջոցին ներկայացվող այն պահանջները (լրատվության միջոցի տեսակը, տարածման տարածքը, մամուլի տպաքանակը և այլն), որոնց պարագայում հավատարմագրվում է նրա լրագրողը.

2) հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում՝ նրա աշխատանքի արդյունավետության ապահովմանն ուղղված պայմանները.

3) տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները:

Այսինքն, լրագրողների հավատարմագրման գործընթացի իրավակարգավորման (լրագրողների հավատարմագրման կարգի) շրջանակներում հիշյալ օրենքով նախատեսված չէ լրագրողների կամ զանգվածային լրատվության միջոցի թվական որևէ սահմանափակում, մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի՝ վիճարկվող նորմերի համաձայն՝ յուրաքանչյուր լրատվական գործունեություն իրականացնող կարող է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրել իր

անունից տարածվող միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչներ (բառացի նույնաբովանդակ նորմ է պարունակում նաև ՀՀ ԿԸՀ-ի 2016թ. նոյեմբերի 9-ի N 120Ն որոշման 5-րդ կետը):

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Օրենսգրքի հիշյալ հոդվածը, բացի լրագրողներից, չի նախատեսում **դիտորդների, այցելուների** առավելագույն թվաքանակի որևէ սահմանափակում, նկատի չառնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հավատարմագրված լրագրողները, դիտորդները և այցելուները, որպես իրավասուբյեկտներ, կրում են առավելապես նույնաբովանդակ իրավունքներ ու պարտականություններ (Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր), և որ Օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դիտորդների ու լրագրողների՝ քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու առավելագույն թվաքանակը տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշմամբ կարող է կրճատվել՝ քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու շարժառիթներով: Ընդ որում, վերոհիշյալ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ «...այդ սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա»:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար և պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Միաժամանակ, հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների **հիմքերը** (Սահմ. 79-րդ հոդված): Սույն գործով պատասխանող կողմի ներկայացրած փաստարկներում իրավական որևէ հիմնավորում առկա չէ Օրենսգրքի 31-րդ հոդվածի՝ վեճի առարկա նորմերում նախատեսված հավատարմագրման գործընթացում զանգվածային լրատվության միջոցի և վերջինիս ներկայացուցիչների թվաքանակի սահմանափակման հիմքերի, դրանց որպես արտահայտվելու, տեղեկատվության միջոցների ազատության իրավունքի իրացմանն ուղղված արդունավետ ընթացակարգ հանդիսանալու վերաբերյալ (Սահմ. 75-րդ հոդված): Ըստ էության այդ սահմանափակումը, ինչպես ներկայացրել է պատասխանող կողմը, հետապնդում է կանխարգելիչ նպատակ ընտրություններում քվեարկության ժամանակ ապահովել սահմանափակ քանակով լրագրողների ֆիզիկական մուտքն ու ներկայությունը համապատասխան մարմնում, բացառել

«լրագրող չհանդիսացող, սակայն որպես այդպիսին ներկայացող անձանց ներկայությունը և անհարկի ակտիվությունը»: Ընդ որում, ինչպես փաստում է վեճի առարկա իրավակարգավորման մասնակից իրավասուբյեկտների կարգավիճակների վերը բերված համեմատական վերլուծությունը, օրենսդիրը հավատարմագրային կանոնակարգումներ սահմանելիս այդ անձանց կարգավիճակից բխող իրավունքներին ու պարտականություններին ոչ համարժեք վերաբերմունք է դրսևորել:

Նման մոտեցման պարագայում նաև հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ պարբերությամբ, 65-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով արդեն իսկ նախատեսված են ընթացակարգեր, որպիսիք կոչված են ապահովելու ընտրական հանձնաժողովների բնականոն աշխատանքը ու քվեարկության ընթացքը, որպիսի իրավապայմանը **պարտադիր և համարժեք իրավական հետևանքներ պետք է ունենա ընտրական գործընթացի մասնակից բոլոր իրավասուբյեկտների համար:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրություններում լրագրողների հավատարմագրման գործընթացում նախատեսված վերոհիշյալ սահմանափակումները սահմանադրականության տեսանկյունից չեն կարող գնահատվել որպես համարժեք սահմանափակվող այնպիսի հիմնական իրավունքների նշանակությանը, ինչպիսիք են արտահայտվելու (կարծիքի արտահայտման) և տեղեկատվական միջոցների ազատության իրավունքները: Այն չի կարող գնահատվել որպես Սահմանադրության 75-րդ հոդվածի իմաստով հիմնական իրավունքի և ազատության արդյունավետ իրականացման անհրաժեշտ կառուցակարգ, կամ պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված **որևէ նպատակի հասնելու համար** (Սահմ. 42-րդ հոդվածի 3-րդ մաս, 78-րդ հոդված): Ընտրատարածքում կամ ընտրական տեղամասում աշխատանքի անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով նման սահմանափակման նախատեսումն ամենևին լավագույն լուծումը չէ: Ելակետային մոտեցումն այն է, որ եթե լրատվամիջոցն ստեղծվել և գործում է օրենքով սահմանված կարգով, ապա նրա գործունեության նման սահմանափակումն իրավաչափ համարվել չի կարող նաև Սահմանադրության 80-րդ հոդվածի պահանջի երաշխավորման իմաստով:

Սահմանադրական դատարանն իր՝ 11.01.2001թ. ՍԴՈ-278 որոշմամբ անդրադառնալով իրավունքի սահմանափակման հիմնախնդրին՝ գտել է, որ. «...սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

- ...
 - բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից,
 - գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը»:

Սահմանադրական դատարանը վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ գտնում է, որ օրենսդիրը հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումներ նախատեսելիս պարտավոր է առաջնորդվել բացառապես սահմանադրաիրավական այն չափորոշիչներով, որպիսիք նախատեսված են Սահմանադրության 75, 76, 78, 79 և 80-րդ հոդվածներում և 81-րդ հոդվածի 2-րդ մասում:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Անդրադառնալով այդ պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենսդրի ուշադրությունը հրավիրել նաև լրագրողների հավատարմագրման եվրոպական հետևյալ չափորոշիչների կիրառման անհրաժեշտության վրա, որոնց համաձայն՝

- «...հավատարմագրումը հանդիսանում է միջոցառման բազմակողմանի լուսաբանման միջոց և չպետք է կախված լինի ոչ վերաբերելի հանգամանքներից: Հավատարմագրման հարցերը կարգավորող, թույլատրող բնույթ ունեցող օրենքները պետք է վերանայվեն բազմակարծություն ապահովելու նպատակով» (ԵԱՀԿ, «Լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցչի զեկույց», «Լրագրողների հավատարմագրումը ԵԱՀԿ տարածաշրջանում», «Դիտարկումներ և հանձնարարականներ», 25 հոկտեմբերի 2006թ.),

- «...հավատարմագրման հետ կապված ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19(3) հոդվածին և ՄԻԵԿ-ի 10(2) հոդվածին: Այս սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, այսինքն՝ այդպիսի սահմանափակումները պետք է ունենան խիստ սոցիալական անհրաժեշտություն» (ԵԱՀԿ, «Լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցչի զեկույց», «Օտարերկրյա լրագրողների հավատարմագրումը ԵԱՀԿ տարածաշրջանում», մայիս, 2016թ.),

- «...հավատարմագրման համար դիմում ներկայացրած լրատվամիջոցի անձնակազմի թվաքանակի առումով չպետք է լինեն սահմանափակումներ: Լրատվական գործակալությունները պարտավոր չեն սահմանափակել հավատարմագրվող լրագրողների քանակը, թեև ողջամիտ կլինի, եթե միջոցառման կազմակերպիչները սահմանափակեն կոնկրետ միջոցառումը լուսաբանելու համար մեկ լրատվամիջոցի ներկայացուցիչների

քանակը, եթե դա անհրաժեշտ է բազմաքանակ լրատվամիջոցների մուտքը ապահովելու համար» (ACE project, The Electoral Knowledge Network, The ACE encyclopaedia: Media and Elections, 2012):

Վերոշարադրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է նաև Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի կատարման երաշխավորումը, համաձայն որի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Ինչ վերաբերում է ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի և «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի միջև առկա անհամապատասխանությանը, ապա ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է դրա հաղթահարումը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերության երկրորդ նախադասության մեջ ամրագրված «միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածների և 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26 դեկտեմբերի 2017 թվականի
ՄԴՈ-1396



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 թվականի Հունիսի 29-ին Երեւանում ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«1997 թվականի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՍՈՒԲԼԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գ. Գրիգորյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 29-ին Երևանում ստորագրված՝ «1997 թվականի սեպտեմբերի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության

3(91)2018

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

պետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «1997 թվականի սեպտեմբերի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2017 թվականի հունիսի 29-ին՝ Երևանում:

1997 թվականի սեպտեմբերի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1998 թվականի սեպտեմբերի 15-ին:

Արձանագրությամբ փոփոխություններ են կատարվում Համաձայնագրի 1, 5, 7, 9, 11 և 12-րդ հոդվածներում:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի բեռնափոխադրումները, բացառությամբ Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված փոխադրումների, կատարվեն կցորդներով կամ կիսակցորդներով կամ առանց դրանց բեռնատար ավտոմոբիլների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրվող թույլտվությունների հիման վրա: Ընդ որում՝ բեռների յուրաքանչյուր այդպիսի փոխադրման համար պետք է տրվի առանձին թույլտվություն, որն իրավունք կտա դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ կատարելու մեկ ուղևորություն, եթե հենց թույլտվությամբ այլ բան նախատեսված չէ,

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության փոխադրողների կողմից

կատարվող Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հավասարության պայմաններով փոխադարձաբար ազատվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության վճարներից:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են ավտոմոբիլային հաղորդակցության ոլորտում փոխշահավետ հետագա համագործակցության ընդլայնմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 29-ին Երևանում ստորագրված՝ «1997 թվականի սեպտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 հունվարի 2018 թվականի
ՄԴՈ-1397



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ
ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Լ. Մկրտչյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև կրթության որակավորումների, գիտական աստիճանների ու գիտական կոչումների փոխձանաչման և համադրելիության մասին համա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
125

ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017թ. դեկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրը կնքվել է ի կատարումն 2002թ. ապրիլի 2-ի՝ ՀՀ կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև կնքված բարեկամության և համագործակցության մասին պայմանագրով ստանձնված պարտավորությունների: Այն ուղղված է նպաստելու Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև կրթության և գիտության բնագավառում բարեկամական հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը՝ Հայաստանի Հանրապետությունում և Տաջիկստանի Հանրապետությունում տրվող կրթության որակավորումների, գիտական աստիճանների և գիտական կոչումների փոխձանաչման միջոցով:

Համաձայնագիրը տարածվում է կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ պետական նմուշի փաստաթղթերի վրա, որոնք տրվում են Կոդների պետությունների տարածքներում, ինչպես նաև՝ պետական նմուշի այն փաստաթղթերի վրա, որոնք տրվում են Կոդներից յուրաքանչյուրի՝ այլ պետությունների տարածքներում տեղակայված կրթական հաստատությունների կողմից:

2. Կոդները գիտության և կրթության ոլորտում ակտիվ համագործակցելու նպատակով ստանձնում են մի շարք պարտավորություններ: Մասնավորապես.

- փոխադարձաբար, որպես համադրելի ճանաչել՝ հիմնական կրթության վկայականը, որը տրվում է Հայաստանի Հանրապետությունում, և ընդհանուր կրթության մասին վկայականը, որը տրվում է Տաջիկստանի Հանրապետությունում,

- միջնակարգ կրթության մասին վկայականը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության վկայագիրը (միջնակարգ կրթություն ստանալու հետ մեկտեղ) և դրա ներդիրը, որոնք տրվում են Հայաստանի Հանրապետությունում, և միջնակարգ ընդհանուր կրթության վկայականը և նախնական մասնագիտական կրթության (միջնակարգ

ընդհանուր կրթություն ստանալու հետ մեկտեղ) վկայագիրը, որոնք տրվում են Տաջիկստանի Հանրապետությունում, երկու պետություններում ճանաչվում են որպես փաստաթղթեր, որոնք իրավունք են տալիս շարունակելու կրթությունը Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությանը և ընդունող ուսումնական հաստատության կողմից սահմանվող պայմաններին համապատասխան,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության վկայագիրը և ներդիրը, որոնք տրվում են Հայաստանի Հանրապետությունում, և մասնագիտության մասին վկայականը և նախնական մասնագիտական կրթության վկայագիրը, որոնք տրվում են Տաջիկստանի Հանրապետությունում, համադրելի են ճանաչվում երկու պետություններում աշխատանքի ընդունվելիս՝ այդ փաստաթղթերում նշված մասնագիտությանը (արհեստին) և որակավորմանը համապատասխան,

- միջին մասնագիտական կրթության վկայագրերը և ներդիրները, որոնք տրվում են Հայաստանի Հանրապետությունում և Տաջիկստանի Հանրապետությունում, համադրելի են ճանաչվում երկու պետություններում բարձրագույն ուսումնական հաստատություններ և աշխատանքի ընդունվելիս,

- ստացած կրթության ծավալը և բովանդակությունն արտացոլող ակադեմիական տեղեկանքը, որը տրվում է Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից այն անձանց, ովքեր կրթություն ստանալու նպատակով ընդունվել են միջին մասնագիտական կրթության մասնագիտակրթական ծրագրերով, սակայն տարբեր պատճառներով չեն ավարտել ուսումնական ամբողջական ծրագիրը, իրավունք է տալիս շարունակելու կրթությունը Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության այն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնք ունեն պետական հավատարմագրման վկայական,

- բակալավրիատի վկայագրերը, որոնք տրվում են պետական հավատարմագրման վկայական ունեցող Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից, համադրելի են աշխատանքի ընդունվելիս և իրավունք են տալիս շարունակելու բարձրագույն կրթությունը մասնագետի պատրաստման ծրագրերով և մագիստրոսի պատրաստման ծրագրերով՝ Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությանը և ընդունող բարձրագույն ուսումնական հաստատության կողմից սահմանվող պայմաններին համապատասխան:

3. Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության բարձրագույն կրթության հաստատությունների կողմից տրվող բարձրագույն կրթության մասին փաստաթղթերի (բակալավրի վկայագիր) համադրելիության սահմանումը կատարվում է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության տարածքներում՝ համապատասխան Կողմի պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգային կանոնների համաձայն:

Կողմերն ստանձնել են նաև մի շարք այլ պարտավորություններ, որոնց նպատակն է լիարժեք և ամբողջական կարգավորել սույն միջազգային համաձայնագրի առարկան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև կրթության որակավորումների, գիտական աստիճանների ու գիտական կոչումների փոխձանաչման և համադրելիության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 հունվարի 2018 թվականի
ՄԴՈ-1398



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 68-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ
6-ՐԴ ՄԱՍԻ՝ «ՄԱՍՆԱԿՑԵԼ» ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՃՈՒՐՆ ՄԿՄՎԵԼՈՒ-
ՊԱՀԻՑ ԴԱՀԼԻՃ ՄՏՆԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է» ԴՐՈՒՑԹՆԵՐԻ՝ ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «մասնակցել» և 7-րդ մասի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
129

«Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողների համատեղ հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ հողային օրենսգիրքը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ հողային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2001 թվականի մայիսի 2-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001 թվականի հունիսի 4-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի հունիսի 15-ից:

Օրենսգրքի՝ «Աճուրդի կազմակերպումը և իրականացումը» վերտառությամբ 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են.

«6. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք օր առաջ: Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

Աճուրդի անցկացման ձևի մասին նշվում է աճուրդի իրականացման հայտարարության մեջ:

7. Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկից ավելի է:

Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը: Յուրաքանչյուր սակարկության արդյունքով կազմվում է առանձին արձանագրություն, որն իր մեջ ներառում է տվյալներ՝ աճուրդի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, սակարկման ընթացքի և արդյունքների մասին»:

Ընդունումից ի վեր Օրենսգրքի վիճարկվող դրույթները որևէ փոփոխության չեն ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողը դիմումներ է ներկայացրել չորս տարբեր համայնքների ղեկավարների խնդրելով թույլատրել ներկա գտնվել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի առաջիկա աճուրդվաճառքներին՝ **դիտարկելու և լուսաբանելու նպատակով**։

Համայնքների ղեկավարները, վկայակոչելով ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, պատասխան գրություններով մերժել են դիմողի պահանջը՝ պատճառաբանելով, որ աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը, և որ աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է։

Դիմողը վերը նշված գրությունները վիճարկել է ՀՀ վարչական դատարանում՝ ներկայացնելով վարչական ակտերը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, որը ՀՀ վարչական դատարանի՝ 23.05.2016թ. վճռով մերժվել է (վարչական գործ թիվ ՎԴ/5371/05/15)։ ՀՀ վարչական դատարանն իր վճիռը հիմնականում պատճառաբանել է նրանով, որ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը։

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2017թ. որոշմամբ մերժվել է։ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրավաչափ է գտել այլ անձանց, այդ թվում՝ հայցվոր կազմակերպության ներկայացուցիչների, փակ աճուրդին ներկա գտնվելու վարչական մարմնի արգելքը։

Նշված որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 17.05.2017թ. որոշմամբ։

3. Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի «մասնակցում են» արտահայտությունը և 7-րդ մասի «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթը համապատասխանաբար իրավունք սահմանափակող արտահայտություն և դրույթ են և, այդքանով հանդերձ, հակասում են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 2, 7, 42, 48, 49, 51, 78, 79, 80, 81 և 183-րդ հոդվածներին։

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ տեղեկանալու իրավունքը խոսքի ազատության բաղադրիչ է, հետևաբար՝ համայնքին պատկանող գույքի օտարման մասին տեղեկացված լինելու իրավունքն անհրաժեշտ է համայնքին պատկանող գույքը տնօրինելու իրավունքի իրացման համար։ Մինչդեռ, ըստ դիմողի, Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի «մասնակցում են» եզրույթը վերաբերում է միայն գրանցված, այն է՝ աճուրդում հաղթող ճանաչվելու շահ ունեցող անձանց, կազմակերպչին և արձանագրողին, իսկ նույն հոդվածի 7-րդ մասն ամրապնդում է այլ անձանց արգելքը, այն է՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է»։

Ըստ դիմողի՝ համայնքներում նշանակված աճուրդ-վաճառքներին ներկա գտնվելն ուղղված է տեղեկատվություն ստանալուն, այդ թվում՝ դրա տարածման նպատակով, իսկ վերջինս պայմանավորված է դիմողի (հասարակական կազմակերպության) հանրային գործունեությամբ՝ հանրային նշանակության դեպքերի լրագրողական հետաքննությամբ:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, ստանձնել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը նպաստելու պարտավորություն: Իսկ այդ մասնակցությունը, ըստ դիմողի, պետք է ամրապնդվի այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են՝ թափանցիկության ուժեղացումը, բնակչության համար տեղեկատվության նկատմամբ արդյունավետ մուտքն ապահովելը, հանրության տեղեկացվածության միջոցառումների իրականացումը, կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը:

4. Պատասխանող կողմը կարծում է, որ Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասն այնքանով, որքանով իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, խոչընդոտում է մամուլով աճուրդի լուսաբանմանը, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին, իսկ 7-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ Ազգային ժողովի կողմից բավարար օրենսդրական նախադրյալներ ստեղծվել են տեղեկատվության ազատությունը երաշխավորելու համար:

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի առնչությամբ վկայակոչելով, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 42, 51, 78 և 81-րդ հոդվածները, կարծիքի ազատության վերաբերյալ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքները, պատասխանող կողմը գտնում է, որ կոնկրետ դեպքում պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդով վաճառքը հասարակական հետաքրքրություն ներկայացնող միջոցառում է և շոշափում է համայնքի բնակիչների շահերը, հետևաբար՝ մամուլի կողմից լուսաբանման ենթակա է: Այնուամենայնիվ, պատասխանողը գտնում է, որ այս գործընթացում միաժամանակ անհրաժեշտ է ապահովել աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ զանգ-

վածային լրատվության միջոցներով անձնական տվյալների երրորդ անձանց փոխանցման դեպքում, քանի որ աճուրդի գործընթացը ենթադրում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձնական տվյալների մշակում և օգտագործում, հետևաբար վերը նշված օրենքին համապատասխան իրավական ռեժիմների պահպանում:

Այդուհանդերձ, պատասխանող կողմը կարծում է, որ աճուրդին անմիջականորեն մասնակցող անձանց անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունն ինքնին չի կարող գերակշռել հանրային իրավաչափի հետաքրքրությունը աճուրդների իրականացման գործընթացի օրինականության նկատմամբ: Հետևաբար, զանգվածային լրատվամիջոցների մասնակցության խոչընդոտը չի կարող Եվրոպական դատարանի եզրույթաբանությամբ համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Անդրադառնալով Օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» իրավակարգավորմանը՝ պատասխանողն անհրաժեշտ է համարում նկատել, որ նշված դրույթը վերաբերում է ոչ թե աճուրդի հնարավոր մասնակիցների շրջանակին և ըստ այդմ՝ որոշակի խումբ անձանց մասնակցության սահմանափակմանը, այլ աճուրդի անցկացման կազմակերպչական կանոն է, ինչը, պատասխանողի կարծիքով, իրավաչափ նպատակ է հետապնդում: Ըստ պատասխանողի, եթե Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասը չընկալվեր որպես աճուրդին ՁԼՄ-ների ներկայությունը բացառող, ապա Օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ վերը նշված արգելքը, ընթացակարգային բնույթ կրելով, կընկալվեր բացառապես որպես աճուրդի պատշաճ ընթացքն ապահովող կարգապահական կանոն:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողի բարձրացրած հարցը և նրա ներկայացրած հիմնավորումներն առնչվում են բացառապես Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ, այն է՝ «Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը», և 7-րդ մասի առաջին պարբերությամբ ամրագրված, այն է՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդները փակ եղանակով անցկացնելը համահունչ է իրավական և ժողովրդավարական պետության սկզբունքներին և չի խոչընդոտում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված կարծիքն ազատ արտահայտելու տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման հնարավորությանը,

- արդյոք Օրենսգրքի վիճարկվող դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված համաչափության և որոշակիության սկզբունքներին:

6. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդների կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի՝ աճուրդները կարող են լինել բաց և փակ: Ի տարբերություն բաց աճուրդների, որոնց կարող է մասնակցել սահմանված չափանիշներին համապատասխանող ցանկացած անձ, «փակ արձուրդին և փակ մրցույթին մասնակցում են միայն այդ նպատակով հրավիրված անձինք»:

ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սակարկություններով պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վաճառվում են **բաց** աճուրդների միջոցով: Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան «Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը»: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան՝ **յուրաքանչյուր անձ**, ով Օրենսգրքի համաձայն հանդիսանում է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտ, ցանկության դեպքում կարող է սահմանված կարգով մասնակցել աճուրդին:

Մյուս կողմից, Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ **աճուրդն անցկացվում է փակ**, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը: Հաշվի առնելով այն, որ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների նկատմամբ կիրառվում են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, բացառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հոդվածի 6-րդ մասում կիրառված՝ «աճուրդն անցկացվում է փակ» արտահայտությունը չի ենթադրում, որ այդ աճուրդներին կարող են **մասնակցել** հրավիրված անձինք: Սահմանադրական դատարանը հարկ է համարում տարանջատել **«փակ սակարկու-**

թյուններ» հասկացությունը «փակ եղանակով կազմակերպվող աճուրդներ» հասկացությունից: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել նաև, որ **հրապարակային աճուրդներն ամեն դեպքում հանդիսանում են բաց աճուրդներ** և դրանից ելնելով էլ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը սահմանել է, որ «սույն օրենքով չեն կարգավորվում փակ սակարկությունների կազմակերպման հետ կապված հարաբերություններ»:

7. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի տրամաբանությանը համապատասխան՝ հրապարակային աճուրդներին ներկա են գտնվում ինչպես աճուրդի մասնակիցները, այսինքն՝ այն անձինք, ովքեր սահմանված կարգով վճարել են նախավճար և կազմակերպչի կողմից ստացել են մասնակցի վկայական, այնպես էլ աճուրդի **մասնակից չհամարվող անձինք**: Ընդ որում, վերոհիշյալ հոդվածի համաձայն՝ մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի կանոնակարգով կարող է սահմանվել մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը: Բացի դրանից, ինչպես նշվեց, աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

Այս առումով, հրապարակային աճուրդներին, բացի կազմակերպչից, արձանագրողից և մասնակիցներից, կարող են **ներկա գտնվել** նաև համապատասխան կարգավիճակ ձեռք բերած անձինք:

Այսինքն՝ կարծիք արտահայտելու, տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունն իր իրագործումն է գտել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքում՝ ցանկացած անձի համար հնարավորություն ստեղծելով **ներկա գտնվելու** հրապարակային աճուրդին և դիտարկելու դրա ընթացքը:

Մյուս կողմից, Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք օր առաջ: Նույն մասը սահմանում է, որ աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հոդվածում խոսքը վերաբերում է աճուրդի բուն գործընթացին առնչվող՝ **գործընթացին «մասնակցող»** անձանց, **այն չպետք է նույնացվի «ներկա գտնվող» հասկացության հետ**, և համապատասխան դրույթները չպետք է խոչընդոտ հանդիսանան աճուրդի ընթացքը դիտարկելու ցանկություն հայտնաձև և սակարկություններին **ներկա գտնվելու** կարգավիճակ ունեցող անձանց համար:

Վերոշարադրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ, ի պատասխան սույն գործով զեկուցողների

22.12.2017թ. ՄԴԱ-18 գրության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի՝ 16.01.2018թ. №01/16.1/157-18 պատասխան գրությանը՝ հարցին՝ արդյոք Հայաստանի Հանրապետության համայնքներում առկա են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված աճուրդի կանոնակարգեր, և արդյոք նախատեսված է աճուրդի մասնակից չհամարվող անձանց աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ կարգավորումներ, նշվել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը, իսկ աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է: Բացի դրանից, նշվել է, որ հողամասերի աճուրդի անցկացման լրացուցիչ կանոնակարգ ընդունելու անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի աճուրդով վաճառքին առնչվող խնդիրները կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, իսկ աճուրդի կազմակերպման և իրականացման կարգը՝ 68-րդ հոդվածի դրույթներով:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև հաշվի առնել, որ դատական պրակտիկայում Օրենսգրքի վիճարկվող 68-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթը մեկնաբանվել է որպես պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդներին մասնակից չհանդիսացող անձանց ներկա գտնվելը Բացառող դրույթ: Մասնավորապես, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ եզրահանգել է, որ «համայնքային հողամասերի փակ աճուրդին կարող են ներկա գտնվել բացառապես աճուրդին գրանցված մասնակիցները, կազմակերպիչը և արձանագրողը»:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել իր՝ 2012 թվականի մարտի 6-ի ՄԴՈ-1010 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»:

Հարկ է նշել նաև, որ կարծիքի արտահայտման իրավունքը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով և կարգով: Մասնավորա-

պես, այն կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդիրը պետք է նախատեսի պետական և համայնքային հողամասերի վաճառքի վերաբերյալ կազմակերպվող աճուրդների այնպիսի իրավակարգավորում, ինչը, մի կողմից, կհամարվի անհրաժեշտ աճուրդի բնականոն ընթացքն ապահովելու համար, մյուս կողմից՝ վերաբերելով պետությանը և համայնքին պատկանող գույքին, այդ կապակցությամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության անհրաժեշտությանը, մատչելի կլինի հասարակության համար ու կբարձրացնի հանրային իշխանության և, մասնավորապես, տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրության վստահությունը:

Առաջնորդվելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, հանրային իշխանության գործողությունների թափանցիկությունը, հաշվետու գործունեությունը, հանրային-իրավական պատասխանատվությունն ապահովելու նկատառումներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետությանը և համայնքներին պատկանող հողամասերի աճուրդի վերաբերյալ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքն **աճուրդին ներկա գտնվելու եղանակով իրացնելը**՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով, **անհրաժեշտություն է**, և պետական ու համայնքային հողամասերի աճուրդը պետք է լինի թափանցիկ:

Անդրադառնալով անձի՝ տեղեկություններ փնտրելու իրավունքին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև Օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն աճուրդի արդյունքների մասին կազմված արձանագրությունը ներառում է տվյալներ աճուրդի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, **սակարկման ընթացքի** և արդյունքների մասին, միևնույն է, արձանագրությամբ արձանագրված տեղեկությունները չեն կարող համարժեք լինել ներկա գտնվելու արդյունքում ստացված տեղեկատվությանը: Բացի դրանից, հարկ է հավելել, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի գրության համաձայն՝ պետության և համայնքներին պատկանող հողամասերի աճուրդների ընթացքի տեսաձայնագրություն չի իրականացվում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետությանը և համայնքներին պատկանող հողամասերի աճուրդին անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներկա գտնվելն արգելելը համաչափ սահմանափակում չէ և իրավաչափ նպատակ չի հետապնդում: Վերջիններիս ներկա գտնվելն ուղղված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության

արդյունավետության ապահովմանը, հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը:

9. Սահմանադրական դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՄԴՈ-1396 որոշմամբ վերահաստատելով իր՝ 11.01.2001թ. ՄԴՈ-278 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, գտել էր, որ օրենսդիրը հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումներ նախատեսելիս պարտավոր է առաջնորդվել բացառապես սահմանադրաիրավական այն չափորոշիչներով, որպիսիք նախատեսված են Սահմանադրության 75, 76, 78, 79 և 80-րդ հոդվածներում և 81-րդ հոդվածի 2-րդ մասում:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար և պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Միաժամանակ, Սահմանադրության 79-րդ հոդվածի համապատասխան հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները փակ եղանակով կազմակերպելը սահմանադրականության տեսանկյունից չի կարող գնահատվել որպես համարժեք սահմանափակվող այնպիսի հիմնական իրավունքների նշանակությանը, ինչպիսիք են տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքները:** Այն չի կարող գնահատվել որպես պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակի հասնելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է տեղեկատվության ազատության խնդիրներին, մասնավորապես. 2009թ. ապրիլի 14-ի Társaság a Szabadságjogokért v. Hungary (գանգատ թիվ 37374/05) գործով դատարանը եզրահանգել է, որ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկության տրամադրման խոչընդոտները կարող են բացասաբար ազդել ԶԼՄ-ներում և հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձանց վրա:

Մեկ այլ, 2013թ. նոյեմբերի 28-ի Österreichische Vereinigung zur Erhaltung, Stärkung und Schaffung eines wirtschaftlich gesunden land und forstwirtschaftlichen Grundbesitzes v. Austria (գանգատ թիվ 39534/07) վճռով դատարանը վերահաստատել է նախկին դիրքորոշումները, այն է՝ կողմ-

նակից է «տեղեկություններ ստանալու ազատություն» հասկացության ավելի լայն մեկնաբանմանը, որը ներառում է տեղեկությունների մատչելիության սկզբունքը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի՝ վիճարկվող դրույթի համապատասխանությանը որոշակիության սկզբունքին, ապա Մահմանադրական դատարանը հարկ է համարում նշել պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդով վաճառքի իրարամերժ իրավակարգավորումները: Մասնավորապես, մի կողմից, Օրենսգիրքը սահմանափակում է աճուրդին **ներկա գտնվելու** ցանկություն հայտնաձև անձանց հնարավորությունը, իսկ, մյուս կողմից՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հատուկ կարգավորում մասնակից չհանդիսացող անձանց աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ:

10. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը կարգավորում է հրապարակային աճուրդի ընթացքը, համաձայն որի՝ նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր: Միաժամանակ, վերոհիշյալ օրենքի համաձայն՝ աճուրդի անցկացման այլ ընթացակարգային պայմանները կարող են նախատեսվել աճուրդի մասին կանոնակարգով, որի դրույթներին կազմակերպիչը պարտավոր է մասնակիցներին ծանոթացնել նախքան աճուրդի սկսվելը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որը նվիրված է աճուրդի մասին հրապարակային ծանուցմանը, սահմանում է, որ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ պարտադիր պետք է նշվի աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և **ժամը**: Անգամ այն դեպքերում, երբ հրապարակային ծանուցումն ի սկզբանե նախատեսում է փոփոխությունների կատարման հնարավորություն, այնուամենայնիվ, փոփոխված ծանուցումը պետք է հրապարակվի աճուրդից առնվազն երեք օր առաջ: Նման իրավակարգավորումները երաշխիք են շահագրգիռ անձանց համար հայտարարված ժամին **ներկա գտնվելու** սակարկություններին:

Մահմանադրական դատարանը հարկ է համարում նաև շեշտել, որ աճուրդն սկսվելու պահին ամրագրված է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը»: Այսինքն՝ աճուրդի սկսվելու պահը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում նշված

հայտարարությունն անելու պահին է: Հետևաբար, նշված դրույթը կոչված է ապահովելու աճուրդի բնականոն ընթացքը, բարձրացնելու աճուրդին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց կարգապահությունը:

Նման իրավընկալման շրջանակներում աճուրդի սկսվելու պահից դաիլիճ մտնելու արգելքը համապատասխանում է համաչափության և որոշակիության սկզբունքներին և չի սահմանափակում անձի՝ կարծիք արտահայտելու ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության՝ «Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը» դրույթն այն մասով, որով իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ արգելափակում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդներին սահմանված կարգով ներկա գտնվելու և աճուրդի ընթացքը դիտարկելու նման ցանկություն հայտնած անձանց, այդ թվում՝ իրենց կանոնադրական պարտականությունը կատարող կազմակերպությունների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությամբ ամրագրված՝ «Աճուրդն սկսվելու պահից դաիլիճ մտնելն արգելվում է» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30 հունվարի 2018 թվականի
ՍԴՈ-1399



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

Օրենսգրքի «Կալանքը» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ»:

Ընդունումից ի վեր Օրենսգրքի վիճարկվող նորմում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություն և լրացում չի կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2017 թվականի հունիսի 29-ին Փաշա Արարատի Ավանեսյանին մեղադրանք է առաջադրվել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Նույն օրը նրա նկատմամբ ընդունվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

2017 թվականի հունիսի 30-ին Փաշա Արարատի Ավանեսյանի վերաբերյալ թիվ 90959117 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (գործ համար ՄԴ1/0079/01/17):

2017 թվականի սեպտեմբերի 27-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, ավարտելով թիվ ՄԴ1/0079/01/17 քրեական գործի քննությունը, հեռացել է խորհրդակցական սենյակ: Նույն օրը դատարանը գործի դատաքննությունը վերսկսել է և, լսելով կողմերին, որոշել է գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

3. Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 16, 27, 28, 29, 71 և 78-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, նախ և առաջ, Օրենսգրքի 57, 58, 59, 84 և 361-րդ հոդվածների վերլուծության հիման վրա արձանագրել է, որ.

ա) կալանքի ժամկետը 15 օրից մինչև 3 ամիս է, իսկ կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ժամկետը 3 ամսից մինչև 2 տարի է,

բ) Օրենսգրքի 49-րդ հոդվածում պատժատեսակները շարադրված են առավել մեղմ պատժատեսակից մինչև առավել խիստ պատժատեսակը, որում կալանքը գտնվում է կարգապահական գումարտակում պահելուց և ազատազրկումից առաջ,

գ) կալանքը նախատեսված է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար, իսկ ազատազրկումը՝ նաև ծանր հանցագործությունների համար,

դ) կալանքի դեպքում դատվածությունը մարվում է պատիժը կրելուց 1 տարի անցնելուց հետո, իսկ ազատազրկման դեպքում՝ պատիժը կրելուց առնվազն 3 տարի անցնելուց հետո:

Այնուհետև, վերը նշված վերլուծության հիման վրա դիմողը գտնում է, որ կալանքն ավելի մեղմ պատժատեսակ է, քան կարգապահական գումարտակում պահելը կամ ազատազրկումը:

Միաժամանակ, դիմողը կոնկրետ գործով վկայակոչելով մեղմացուցիչ հանգամանքի առկայությունը, այն է՝ ամբաստանյալի իր խնամքին մինչև 8 տարեկան երեխա ունենալը, և, հետևաբար, ամբաստանյալի նկատմամբ համեմատաբար մեղմ պատիժ նշանակելու անհրաժեշտությունը, գտնում է, որ մեղմացուցիչ հանգամանքը տվյալ դեպքում ամբաստանյալի համար առաջացնում է անբարենպաստ հետևանք, քանի որ Օրենսգրքի վիճարկվող նորմի ուժով մինչև 8 տարեկան երեխա ունենալը բացառում է Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պատժատեսակներից (կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կարգապահական գումարտակում պահել՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով) տվյալ գործով ամբաստանյալի նկատմամբ ընտրել առավել մեղմ պատժատեսակ հանդիսացող կալանքը:

4. Պատասխանողը առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ դատարանը ճիշտ է նկատել, որ սահմանադրաիրավական վեճի առարկա հոդվածի սանկցիայում կալանք պատժատեսակն ամենամեղմն է: Սակայն անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ կալանք պատժատեսակն իր բնույթով շատ ավելի ծանր է, քան ազատազրկումը և կարգապահական գումարտակում պահելը. այն քննարկվող հոդվածում և Օրենսգրքում մեղմ է ազատազրկում և կարգապահական գումարտակում պահել պատժատեսակների համեմատությամբ՝ բացառությամբ Օրենսգրքով այդ պատժա-

տեսակների օրենսդրորեն հնարավոր պատժաչափերի պայմաններում: Այսպես, Օրենսգրքի համաձայն՝ կալանքը կարող է կիրառվել 15 օրից մինչև 3 ամիս, այնուհետև կարգապահական գումարտակում պահելը՝ 3 ամսից մինչև 2 տարի, իսկ ազատազրկումը՝ 3 ամսից մինչև 20 տարի ժամանակով:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ՝ «Թեև վերոգրյալ պատժաչափերի, ինչպես նաև պատիժը կրելուց հետո քրեախրավական հետևանքների տարբերության պայմաններում կալանքը ավելի մեղմ է, սակայն, եթե դիտարկենք և համեմատենք այս պատժատեսակների 1 օրը, ապա ակնհայտ է, որ կալանքն ավելի ծանր է: ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքը ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է: Հիմք ընդունելով այս պահանջը՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է կալանքը կրելու ավելի խիստ կարգ ու պայմաններ, քան կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման դեպքում»:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ պատասխանողը գտնում է, որ. «... կալանքի դեպքում դատապարտյալին տեսակցություն չի տրամադրվում, կարճաժամկետ մեկնում չի տրամադրվում, չի թույլատրվում վարել նամակագրություն, ստանալ ծանրոց, հանձնուք և փաթեթ, նախնական կամ միջին մասնագիտական կրթություն չի իրականացվում»:

Հաշվի առնելով բերված հիմնավորումները՝ պատասխանողը նաև գտնում է, որ՝ «... օրենսդիրն իրավաչափորեն ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է, որ կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ»:

Միաժամանակ, նման իրավակարգավորումը, ըստ պատասխանողի, նպատակ է հետապնդում պաշտպանելու ընտանիքի լավագույն շահերը և բխում է հենց ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի պահանջից, այն է՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են, և չի կարող որևէ դեպքում մեկնաբանվել որպես Սահմանադրության 16-րդ հոդվածի պահանջին հակասող և հնարավորություն ստեղծել նման ընտանեկան պայմաններում դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացնել, այդ թվում՝ իր խնամքի տակ գտնվող մինչև 8 տարեկան երեխաներից:

Այս հիմնավորմամբ պայմանավորված, պատասխանողի կարծիքով, խոսք չի կարող լինել դատարանի կողմից վկայակոչված հնարավոր խտրական իրավակարգավորման մասին՝ վկայակոչելով Եվրոպական դա-

տարանի նախադեպային որոշումներից մեկը, ըստ որի՝ «Վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն» (Սահինն ընդդեմ Գերմանիայի (Sahin v. Germany), 2003թ. հուլիսի 8-ի վճիռ):

Պատասխանողը նաև գտնում է, որ Օրենսգրքն ունի անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու անհրաժեշտ իրավական գործիքակազմ: Օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»: Դատարանն ավելի մեղմ պատիժ նշանակելու համար կարող է կիրառել Օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք դրույթներ, ինչպիսիք են «Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը» վերտառությամբ 64-րդ հոդվածը, «Պատիժը պայմանականորեն չկիրառելը» վերտառությամբ 70-րդ հոդվածը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը կարծում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Հաշվի առնելով դիմող և պատասխանող կողմերի փաստարկները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բարձրացված սահմանադրաիրավական վեճը վերաբերում է կալանք պատժատեսակի ընտրության և նշանակման իրավաչափությանն այն տեսանկյունից, որ քրեական օրենսդրությամբ նախատեսված առանձին հանցակազմերի սանկցիաներում չի նախատեսվում կալանք պատժատեսակից ավելի մեղմ պատժատեսակ:

Այդ կապակցությամբ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել կալանքի բնույթը, նրա տեղը քրեաիրավական բնույթի պատժատեսակների համակարգում՝ ելնելով անձի սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների երաշխավորման ու պաշտպանության անհրաժեշտ իրավական կառուցակարգերի ապահովման անհրաժեշտությունից:

6. Օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, արարքի հանրային վտանգավորության գնահատման և դրա քրեականացման իր իրավասության շրջանակներում, ելնելով Օրենսգրքի խնդիրներից և նպատակներից, նախատեսել է տարբեր խստության պատժատեսակներ: Պատժի տեսակների բազմազանությունը հնարավորու-

թյուն է տալիս դատարանին հաշվի առնել հանցագործության և հանցագործի վտանգավորության աստիճանը և նշանակել արդարացի պատիժ, որն առավելագույնս կնպաստի դատապարտյալի ուղղմանը, սոցիալական արդարության վերականգնմանը և նոր հանցագործությունների կանխմանը:

Այսպես, օրինակ, Օրենսգրքի 49-րդ հոդվածում Հայաստանի Հանրապետությունում կիրառվող պատժատեսակները թվարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝ տուգանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում, հանրային աշխատանքներ, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկում, զինվորական ծառայության մեջ սահմանափակում, գույքի բռնագրավում, կալանք, կարգապահական գումարտակում պահելը, որոշակի ժամկետով ազատազրկում, ցմահ ազատազրկում:

Ընդ որում, Օրենսգրքով նախատեսված պատիժների այս համակարգում պատժատեսակներն ունեն որոշակի աստիճանակարգվածություն՝ սկզբում ներկայացվում են ավելի մեղմ՝ ազատազրկման հետ չկապված պատժատեսակները, իսկ այնուհետև ավելի խիստ ազատազրկման հետ կապված պատժատեսակները: Պատժատեսակների նման հաջորդականությունն ակնհայտ է դարձնում, թե օրենսդիրն ինչպես է գնահատում յուրաքանչյուր պատժատեսակի հարաբերական խստությունը և կողմնորոշում դատարանին առավել արդյունավետ պատժատեսակի ընտրության, մասնավորապես, օրենքով նախատեսված դեպքերի համար ավելի մեղմ պատիժ նշանակելիս:

Միաժամանակ, քրեական օրենսդրության տրամաբանությունից հետևում է, որ կալանքը հիմնական և կարճաժամկետ ազատազրկման հետ կապված պատժատեսակ է և դատարանի կողմից կարող է նշանակվել Օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված սանկցիայով, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերի համար ավելի մեղմ պատիժ նշանակելիս (Օրենսգրքի 64-րդ հոդված), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս (Օրենսգրքի 77-րդ հոդված), հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում (Օրենսգրքի 54-րդ հոդված):

7. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ կալանքն ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է, և այն կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով:

Նույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազատազրկումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է»:

Միաժամանակ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Դատապարտյալի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարբերակվում են՝ հիմք ընդունելով դատավճռով նշանակված պատժի, առանձին դեպքերում՝ նաև ուղղիչ հիմնարկի տեսակը և դրանում սահմանված ներքին կանոնակարգը»:

Սակայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ուժով կալանքի դատապարտված դատապարտյալները պահվում են խիստ մեկուսացման պայմաններում, նրանց վրա տարածվում են փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժ կրող ազատագրկման դատապարտված անձի համար նույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված պատիժը կրելու պայմանները: Մասնավորապես, կալանքի դատապարտված դատապարտյալներին տեսակցություն չի տրամադրվում՝ բացառությամբ պաշտպանի հետ տեսակցության և անձնական բացառիկ հանգամանքների դեպքում, ինչպես նաև նրանց չի թույլատրվում վարել նամակագրություն, ստանալ ծանրոց, հանձնուք և փաթեթ՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաների և սեզոնային հագուստի:

Հիշատակված իրավակարգավորումների վերլուծության արդյունքների շրջանակում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **թեև կալանքի՝ որպես պատժատեսակի կատարման, այդ թվում՝ անձի մեկուսացման պայմանները խիստ են, այնուամենայնիվ, պատժի կրման ժամկետի առումով այն ավելի մեղմ պատժատեսակ է, քան կարգապահական գումարտակում պահելը (Օրենսգրքի 58-րդ հոդված) կամ որոշակի ժամկետով ազատագրկումը (Օրենսգրքի 59-րդ հոդված):**

Այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող նորմը նախատեսում է տասնվեց տարին չըրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ **կալանք պատժատեսակի նշանակման արգելք՝ նպատակ հետապնդելով ապահովել այդ անձանց շահերը, ինչը բխում է ոչ միայն արարքի ու պատժաչափի համաչափության սկզբունքի բովանդակությունից, այլև Օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված մարդասիրության սկզբունքի նշանակությունից:**

Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի իրավակարգավորման պահանջը, ըստ որի՝ «Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են», Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վիճարկվող հոդվածում կալանք պատժատեսակի նշանակման արգելքն այն տեսան-

կյունից, որ քրեական օրենսդրությամբ նախատեսված առանձին հանցակազմերի սանկցիաներում կալանք պատժատեսակից ավելի մեղմ պատժատեսակով նշանակելն ինքնին կարող է հանդիսանալ ընտանիքի, մայրության և մանկության նկատմամբ պետության հատուկ պաշտպանության և հովանավորության կարևոր դրսևորումներից մեկը:

Ելնելով վերոգրյալից Մահմանադրական դատարանը գտնում է, որ դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կալանքը նշանակելու արգելքն իրավաչափ է և բխում է կալանքի՝ որպես պատժատեսակի բնույթից:

8. ՀՀ Մահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին: Մահմանադրական այս նորմը նախ օրենսդրից պահանջում է յուրաքանչյուր հանցավոր արարքի համար սահմանել կատարված արարքին համարժեք պատիժ: Իսկ եթե սահմանվում են որոշակի պատժատեսակներ և պատժաչափեր, որոնք, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, դատարանին իրավաչափորեն տալիս են կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ ընտրելու հայեցողություն, ապա այդ հայեցողությունը դատարանը կարող է իրացնել՝ հիմք ընդունելով պատժատեսակը և պատժաչափը կատարված արարքին համաչափ լինելու սահմանադրական պահանջը:

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նորմի սահմանադրականության քննության շրջանակից դուրս է հանրորեն վտանգավոր արարքների համար կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ որոշելու հարցը: Մակայն Մահմանադրական դատարանը կարող է գնահատել արդեն իսկ սահմանված պատժատեսակի համաչափ լինելու հարցը: Եվ այս հիմնավորմամբ պայմանավորված՝ Մահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու հիմնարար իրավունքների սահմանափակումը պետք է համապատասխանի, ի թիվս այլ պահանջների, իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, իսկ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր կողմից սահմանված պատժատեսակի և/կամ պատժաչափի նշանակումը կարող է կոնկրետ գործի շրջանակներում արդարացված չլինել և խախտել համաչափության սկզբունքը, ամրագրել է **օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հնարավորություն:**

Մասնավորապես, Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգա-

մանքների հետ կապված այնպիսի բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

Հիշատակված նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ կոնկրետ գործի շրջանակներում պատժատեսակի և/կամ պատժաչափի նշանակումն արդարացված լինելու և արարքի ու պատժաչափի համաչափությունն ապահովելու նպատակով օրենսդիրը դատարանին վերապահել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հնարավորություն:

Միաժամանակ, դիմողի կողմից բարձրացված խնդիրն առ այն, որ որոշ դեպքերում քննարկվող մարդասիրական նորմը հանգեցնում է դրանում ընդգրկված անձանց նկատմամբ ավելի խիստ և անհամաչափ պատժի նշանակման, օրակարգային է ՀՀ իրավակիրառ պրակտիկայի համար: Հիշյալ խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ համապատասխան հոդվածի սանկցիան կալանք և ազատազրկում պատժատեսակներից բացի, այլ պատժատեսակ չի նախատեսում, որպիսի պայմաններում տվյալ անձի նկատմամբ կիրառելի է դառնում միայն ազատազրկումը, ինչն ավելի խիստ պատժատեսակ է, քան կալանքը: Օրենսգրքի ուսումնասիրությունից հետևում է, որ նման խնդիր առկա է թվով 24 հանցակազմերի դեպքում (Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին, 114-րդ հոդվածի 2-րդ, 235-րդ հոդվածի 1-ին, 268-րդ հոդվածի 1-ին մասեր, 283-րդ հոդված, 296-րդ հոդվածի 3-րդ, 306-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 327-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 327.1-րդ հոդվածի 1-ին, 327.3-րդ հոդվածի 1-ին, 327.4-րդ հոդվածի 1-ին, 327.6-րդ հոդվածի 2-րդ մասեր, 328-րդ հոդված, 348-րդ հոդվածի 1-ին մաս, 356-րդ հոդվածի 4-րդ մաս, 361-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 363-րդ հոդվածի 1-ին և 3-րդ, 364-րդ հոդվածի 1-ին, 368-րդ հոդվածի 2-րդ, 368.1-րդ հոդվածի 1-ին մասեր): Ազատազրկում պատժատեսակի նշանակումը կոնկրետ գործով ոչ համաչափ գնահատելու դեպքում դատարանին ոչինչ չի մնում, քան Օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել նախատեսվածից մեղմ պատիժ՝ անգամ դրա հիմքերի բացակայության դեպքում անձի իրավունքների խախտում թույլ չտալու նպատակով:

Վերոհիշյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից վերը հիշատակված հանցակազմերի սանկցիաների սահմանման նման իրավակարգավորումը հանգեցնում է դրանց գործնական խնդիրների այնքանով, որքանով դրանցում չի նախատեսվում կալանք պատժատեսակից ավելի մեղմ պատժատեսակ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 փետրվարի 2018 թվականի
ՄԴՈ-1400



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը^a կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2017 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված՝ «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
151

վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը Սահմանադրական դատարան՝ մուտքագրված 08.01.2018թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 20-ին՝ 2013 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրի (վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից 20.06.2013թ., ԱԺՈ-075-Ն, ՄԴՈ-1101)՝ Սկզբնական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երկու միլիոն ԱՄՆ դոլար (\$2.000.000) գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով Համաձայնագրի 1-ին Առդիրում նկարագրված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար, որի մարումն սկսվում է 2032 թվականի մայիսի 15-ից և ավարտվում 2042 թվականի նոյեմբերի 15-ին:

Վարկի փակման ամսաթիվը 2019թ. հունիսի 30-ն է:

Համաձայնագրով նախատեսված Ծրագրի նպատակն է սպառվող էլեկտրաէներգիայի ծավալի կրճատումը և ոռոգման թիրախային համակարգերում ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետության բարելավումը, ինչպես նաև որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար ոլորտային կարևոր տվյալների և տեղեկատվության մատչելիության և հուսալիության բարելավումը:

Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրություն», Առդիր 2. «Ծրագրի իրականացում», Առդիր 3. և Հավելված:

Ծրագիրը նախատեսում է մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգով՝ Գեղարդալիձ, Մեղրի, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով, և ներտնտեսային ջրանցքի համակարգի կառուցում Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի համար:

Ծրագիրը կառավարվելու և իրականացվելու է ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի (ՕԻԳ) կողմից, որը գործում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ԷԵԲՊՆ) ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) կազմում, վերջինս էլ հանդիսանում է պատասխանատու Ծրագրի ամբողջական իրականացման համար:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնավճար Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով,
- վճարել պարտավճար Վարկի Չառհանված մնացորդի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով,
- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վճարել տոկոսագումար, որը հավասար է Ուղղորդիչ դրույքաչափի և Փոփոխական սպրեդի գումարին կամ այն տոկոսագումարին, որը կարող է կիրառվել փոխարկումից հետո,
- կիսամյակային մուծումներով, սկսած 2032 թվականի մայիսի 15-ից մինչև 2042 թվականի մայիսի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը՝ 4.55% մասնաբաժնով, իսկ 2042 թվականի նոյեմբերի 15-ին՝ 4.45% մասնաբաժնով և այլն:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր՝ 11.06.2013թ. ՄԴՈ-1101 («2013 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային Բանկի միջև «Ռոտոման համակարգի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով) որոշման մեջ ընդգծել է, որ՝ «...իրավական առումով անըմբռնելի և խնդրահարույց է Փոխառության համաձայնագրով ամրագրված այն պարտավորությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը «Ջրտնտեսական միջոցով. ... (ե) պահպանում է Ջրտնտեսական և ապահովում է, որ այն նշանակի արհեստավարժ աշխատակազմ բավականաչափ թվով և Բանկի համար ընդունելի այնպիսի պարտականություններով և գործառույթներով, որոնք հնարավորություն կտան Ջրտնտեսական կառավարել, համակարգել և մշտա- դիտարկել ՇՄԿՊ-ների իրականացումը» (Առդիր 2, Բաժին I., կետ «Գ», ենթակետ 2): Հիշյալ դրույթը ենթակա է ճշգրտման և հստակեցման ստանձնվող պարտավորության լիարժեք իրականացումն ապահովելու և իրավակիրառական պրակտիկայում խնդիրների առաջացումը բացառելու համար»:

Վերոհիշյալ գործի նիստի արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործի դատաքնության ընթացքում ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչն ընդունել է նշված դիտողությունը, այն որակել որպես խմբագրական թերություն և հավաստիացրել, որ այն կշտկվի: Սակայն վերոհիշյալ պարտավորությունը նույն բովանդակությամբ առկա է նաև քննության առարկա Համաձայնագրի 2-րդ Առդիրի I Բաժնի «Բ» կետի 2-րդ ենթակետի «ե» մասում, ինչին պետք է ուշադրություն դարձվի համաձայնագրի վավերացման գործընթացի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2017 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված՝ «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 փետրվարի 2018 թվականի
ՄԴՈ-1401



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 թվականի Հոկտեմբերի 17-ին Երեւանում ԵՎ 2017 թվականի Հոկտեմբերի 25-ին ՀՈՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

6 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ա. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հոկտեմբերի 17-ին Երևանում և 2017 թվականի հոկտեմբերի 25-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
155

կազմակերպության միջև հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի հունվարի 8-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով հիմնական համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև հիմնական համաձայնագիրը (Հիմնական համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի հոկտեմբերի 17-ին՝ Երևանում և 2017 թվականի հոկտեմբերի 25-ին՝ Հռոմում:

Հիմնական համաձայնագրով սահմանվում է, որ Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) Հայաստանի Հանրապետությունում կարող է ունենալ ներկայացուցչություն: Հիմնական համաձայնագրով սահմանված կարգով և նպատակներով ՊԳԿ-ն Հայաստանի Հանրապետության կառավարության (Կառավարություն) համաձայնությամբ կարող է նաև հիմնել և պահպանել լրացուցիչ գրասենյակներ:

2. Հիմնական համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ապահովել, որպեսզի աջակցության ցանկացած հայտ Կառավարությունը ներկայացնի ՊԳԿ-ի կողմից սահմանված ձևով՝ Հայաստանի Հանրապետությունում ՊԳԿ ներկայացուցչության միջոցով,

բ) ապահովել, որպեսզի Կառավարությունը ՊԳԿ-ին տրամադրի պատշաճ հարմարություններ և համապատասխան տեղեկություն, որն անհրաժեշտ է Կառավարության աջակցության հայտը գնահատելու համար,

գ) ապահովել, որպեսզի Կառավարությունը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ծրագրի իրականացումը դյուրացնելու և ՊԳԿ աշխատակազմին աջակցելու համար՝ օգտվելու այնպիսի ծառայություններից և հարմարություններից, որոնք կարող են պահանջվել իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելու համար,

դ) ապահովել, որպեսզի Կառավարությունն զբաղվի երրորդ կողմերի կողմից ՊԳԿ-ի, նրա աշխատակազմի կամ նրա անունից ծրագրին առնչվող ծառայություններ մատուցող անձանց դեմ ներկայացված ցանկացած

հայցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարությունը և ՊԳԿ-ն համաձայնում են, որ այդ հայցերը հետևանք են վերոնշյալ անձանց կողմից լուրջ անփութության կամ դիտավորությամբ կատարված գործողությունների,

ե) ապահովել, որպեսզի Կառավարությունը պատասխանատու լինի ծրագրում իր կողմից ներգրավված անձնակազմի հավաքագրման, աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարումների համար,

զ) ապահովել, որպեսզի Կառավարությունը ՊԳԿ աշխատակազմի և նրա անունից գործող անձանց համար ընձեռի ծրագրի իրականացման վայր մուտք գործելու հնարավորությունը և ծրագրին առնչվող ցանկացած նյութի կամ փաստաթղթի հասանելիությունը, ինչպես նաև հիշյալ աշխատակազմին կամ անձանց տրամադրի ցանկացած համապատասխան տեղեկություն,

է) ապահովել, որպեսզի Կառավարությունը դյուրացնի ՊԳԿ անձնակազմի, միջազգային փորձագետների և ՊԳԿ անունից գործող այլ անձանց մուտքը Հայաստանի Հանրապետություն, ներառյալ պահանջվող վիզաների կամ թույլտվությունների ժամանակին և անվճար տրամադրումը,

ը) ապահովել, որպեսզի Կառավարությունը պատասխանատու լինի ծրագրի համար նախատեսված սարքավորումների ներկրման և մաքսագերծման ծախսերի, երկրի ներսում դրանց տեղափոխման, գործածման, պահեստավորման և հարակից ծախսերի կատարման, դրանց ապահովագրման, անվտանգ խնամքի և ծրագրի իրականացման վայր հասցնելուց հետո պահպանության, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դրանց փոխարինման համար,

թ) ապահովել, որպեսզի Կառավարությունը, Հիմնական համաձայնագրով սահմանված կարգով, ՊԳԿ-ին անվճար տրամադրի տարածքները, սարքավորումները, գրասենյակային կահույքը և ՊԳԿ ներկայացուցչության գործառնությունների համար անհրաժեշտ այլ միջոցները:

3. Հիմնական համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են ապահովելու, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օգտվի ՊԳԿ աջակցությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հոկտեմբերի 17-ին Երևանում և 2017 թվականի հոկտեմբերի 25-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 փետրվարի 2018 թվականի
ՍԴՈ-1402



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, 70-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 72-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
159

2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը և պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ **«Պաշտպանի պարտադիր մասնակցությունը»** վերտառությամբ 69-րդ հոդվածի 5-րդ մասը, որով օրենսգիրքը լրացվել է 2009թ. փետրվարի 5-ի ՀՕ-45-Ն օրենքով, սահմանում է.

«Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները»: Հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքը վերաբերում է նույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիայի կիրառմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ **«Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերը»** վերտառությամբ 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որն օրենսգրքի ընդունումից հետո փոփոխվել է 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով, սահմանում է.

«1. Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

...

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ **«Պաշտպանից հրաժարվելը»** վերտառությամբ 72-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությունը սահմանում է.

«Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները»:

2. Դիմողը գտնում է, որ քրեադատավարական օրենսդրությամբ կարգավորվող վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասին և 79-րդ հոդվածին այնքանով, որքանով պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտի կիրառման պարագայում չի ապահովվում հանցագործության համար մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքի լիարժեք իրացումը:

Դիմողի կարծիքով՝ գործող իրավակարգավորումներն ստեղծում են այնպիսի իրավիճակ, երբ հակադրվում են, մի կողմից, կասկածյալի կամ մեղադրյալի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքը, մյուս կողմից՝ արդյունավետ իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի (որպես արդար դատական քննության իրավունքի բաղկացուցիչ մաս) պարտականությունը, որի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել (իսկ դատական նիստերի դահլիճից ամբաստանյալին հեռացնելու սանկցիայի կիրառման դեպքում դատարանը չի ընդունում) պաշտպանից կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հրաժարումը:

Դիմողը նշում է, որ որպես ընդհանուր պայման պաշտպանն իր լիազորություններն ստանձնում է քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի համաձայնությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մաս), մինչդեռ ամբաստանյալի նկատմամբ սանկցիայի կիրառման դեպքում՝ առանց նրա համաձայնության ներգրավվում է հանրային պաշտպան՝ կիրառելով պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտը, ինչը վկայում է այդ իրավակարգավորումների միջև հակասության առկայության և իրավական անորոշության մասին:

Դիմողը պնդում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որոշակիորեն և հստակ կարգավորված չէ, թե որ դեպքում է պարտադիր իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու պետության՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմնի, պարտականությունը գերակայում մեղադրյալի անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքին:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշ նախադեպեր՝ դիմողը փաստում է, որ հանցագործության համար մեղա-

դրվող անձի՝ իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը բացարձակ չէ: Այդ իրավունքը դատարանի կողմից կարող է անտեսվել կամ ստորադասվել, եթե դրա համար առկա են արդարադատության գերակա շահով պայմանավորված վերաբերելի և բավարար հիմքեր: Դիմողի համոզմամբ, քրեադատավարական օրենսգիրքը պետք է հստակորեն նշի այն սահմանները, ինչպես նաև չափանիշներն ու չափորոշիչները, որոնց օգնությամբ վարույթ իրականացնող մարմինը հնարավորություն կունենա որոշել, թե արդյոք առկա են «վերաբերելի» և «բավարար» հիմքեր՝ արդարադատության գերակա շահի առկայությունը հաստատված համարելու համար:

Ըստ դիմողի՝ «Քանի դեռ Օրենսգիրքը չի սահմանում մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքից շեղվելու, նահանջելու նյութաիրավական և վարույթային հիմքերը, կշարունակվի պահպանվել իրավական անորոշություն ...» վիճարկվող նորմերի կիրառության հարցում: Միաժամանակ դիմողը գտնում է, որ «պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից որոշման կայացման համար օրենքով ամրագրված չեն հստակ և որոշակի չափանիշներ», որպիսիք կարևոր են այնքանով, որ «յուրաքանչյուր դեպքի գնահատման հիմքում կդրվեն և կապահովվեն անձի անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքի և գերակա կամ արդարադատության շահի հավասարակշռությունը»:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով անձի համար հնարավորություն է սահմանվել պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ իր ընտրությամբ պաշտպանի միջոցով: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ անձը ցանկանում է անձամբ պաշտպանել իրեն՝ չօգտվելով պաշտպանի ծառայությունից, սակայն նրա նկատմամբ կիրառվում է սանկցիա՝ նիստերի դահլիճից հեռացում, պետությունն անձի համար արդար դատաքննություն ապահովելու նպատակով սահմանում է պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Ընդ որում, նշված սանկցիայի կիրառման դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները, եթե անձը պաշտպան ունի:

Պատասխանողի պնդմամբ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ փաստաբանների պալատի միջոցով փաստաբան նշանակելու վերաբերյալ դրույթը գործում է բացառապես այն պայմաններում,

երբ անձի նկատմամբ կիրառվում է նիստերի դահլիճից հեռացում սանկցիան, անձը չունի պաշտպան և նաև ցանկություն չի հայտնում իր ընտրած փաստաբանի միջոցով իրեն պաշտպանելու: Հակառակ պարագայում կգործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչը նշանակում է, որ եթե անձը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում անգամ նիստերի դահլիճից հեռացում սանկցիայի կիրառումից հետո, ապա կարող է պաշտպանվել իր ընտրած փաստաբանի միջոցով:

Պատասխանողը եզրակացնում է, որ նման պարագայում խոսք չի կարող լինել երկու տարբեր ինստիտուտների բախման կամ մեղադրյալի իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը պարտադիր իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու դատարանի պարտականությանը ստորադասելու մասին, քանի որ մեղադրյալն ինքն է կամովին հրաժարվում իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքից:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ հաշվի առնելով մարդու և քաղաքացու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունն ու որոշակիությունը և ելնելով կողմերի փաստարկներից, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավադրույթները գնահատել ոչ միայն մարդու՝ մեղադրանքից անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու սահմանադրական իրավունքի երաշխավորվածության, այլև ընդհանրապես անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու, արդար դատաքննության իրավունքի և քրեական դատավարության մրցակցության սկզբունքի ապահովման տեսանկյունից:

5. ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, ինչից բխում է յուրաքանչյուրի հայեցողությունն օգտվել իրավաբանական օգնությունից կամ չօգտվել դրանից: Սահմանադրությունը հանրային իշխանությունից պահանջում է օրենսդրական մակարդակում ամրագրել այնպիսի ընթացակարգեր և կառուցակարգեր, որոնք արդյունավետորեն կերաշխավորեն անձի կողմից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինչպես նաև գործնականում ապահովել, որ անձն իր գիտակցված և կամավոր որոշմամբ ընտրի իր վարքագիծը՝ օգտվել իրավաբանական օգնությունից, թե՛ ոչ: Այս ընդհանուր կանոնը կիրառելի է նաև Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ կետի նկատմամբ, ըստ որի՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ ... 2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք»:

Հաշվի առնելով նշված իրավունքի կարևորությունը և նշանակությունը հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցում՝ հատկապես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի իրացման և պաշտպանության հարցում, Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ ամրագրվել է օրենքով սահմանված դեպքերում՝ պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը: Այսինքն, Սահմանադրությունը երաշխավորում է անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը նաև այն դեպքերում, երբ անձն անվճարունակության կամ օրենքով սահմանված այլ դեպքերում չի կարող օգտվել այդ իրավունքից:

Թեև Սահմանադրության 67-րդ հոդվածը հանցագործության համար մեղադրվող անձանց համար երաշխավորում է անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը, սակայն 64-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության հետ համադրված՝ երաշխավորում է ոչ միայն անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով, այլ նաև օրենքով սահմանված դեպքերում պետության կողմից տրամադրվող պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը նույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված անձանց: Օրենքի 41-րդ հոդվածը տալիս է «հանրային պաշտպանություն» հասկացության բովանդակությունը, համաձայն որի՝ հանրային պաշտպանություն է համարվում նույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը, և սահմանում է ինչպես այն անձանց ցանկը, որոնց հանրային պաշտպանություն է տրամադրվում, այնպես էլ թվարկում է այն դեպքերն ու անձանց, որոնց անվճար իրավաբանական օգնություն ցույց տրվել չի կարող:

6. Իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի ապահովումը քրեական դատավարության առանցքային սկզբունքներից մեկն է: Քրեական դատավարության մրցակցային բնույթը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված) ենթադրում է քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ կասկածյալի, մեղադրյալի կողմից ցանկություն հայտնելու դեպքում կամ այն դեպքում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես նաև օրենսդրությամբ պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Այսինքն, քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

- ա) կասկածյալը կամ մեղադրյալն այդպիսի ցանկություն է հայտնել,
- բ) այն դեպքում, երբ դա է պահանջում արդարադատության շահը,
- գ) օրենսդրությամբ պարտադիր համարվող դեպքերում:

Վերջին երկու հիմքերի առկայության դեպքում պաշտպանից հրաժարումը կարող է չընդունվել և գործում են քրեական վարույթում պաշտպանի պարտադիր մասնակցության մասին իրավակարգավորումները:

Օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Նույն հոդվածի 4-րդ մասը նախատեսում է կասկածյալի և մեղադրյալի իրավունքը մեղադրանքից պաշտպանվելու ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով, միաժամանակ սահմանելով, որ քրեական դատավարությանը վերջինների մասնակցությունը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին համապատասխան մեղադրյալն իրավունք ունի մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածը սահմանում է պաշտպանի կարգավիճակն ու իրավավիճակը և կարգավորում է դրանց հետ կապված մնացած հարցերը: Նշված հոդվածի ուժով պաշտպան է համարվում այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից: Նույն հոդվածի 3-րդ մասը թվարկում է այն դեպքերը, երբ պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, որոնք են՝

1) կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը.

2) նա լիազորված չէ մասնակցելու համապատասխան գործով հետագա վարույթին.

3) քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է քրեական գործով վարույթին մասնակցելուց՝ հաշվի առնելով քրեական դատավարությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերումը.

4) քրեական վարույթն իրականացնող մարմինը, օրենսգրքով նախատեսված դեպքերում, ընդունել է կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարումը պաշտպանից:

Ներկայացված իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ ըստ ՀՀ օրենսդրության՝ հանցագործության համար մեղադրվող անձին թույլատրվում է պաշտպանվել անձամբ (pro se), պաշտպանվել փաստաբանի միջոցով՝ նրա հետ պայմանագիր կնքելու և վճարելու եղանակով, ինչպես նաև օգտվել անվճար իրավաբանական օգնությունից հանրային պաշտպանության շրջանակներում:

7. ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, որպես կանոն, անձի կամաարտահայտության դեպքում է իրացվում նրա պաշտպանունենալու իրավունքը, իսկ ընտրած պաշտպանից անձը կարող է հրաժարվել ցանկացած ժամանակ և իր պաշտպանությունն ինքնուրույն իրականացնել: Հարկ է նշել, որ վերջինս բացարձակ իրավունքը չէ, քանի որ օրենսդիրը հստակ նախատեսել է այն դեպքերի շրջանակը, երբ անձի՝ ինքնուրույն պաշտպանվելու իրավունքը կարող է սահմանափակվել: Որոշակի հանգամանքներում, իսկ դրանք սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով, խիստ անհրաժեշտ է, որ կասկածյալը կամ մեղադրյալը ներկայացված լինի, քանի որ առանց պաշտպանի կողմից տրամադրված իրավաբանական օգնության կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող ինքնուրույն պաշտպանվել կամ լիարժեք իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Օրենսդրի հայեցողությունը նման դեպքեր սահմանելով չի սահմանափակվում: Օրենսդիրը սահմանում է նաև այն դեպքերը, երբ իրավաբանական օգնություն ստանալը պարտադիր է, իսկ անձի կամքը՝ օգտվել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, թե՛ ոչ, դադարում է լինել վճռորոշ: Նման կանոնակարգումը պետք է ուղղված լինի սահմանադրական որևէ արժեքի պաշտպանությանը: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի՝ իր պաշտպանությունն ինքնուրույն իրականացնելու իրավունքն այս իրավիճակում չի սահմանափակվում, քանզի նախատեսված կանոնակարգումները ծառայում են իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորմանն ուղղված պետության պոզիտիվ պարտականության իրականացմանը:

Ինչ վերաբերում է անձի՝ պաշտպանվելու իրավունքից հրաժարվելուն, ապա, նախ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ նշում է, թե որ դեպքում հնարավոր չէ հրաժարվել պաշտպանից, ակնհայտ է, որ մնացած դեպքերում անձը կարող է հրաժարվել պաշտպանից: Երկրորդ՝ նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 4-րդ մասն ամբողջությամբ է, որ պաշտպանից հրաժարված կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահի փոխելու իր դիրքորոշումն այդ առիթով, միայն թե նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ գործի վարույթը վերսկսելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ իրավունքի պաշտպանության և իրավունքի իրացումից հրաժարվելու ինստիտուտների կիրառման համատեքստում պետք է ապահովվել համաչափություն, իսկ առանց վերապահումների իրավունքից հրաժարվելու ինստիտուտի կիրառումը կարող է հանգեցնել իրավունքների խախտման: Իրավունքի իրացումից հրաժարվելու ինստիտուտը չի կարող հանգեցնել պետության կողմից արդարադատության շահի և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ իր վրա դրված պոզիտիվ պարտավորություններից հրաժարվելու պահանջի: Այսպիսի իրավիճակում պետությունն առաջնորդվում է մարդու իրավունքով՝ ոչ միայն որպես անձի կողմից իր վարքագծի ընտրության հնարավորություն, այլ որպես բարձրագույն արժեք:

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի նորմի սահմանադրականության հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ փաստաբանի պարտադիր մասնակցության ինստիտուտի շրջանակներում փաստաբանի մասնակցության նպատակն է ապահովել իր վստահորդի իրավունքների պաշտպանությունը, հետևաբար՝ փաստաբանի մասնակցությամբ և ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունը շարունակելը բխում է մարդու իրավունքներից և առավել արդյունավետ ընթացակարգ է ենթադրում, քան միաժամանակ ամբաստանյալի և փաստաբանի բացակայությամբ գործի քննությունը շարունակելը: Ամբաստանյալի նկատմամբ դատարանից հեռացնելը որպես սանկցիա կիրառելու դեպքում հանրային պաշտպան նշանակելու մասին իրավակարգավորումը ծառայում է որպես իրավաբանական օգնության իրավունքի երաշխավորում: Իսկ այն հարցը, թե ամբաստանյալը զրկվում է անձամբ պաշտպանվելու և լսվելու իրավունքից, կապված է նման սանկցիա կիրառելու և դատական նիստը շարունակելու հետ:

9. Ինչ վերաբերում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում մեղադրյալի ընտրությամբ փաստաբանին ներգրավելու անհնարինությանը, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում

նշել, որ այդպիսի իրավիճակներում չի բացառվում մեղադրյալի՝ իր ընտրությամբ փաստաբան ունենալու հնարավորությունը, տվյալ պարագայում օրենսդրությունն ամրագրել է պաշտպանի պարտադիր մասնակցությունը, ինչից հետևում է, որ անձը կարող է ինքն ընտրել փաստաբանին, սակայն նրա բացակայության պայմաններում պետությունը պաշտպանին կներգրավի պետական միջոցների հաշվին: **Օրենսգրքի 69-րդ հոդվածը վերաբերում է պաշտպանի պարտադիր մասնակցությանը և ոչ թե պարտադիր հանրային պաշտպանի մասնակցությանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ փաստաբանի պարտադիր մասնակցությունը չի սահմանափակում անձի՝ պետության կողմից տրամադրված փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքով, և քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից հանրային պաշտպան նշանակվելու դեպքում էլ անձը շարունակում է պահպանել իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:** Այլ է իրավիճակը, երբ անձը չունի կամ չի ցանկանում ներկայանալ փաստաբանի միջոցով: Այս դեպքում պետությունն է ներգրավում փաստաբանին, որոշ դեպքերում էլ նույնիսկ բացառում է նրանից հրաժարվելը:

10. Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է. ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղեկանքի համաձայն՝ 2017 թվականի ընթացքում արձանագրվել են հանրային պաշտպանի ծառայություններից հրաժարվելու 485 դեպքեր, որոնք կազմում են վարույթն իրականացնող մարմինների կողմից հանրային պաշտպան ներգրավելու դեպքերի ընդհանուր թվի մոտ 8%-ը: Ընդ որում, ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլում կասկածյալի կամ մեղադրյալի կողմից հանրային պաշտպանի ծառայություններից հրաժարվելու նշված դեպքերը պայմանավորված են եղել կասկածյալի կամ մեղադրյալի ընտրությամբ պաշտպան ունենալու կամ անձամբ պաշտպանվելու ցանկությամբ: Ինչ վերաբերում է ամբաստանյալին նիստերի դահլիճից հեռացնելու ձևով սանկցիա կիրառելու հետևանքով հանրային պաշտպան ներգրավելու դեպքերին, ապա 2017 թվականին գրանցված 13 դեպքերից 12-ում ամբաստանյալները չեն տվել իրենց համաձայնությունը, սակայն դատարանը ներգրավել է հանրային պաշտպանների, իսկ մի դեպքում հանրային պաշտպանը ներկայացել է դատարան, սակայն չի ներգրավվել մասնավոր պաշտպան ներգրավվելու պատճառով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «իրավաբանական օգնությունից, այն է՝ պաշտպան ունենալուց կամ նշանակված պաշտպանից հրաժարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրելի դեպքերին», 29.06.2009թ. թիվ ԵՔԲԴ/0436/01/08 որոշմամբ գտել է, որ իրավաբանական օգնությունից օգտվելու, այն է՝ պաշտպան ունենալու

վերաբերյալ անձի հստակ և կամավոր արտահայտած ցանկությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար, մասնավորապես նշելով, որ «... վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի հրաժարումը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ, հաշվի առնելով անձի տարիքը և հետազոտելով պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները, վարույթն իրականացնող մարմինը կգա այն համոզման, որ.

ա) նման ցանկություն նա հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով,

բ) նա կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները,

գ) անձն ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը»:

Վճռաբեկ դատարանը նույն որոշման մեջ արձանագրել է նաև այն փաստը, որ՝ «իր կամ այլ անձանց կողմից հրավիրված կամ օրենքով սահմանված կարգով նշանակված պաշտպանից անձի հրաժարումը վարույթն իրականացնող մարմնի կողմից ընդունելու իրավական հարցի կապակցությամբ **առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր**»:

11. Իրավաբանական օգնություն ստանալու և անձի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքներն ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում :

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության մատչելիությանը վերաբերող սկզբունքներ և ուղեցույցներ» A/RES/67/187 բանաձևի առաջին կետում ընդգծվում է, որ իրավաբանական օգնությունը հանդիսանում է իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված արդար, մարդասիրական և արդյունավետ քրեական արդարադատության համակարգի կարևորագույն տարր, մարդու այլ իրավունքների, ներառյալ արդար դատաքննության իրավունքի, իրականացման անհրաժեշտ պայման և կարևոր երաշխիք, որն ապահովում է քրեական արդարադատության գործընթացի հիմնարար արդարությունը և դրա հանդեպ հասարակության վստահությունը (կետ 1, Սկզբունք 1, կետ 14):

Նույն բանաձևում նշվում է, որ **պետությունը պետք է իրավաբանական օգնության տրամադրումը դիտարկի որպես իր պարտավորությունների և պատասխանատվության տարրերից մեկը** (Սկզբունք 2, կետ 15):

Նշված բանաձևի առաջին ուղեցույցից հետևում է, որ, հաշվի առնելով անձին առնչվող կոնկրետ հանգամանքները, դատարանը կարող է որոշել նրան տրամադրել իրավաբանական օգնություն՝ նրա մասնակցությամբ կամ առանց նրա մասնակցության, եթե դա են պահանջում արդարադատության շահերը (կետ 41):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «իրավաբանական ներկայացուցչության իրավունքը պայմանավորված չէ մեղադրյալի ներկայությամբ», գտնելով, որ «քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուրի պաշտպանության իրավունքը, որն արդյունավետորեն իրականացվում է պաշտպանի կողմից, արդար դատաքնության հիմնական հատկանիշներից մեկն է: Մեղադրյալը չի կորցնում այս իրավունքը միայն այն պատճառով, որ դատական նիստին /լսումներին/ չի մասնակցել: Օրենսդիրը պետք է կարողանա խուսափել անհիմն մերժումներից և չի կարող պատժել նրանց բացառելով իրավաբանական օգնության իրավունքը: Դատական լսումներին ամբաստանյալների մասնակցության օրինական պահանջը կարող է ապահովվել այլ միջոցներով, բացի պաշտպանվելու իրավունքից զրկելուց» («Van Geyselhem v. Belgium», app. no. 26103/95, 21/01/1999):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ դատարանը մեղադրյալի՝ անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանություն իրականացնելու իրավունքը չի դիտարկում որպես բացարձակ իրավունք: Դատարանը նշել է, որ՝ «Ճիշտ է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուրին վերապահում է իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք: Այնուամենայնիվ, չնայած փաստաբանի և վստահորդի միջև փոխհարաբերություններում վստահության կարևորությանը, այդ իրավունքը բացարձակ համարվել չի կարող» և «ներպետական դատարաններն իրավասու են որոշելու, թե արդյոք արդարադատության շահը պահանջում է պարտադիր կերպով իրավաբան նշանակել, թե ոչ» («Croissant v. Germany», app. no. 13611/88, 25/09/1992, §29 «Lagerblom v. Sweden», app. no. 26891/95, 14/04/2003): Այն հարցը, թե թույլ տալ անձին իր պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ նշանակել նրա համար փաստաբան, գտնվում է պետության հայեցողության սահմաններում, քանի որ այն առավել արդյունավետորեն կարող է իր իրավական համակարգի շրջանակներում ընտրություն կատարել արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար («Correia de Matos v. Portugal», app. no 48188/99, 15/11/2001):

Եվրոպական դատարանը միաժամանակ գտել է, որ եթե իրավաբանական օգնության համար նշանակված փաստաբանը բացահայտորեն թե-

րանում է կատարել իր պարտականությունները, ապա իշխանությունների պոզիտիվ պարտավորությունն է նրան փոխարինել (*Artico v. Italy*, app.no 6694/74, 13.05.1980, §31-38):

12. Անդրադառնալով այն հարցին, որ դատական նիստերի դահլիճից հեռացում սանկցիա կիրառելիս պաշտպանը կարող է ինքնակամ կամ պաշտպանյալի պահանջով լքել նիստերի դահլիճը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում պաշտպանյալը փաստացիորեն զրկվում է պաշտպանից, հետևաբար, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ արդարադատության շահը պահանջում է, որ օրենքով սահմանված կարգով նշանակվի հանրային պաշտպան:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի դատավարության ընդհատումներից և հետաձգումներից խուսափելու նպատակով դատարանի կողմից պաշտպանի նշանակումը ևս բխում է արդարադատության շահերից («*Croissant v. Germany*», app. no. 13611/88, 25/09/1992, §28): Քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝ գործին նոր մասնակցող պաշտպանին դատարանը բավարար ժամանակ է տրամադրում գործի նյութերն ուսումնասիրելու համար, և նա իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան գործին իր մասնակցելը, և որի արդյունքում գործի համար էական հանգամանքներ են պարզվել, ինչը կարող է հանգեցնել դատավարության ձգձգման:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ.

նախ՝ առանց ամբաստանյալի համաձայնության հանրային պաշտպան կարող է նշանակվել ելնելով միայն արդարադատության շահերից, որպիսին է, մասնավորապես, արդյունավետ դատական պաշտպանության, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքների և քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի ապահովումը:

Երկրորդ, ամբաստանյալը պետք է նախապես տեղեկացված լինի դատական նիստերի դահլիճից հեռացվելու դեպքում պաշտպանի հեռանալու հետևանքների մասին: Քանի որ իրավաբանական օգնությունն էական ազդեցություն կարող է ունենալ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը երաշխավորելու գործընթացում, Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ **պաշտպանից հրաժարվելը պետք է լինի կամավոր և գիտակցված, իսկ անձը պետք է նախապես տեղեկացվի հրաժարման հետևանքների մասին:**

Երրորդ՝ եթե նշանակվում է հանրային պաշտպան, սակայն հետագայում ամբաստանյալը ցանկություն է հայտնում ունենալ իր կողմից ընտրված պաշտպան, ապա հանրային պաշտպանի լիազորությունները, արդարադատության շահերից ելնելով, կարող է դատարանի կողմից պահպանվել, ինչը չի կարող արգելք հանդիսանալ ամբաստանյալի կողմից ընտրված պաշտպանի մասնակցության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 72-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 փետրվարի 2018 թվականի
ՍԴՈ-1403



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՂՂՁՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ
ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դ. Անանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
173

բերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2018 թվականի փետրվարի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2017 թվականի ապրիլի 11-ին⁸ Մոսկվայում:

2015 թվականի մայիսի 8-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությունը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 11-ի ՄԴՈ-1218 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2015 թվականի հունիսի 16-ին (ԱԺՈ-161-Ն):

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին կետը՝ «Ներմուծման մաքսատուրքերի (այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների, որոնք ունեն համարժեք գործողություն) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» Արձանագրության 12-րդ կետը փոփոխել և կիրառել նոր խմբագրությամբ, որով, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվի չափ է սահմանվում նախկին 1.11 տոկոսի փոխարեն 1,220 տոկոսը:

Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն Արձանագրության կիրառության արդյունքում Հայաստանի Հանրապետության համար սահմանված մաքսատուրքերի բաշխման նորմատիվը, ըստ էության, բարձրանում է 0.11 տոկոսի չափով, ինչը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար ապահովում է լրացուցիչ մուտքեր:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները Հայաստանի Հանրապետության համար ողջ ծավալով իրավական հետևանքներ կարող են առաջացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից Արձանագրության վավերացումից հետո:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 մարտի 2018 թվականի
ՄԴՈ-1404



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 թվականի Հոկտեմբերի 25-ին երեւոյնով ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ՝ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ՍՏՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 մարտի 2018թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դ. Անանյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հուլիսի 25-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի փետրվարի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Քննության առարկա կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2017 թվականի հուլիսի 25-ին՝ Երևանում, որի նպատակն է բացառել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը և այդպիսով նվազեցնել եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի և ներդրումների վրա, այդպիսով ստեղծելով բարենպաստ հարկային ռեժիմ, ինչպես նաև կանխատեսելի և կայուն հարկային դաշտ:

Կոնվենցիային կից ներկայացված է արձանագրություն, որը Կոնվենցիայի անբաժանելի մասն է:

Կոնվենցիայով սահմանվում են պայմանավորվող պետությունների ռեզիդենտ հանդիսացող անձանց՝ հարկման ենթակա գույքը և եկամուտների տեսակները, որոնցով պայմանավորված կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ մյուս կողմի ռեզիդենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը կամ գույքը հարկելուց, որի հարկման իրավունքը Կոնվենցիայով վերապահված է համապատասխան մյուս պայմանավորվող կողմին և՛ ընդհակառակը:

2. Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- չհարկել կամ հարկել նվազեցված դրույքաչափերով Իսրայելի Պետության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված որոշ տեսակի եկամուտներ, մասնավորապես՝ անշարժ գույքից ստացվող եկամուտը (6-րդ հոդված), ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը (7-րդ հոդված), շահաբաժինները (10-րդ հոդված), տոկոսները (11-րդ հոդված), ռոյալթիները (12-րդ հոդված), գույքի արժեքի հավելվածը (13-րդ հոդված), վարձու աշխատանքից եկամուտը (14-րդ հոդված),

- բացառել կրկնակի հարկումը Կոնվենցիայի 23-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող են հարկվել Իսրայելում, ապա Հայաստանը թույլ է տալիս այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Իսրայելում

վճարված եկամտահարկին հավասար գումար, և այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկից հանել Իսրայելում վճարված գույքահարկին հավասար գումար,

- բացառել խտրականությունը Կոնվենցիայի 24-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, Իսրայելի Պետության ազգային անձանց Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված չսահմանել որևէ պարտավորություն, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթակա են կամ կարող են ենթակա լինել Հայաստանի ազգային անձինք,

- Իսրայելի Պետության իրավասու մարմինն ծանուցել Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (Կոնվենցիայի 2-րդ հոդված, մաս 4),

- չհարկել Հայաստանի Հանրապետության համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այլ հավատարմագրված ուսումնական հաստատությունում ուսուցման կամ հետազոտմամբ զբաղվելու նպատակով ժամանած Իսրայելի Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի ուսուցանման կամ հետազոտման համար տրվող վարձատրությունը՝ ՀՀ առաջին անգամ մուտք գործելու օրվանից երկու տարին չզերազանցող ժամանակահատվածով (հոդված 19),

- չհարկել Կոնվենցիայի 20-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով նախատեսված այն վճարումները կամ եկամուտները, որպիսիք Հայաստանի Հանրապետությունում բնակվելու, ուսանելու կամ մասնագիտանալու նպատակով ստացել են անմիջապես մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը Իսրայելի Պետության ռեզիդենտ հանդիսացող ուսանողները կամ փորձնակները,

- Իսրայելի Պետության իրավասու մարմինն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես, փոխանակել այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ ներպետական օրենքների կատարման համար, քանի դեռ հարկումը չի հակասում Կոնվենցիային,

- երաշխավորել, որ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն բացահայտվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են բոլոր տեսակի հարկերի գնահատման կամ գանձման, հարկադիր բռնագանձման կամ դատական հետապնդման, բողոքարկումների քննման, կամ վերը նշվածի վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար (հոդված 26, կետ 2),

- թույլատրել նվազեցնել Իսրայելում հավելաճի մասին օրենքի համաձայն վճարված հարկի գումարը՝ կապված Իսրայելից արտագաղթի արդյունքում օտարելու հետ՝ Կոնվենցիայի 13-րդ հոդված 6-րդ կետի համաձայն (Արձանագրության 8-րդ կետ):

3. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտման մասին Կողմերի ծանուցումներից վերջինի ստացման օրվանից:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 13-րդ հոդվածի դրույթներին և միտված են միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հուլիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 մարտի 2018 թվականի
ՍԴՈ-1405



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՄԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՄԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՄՅՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի դեկտեմբերի 22-ին Փարիզում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև մի պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամների՝ մյուս պետությունում զբաղվածության

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018

մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի փետրվարի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև մի պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամների՝ մյուս պետությունում զբաղվածության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 22-ին Փարիզում՝ կողմերի պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամներին մյուս պետությունում վարձատրվող գործունեություն իրականացնելու հնարավորություն ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրի դրույթներին համապատասխան և փոխադարձության հիման վրա յուրաքանչյուր պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամները, ովքեր ունեն մյուս պետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված կացության հատուկ կարգավիճակ կամ դիվանագիտական քարտ, կարող են ստանալ ընդունող պետության տարածքում վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամներին Համաձայնագրով սահմանված կարգով տրամադրել ՀՀ տարածքում վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն,

- ապահովել, որպեսզի ֆրանսիական կողմը դիվանագիտական ուղիներով իրազեկվի ընտանիքի անդամին տվյալ գործունեությամբ զբաղվելու թույլտվություն տրամադրելու կամ մերժելու որոշման մասին,

- Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամի աշխատանքը թույլատրելու նպատակով ապահովել երկկողմ հարաբերությունների համար պատասխանատու դեսպանության միջոցով, իսկ միջազգային կազմակերպությունում պատվիրակությունների և մշտական ներկայացուցչությունների դեպքում միջազգային կազմակերպության արարողակարգի միջո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018

ցով Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության արարողակարգի ծառայությունն շահառուի անունից վճարովի աշխատանք իրականացնելու թույլտվություն ստանալու դիմումն ուղարկելը,

• այն դեպքում, երբ վարձատրվող աշխատանք իրականացնող պաշտոնական առաքելությունների աշխատակցի ընտանիքի անդամն իր մասնագիտական գործունեության շրջանակում կկատարի քրեական հանցագործություն, որպես ընդունող կողմ, ապահովել, որպեսզի ՀՀ իշխանությունները դիմեն Ֆրանսիայի Հանրապետության իշխանություններին տվյալ անձին ընդունող պետության քրեական իրավագործության մասով անձեռնմխելիությունից զրկելու համար:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի դեկտեմբերի 22-ին Փարիզում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև մի պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամների՝ մյուս պետությունում զբաղվածության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 մարտի 2018 թվականի
ՍԴՈ-1406



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 թվականի նոյեմբերի 24-ին ԲԲՑՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ԱՆԴԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կ. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018
183

րագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի փետրվարի 15-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին՝ Բրյուսելում:

Համաձայնագրի 382-րդ հոդվածի համաձայն՝ որպես Համաձայնագրի Կողմեր հանդես են գալիս մի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը և մյուս կողմից՝ Եվրոպական միությունը կամ դրա անդամ պետությունները, կամ՝ Եվրոպական միությունը և դրա անդամ պետությունները՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրով և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով դրանց վերապահված համապատասխան իրավասությունների համաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն վերաբերում է նաև Եվրատոմին՝ Ատոմային էներգիայի եվրոպական համայնքը հիմնադրող պայմանագրով սահմանված իր լիազորությունների համաձայն:

2. Համաձայնագրի նպատակն է ամրապնդել համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով պահպանել և ամրապնդել խաղաղությունը, ընդլայնել համագործակցությունն ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում, ստեղծել բարենպաստ պայմաններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում սերտ համագործակցության համար:

3. Համաձայնագիրը բաղկացած է հիմնական տեքստից և 12 հավելվածներից, որոնք վերաբերում են համագործակցության վերաբերյալ ոլորտային քաղաքականություններին (տրանսպորտ, էներգետիկա, շրջակա միջավայր, կլիմայի փոփոխություն, տեղեկատվական հասարակության ոլորտում համագործակցություն, սպառողների պաշտպանություն, զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավոր

րություններ), ծառայությունների առևտրին, աշխարհագրական նշումներին, պետական գնումներին, ֆինանսական աջակցությանը և խարդախության դեմ պայքարին:

Հավելվածները սահմանում են Եվրոպական միության ակտերին ՀՀ օրենսդրության մոտարկման հստակ ժամանակացույց:

4. Համաձայնագրի 35-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի հավելված և դրա անբաժանելի մաս են կազմելու Եվրոստատի՝ ամեն տարի թարմացվող Վիճակագրական պահանջների ժողովածուն, որի համաձայն պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության աստիճանական մոտարկումը վիճակագրությանն առնչվող ԵՄ օրենսդրությանը:

Համաձայնագրի նպատակներից ելնելով (113, 114, 117, 120, 122, 125, 129 և 269-րդ հոդվածներ)՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում գործող համաձայնագրերի որոշակի դրույթներ նույնպես կազմում են դրա անբաժանելի մասը:

5. Համաձայնագիրն ունի 2 արձանագրություն՝ «Ֆինանսական աջակցություն և խարդախության դեմ պայքարի ու վերահսկողության վերաբերյալ դրույթներ» և «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ»:

Համաձայնագրով Կողմերն արել են նաև խարդախության դեմ պայքարի վերաբերյալ դրույթներին առնչվող համատեղ հայտարարություն:

6. Համաձայնագրի 380-րդ հոդվածի համաձայն՝ այն փոխարինում է 1996 թվականի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում ստորագրված և 1999 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Եվրոպական Համայնքների ու դրանց անդամ պետությունների մի կողմից, և Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրին (ԳՀՀ): Կողմերի միջև կնքված բոլոր այլ համաձայնագրերում ԳՀՀ-ին կատարված հղումները մեկնաբանվում են որպես Համաձայնագրին կատարվող հղում:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ընդունել, որ ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը ամրագրված, մասնավորապես, ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում և 1990 թվականի Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան այլ փաստաթղթերում, ինչպես, օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, կազմում է ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության հիմքը և Համաձայնագրի կարևոր տարրը (հոդված 2(1)),

- պայքարել կոռուպցիայի, անդրազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության տարբեր տեսակների դեմ, խթանել կայուն զարգացումը, արդյունավետ բազմակողմանիությունը և պայքարել զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և դրանց մատակարարման համակարգերի դեմ, այդ թվում՝ ԵՄ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և ատոմային ռիսկերի նվազեցման կենտրոնի Գերազանցության նախաձեռնության միջոցով (հոդված 2(4)),

- շարունակել զարգացնել և ամրապնդել մյուս կողմի հետ Համաձայնագրի 3(2)-րդ հոդվածով սահմանված նպատակներով իրականացվող քաղաքական երկխոսությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում, այդ թվում՝ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի, ինչպես նաև ներքին բարեփոխումների վերաբերյալ (հոդված 3(1,2)),

- ակտիվացնել արտաքին և անվտանգության քաղաքականության, այդ թվում՝ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում երկխոսությունը և համագործակցությունը՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող առկա պարտավորություններին տրվող կարևորությունը, ինչպես նաև լուծել, մասնավորապես, հակամարտության կանխարգելման և ճգնաժամի կառավարման, ռիսկի նվազեցման, կիրքեռանվտանգության, անվտանգության ոլորտի բարեփոխման, տարածաշրջանային կայունության, զինաթափման, չտարածման, սպառազինությունների վերահսկման և արտահանման վերահսկման հետ կապված խնդիրներ: Համագործակցությունը պետք է հիմնված լինի ընդհանուր արժեքների ու փոխադարձ հետաքրքրությունների վրա և պետք է ուղղված լինի դրա արդյունավետության բարձրացմանը՝ օգտվելով երկկողմ, միջազգային և տարածաշրջանային հարթակներից, մասնավորապես ԵԱՀԿ (հոդված 5(1)),

- սերտորեն համագործակցել ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելման գործում՝ օգտվելով համապատասխան երկկողմ և բազմակողմ շրջանակներից (հոդված 6(3)),

- ամրապնդել հակամարտության կանխարգելման և ճգնաժամի կառավարման ոլորտում գործնական համագործակցությունը, մասնավորապես, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հնարավոր մասնակցությունը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ԵՄ կողմից իրականացվող ճգնաժամի կառավարման քաղաքացիական և ռազմական գործողություններին, ինչպես նաև համապատասխան վարժանքներին և վերապատրաստման դասընթացներին (հոդված 7),

- ակտիվացնել համատեղ ջանքերը հետագա տարածաշրջանային համագործակցության պայմանները բարելավելու համար՝ խթանելով միջսահմանային տեղաշարժով բաց սահմանների առկայությունը, բարի-դրացիական հարաբերությունները և ժողովրդավարական զարգացումը՝ այդպիսով նպաստելով կայունությանը և անվտանգությանը, ինչպես նաև աշխատել հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ (հոդված 8(1)),

- համագործակցել զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի մասով և նպաստել դրան լիարժեք համապատասխանելով զինաթափման և չտարածման վերաբերյալ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ներքո ՀՀ ստանձնած պարտավորություններին և ազգային մակարդակով կատարելով դրանք, ինչպես նաև այլ համապատասխան միջազգային պարտավորությունները: Համաձայնել, որ այս դրույթը Համաձայնագրի կարևոր տարր է (հոդված 9(1)),

- համագործակցել և ապահովել փոքր տրամաչափի զինատեսակների և թեթև զենքերի (ՓՏԶԹԶ), այդ թվում՝ դրանց զինամթերքի ապօրինի առևտրի և ավելորդ կուտակումների ոչնչացման հետ կապված կողմերի ջանքերի մասով համակարգումը, փոխլրացումը և փոխգործակցությունը՝ համաշխարհային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և, համապատասխան դեպքերում, ազգային մակարդակներով (հոդված 10(3)),

- շարունակել խթանել Միջազգային ահաբեկչության մասին համապարփակ կոնվենցիայի նախագծի վերաբերյալ երկխոսությունը և համագործակցել ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային ռազմավարության, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների կիրառման հարցում, համագործակցել ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասով միջազգային կոնսենսուսի հասնելուն նպաստելու համար (հոդված 11(3)),

- ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում համագործակցության մեջ հատկապես կարևորել իրավունքի գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը և քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները (հոդված 12(1)),

- լիովին համագործակցել իրավապահ, կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության հարցում (հոդված 12(2)),

- ապահովել Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման և վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարումը (հոդված 15(1)),

- համագործակցել քրեական և ապօրինի գործունեության, ներառյալ Համաձայնագրի 16(1)-րդ հոդվածով նախատեսված անդրազգային գործունեության կազմակերպված կամ այլ ձևով, դեմ պայքարում և դրանց կանխարգելման գործում (հոդված 16(1)),

- ամրապնդել իրավապահ մարմինների միջև երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության (Եվրոպոլի) և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության հնարավոր զարգացումը: Արդյունավետորեն ներդնել համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000թ. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և դրա երեք արձանագրություններում: Համագործակցել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳԲԵԿՕ) և ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման, խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության և իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հարցերով (հոդված 16(2)),

- համագործակցել արգելված թմրանյութերի, ինչպես նաև նոր հոգեակտիվ նյութերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված հավասարակշռված և ինտեգրված մոտեցում ապահովելու համար (հոդված 17(1)),

- զարգացնել քաղաքացիական և առևտրային գործերով դատական համագործակցությունը՝ քաղաքացիական գործերով դատական համագործակցության վերաբերյալ բազմակողմ կոնվենցիաների և, մասնավորապես, միջազգային իրավական համագործակցության և վեճերի կարգավորման, ինչպես նաև երեխաների պաշտպանության բնագավառներում միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի համաժողովի կոնվենցիաների վերաբերյալ բանակցությունների, դրանց վավերացման և կիրարկման մասով (հոդված 20(1)),

- ձեռնարկել լրացուցիչ քայլեր՝ արդյունավետ գործող շուկայական տնտեսություն զարգացնելու և Հայաստանի Հանրապետության տնտեսական ու ֆինանսական կարգավորումներն ու քաղաքականությունները

Համաձայնագրով համաձայնեցված դեպքերում Եվրոպական միության տնտեսական ու ֆինանսական կարգավորումներին ու քաղաքականություններին աստիճանական մոտարկելու ուղղությամբ (հոդված 22(2)),

- համագործակցել հարկային ոլորտում պատշաճ կառավարումն ընդլայնելու հարցում՝ տնտեսական հարաբերությունների, առևտրի, ներդրումների և արդար համագործակցության հետագա կատարելագործման նպատակով (հոդված 25),

- ընդլայնել և ամրապնդել համագործակցությունը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի և հարկային վարչարարության կատարելագործմանն ու զարգացմանը, այդ թվում՝ հարկահավաքման և հսկողության կարողությունների ընդլայնմանը, ապահովել արդյունավետ հարկային հավաքագրում և ամրապնդել հարկային խարդախությունների ու հարկերի վճարումից խուսափելու դեմ պայքարը: Խտրականություն չդնել ներմուծված արտադրանքի և նմանատիպ տեղական արտադրանքի միջև՝ 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՍԱԳՀ 1994) I և III հոդվածներին համապատասխան (հոդված 27),

- զարգացնել համագործակցությունը՝ խարդախությանը հակազդելու ու դրա դեմ պայքարելու և ակցիզային հարկով հարկվող ապրանքների մաքսանենգության դեմ պայքարի համատեղ քաղաքականություններ որդեգրելու նպատակով (հոդված 28),

- ընդլայնել և ամրապնդել տրանսպորտի ոլորտում համագործակցությունը՝ կայուն տրանսպորտային համակարգերի զարգացմանը նպաստելու նպատակով, խթանել արդյունավետ, ապահով և անվտանգ տրանսպորտի աշխատանքը, ինչպես նաև՝ տրանսպորտային համակարգերի ինտերմոդալությունն ու փոխգործողությունը, փորձել ընդլայնել իրենց տարածքների միջև հիմնական տրանսպորտային հաղորդակցության ուղիները (հոդված 36),

- մշակել և ամրապնդել շրջակա միջավայրին առնչվող հարցերի մասով համագործակցությունը՝ դրանով նպաստելով կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի ապահովմանը (հոդված 45),

- մշակել և ամրապնդել համագործակցությունը՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործընթացում՝ հաշվի առնելով Կողմերի հավասարության և փոխադարձ օգուտի վրա հիմնված շահերը, ինչպես նաև այդ ոլորտում երկկողմ և բազմակողմ հանձնառությունների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը (հոդված 51),

- խթանել էլեկտրոնային հաղորդակցությունների ոլորտում Եվրոպական միության կարգավորում իրականացնողների և Հայաստանի Հանրապետության կարգավորում իրականացնող ազգային մարմնի միջև համագործակցությունը (հոդված 64),

- համագործակցել գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացումը խթանելու հարցում՝ մասնավորապես քաղաքականությունների և օրենսդրության աստիճանական մոտարկման միջոցով, inter alia, ունենալով Համաձայնագրի 71-րդ հոդվածով սահմանված նպատակները (հոդվածներ 70, 71),

- փոխշահավետության հիման վրա և ապահովելով մտավոր սեփականության իրավունքների պատշաճ և արդյունավետ պաշտպանությունը, խթանել համագործակցությունը քաղաքացիական գիտահետազոտության, տեխնոլոգիական զարգացման և նորարարության բոլոր ոլորտներում (հոդված 78),

- համագործակցել սպառողների պաշտպանության բարձր մակարդակ և սպառողների պաշտպանության իրենց համակարգերի միջև համատեղելիություն ապահովելու համար (հոդված 81),

- համագործակցությունն ու քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու համար փոխգործակցել կրթության և վերապատրաստման ոլորտում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և վերապատրաստման համակարգերը Եվրոպական միության քաղաքականություններին ու գործելակերպերին մոտարկելու նպատակով, ինչպես նաև համագործակցել ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը խթանելու հարցում, խրախուսել կրթության և վերապատրաստման բոլոր մակարդակներում համագործակցությունն ու թափանցիկությունը՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահելով մասնագիտական և բարձրագույն կրթությունը (հոդված 93),

- խթանել մշակութային համագործակցությունը՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայում ամրագրված սկզբունքների համաձայն, ինչպես նաև ձգտել քաղաքական կանոնավոր երկխոսության՝ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող, այդ թվում՝ Եվրոպական միությունում և Հայաստանի Հանրապետությունում մշակութային արդյունաբերության զարգացման ոլորտներում: Ապահովել, որպեսզի կողմերի միջև համագործակցությունը խթանի միջմշակութային երկխոսությունը, այդ թվում՝ Եվրոպական միությունից և Հայաստանի Հանրապետությունից մշակույթի ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության միջոցով (հոդված 96),

- Համաձայնագրի 102-րդ հոդվածով նախատեսված նպատակներով երկխոսություն հաստատել քաղաքացիական հասարակության հետ համագործակցության վերաբերյալ (հոդված 102),

3(91)2018

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- ամրապնդել և խրախուսել միջսահմանային համագործակցության զարգացումը՝ Համաձայնագրով նախատեսված ոլորտներում, ինչպիսիք են, *inter alia*, տրանսպորտը, էներգետիկան, բնապահպանությունը, հաղորդակցության ցանցերը, մշակույթը, կրթությունը, զբոսաշրջությունը և առողջապահությունը (հոդված 107(1)),

- մշակել և ամրապնդել համագործակցությունը բնական և տեխնածին աղետների դեմ պայքարի հարցերով (հոդված 109),

- Եվրոպական միության ապրանքների համար տրամադրել ազգերի առավել բարենպաստության ռեժիմ՝ 1994 թվականի ապրիլի 15-ին կնքված Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնադրման Մարաքեշի Համաձայնագրի (ԱՀԿ համաձայնագիր) 1A հավելվածում ընդգրկված՝ ՍԱԳՀ 1994-ի I հոդվածի, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունների համաձայն, որոնք ներառվել են Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը *mutatis mutandis* (հոդված 113),

- ապահովել սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների (ՄԲՍ) մշակումը և կիրառումը համաչափության, թափանցիկության, խտրականության բացառման և գիտական հիմնավորման սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները, ինչպես, օրինակ՝ 1951 թվականի Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայով (ԲՊՄԿ), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ԿԱՀԿ) և Կողեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի (Կողեքս) կողմից սահմանված ստանդարտները (հոդված 135),

- Համաձայնագրի VI մասի 5-րդ գլխի B բաժնի համաձայն կատարված և VIII-C հավելվածում նշված վերապահումներով կարգավորվող յուրաքանչյուր ոլորտի դեպքում թույլ տալ Եվրոպական միության ձեռնարկատերերին իրենց հաստատությունում աշխատանքի վերցնել Եվրոպական միության ֆիզիկական անձանց՝ պայմանով, որ այդ աշխատողները 153-րդ հոդվածով սահմանված հիմնական աշխատակիցներ և վերապատրաստում անցնող շրջանավարտներ են: Թույլատրել հիմնական աշխատակիցների և վերապատրաստում անցնող շրջանավարտների մուտքը և ժամանակավոր կացությունը ներկորպորատիվ փոխադրվողների դեպքում մինչև երեք տարի ժամանակահատվածով, հաստատության գործունեության նպատակներով բիզնես այցելուների դեպքում՝ 90 օր՝ ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում, և մեկ տարի՝ վերապատրաստում անցնող շրջանավարտների դեպքում (հոդված 154),

- անհապաղ պատասխանել մյուս Կողմի՝ ընդհանուր կիրառության ՀՀ որևէ միջոցառման կամ միջազգային համաձայնագրի վերաբերյալ որոշակի տեղեկություններ տրամադրելու մասին բոլոր պահանջներին, որոնք առնչվում են Համաձայնագրին կամ ազդում են դրա վրա (հոդված 162),

- ապահովել, որպեսզի ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները կարգավորող մարմիններն ունենան բավականաչափ լիազորություններ, որպեսզի կարգավորեն ոլորտը, և ունենան համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կատարեն իրենց հանձնարարված առաջադրանքը (հոդված 171(2)),

- համապատասխան միջոցներ ընդունել կամ իրականացնել՝ առանձին կամ միասին խոշոր օպերատոր հանդիսացող մատակարարների հակամրցակցային գործելակերպը կանխելու նպատակով (հոդված 175),

- իրականացնել ֆինանսական ծառայությունների ՀՀ կարգավորումների մոտարկումը Եվրոպական միության օրենսդրությանը (հոդված 189),

- ընդունել տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական միության համապատասխան օրենսդրությանն աստիճանական մոտարկման կարևորությունը (հոդված 192),

- երկկողմ ներդրումները դյուրացնելու նպատակով, ոչ ուշ, քան Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո և, այդուհետ՝ պարբերաբար, համատեղ դիտարկել ներդրումային միջավայրն ու ներդրումների վերաբերյալ իրավական դաշտը (հոդված 203),

- չկիրառել որևէ սահմանափակում և թույլ տալ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվին ցանկացած վճարման կամ փոխանցման կատարում ազատ փոխարկելի արժույթով և Միջազգային արժութային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին համապատասխան (հոդված 204),

- տրամադրել մտավոր սեփականության իրավունքների ազգային կամ տարածաշրջանային մակարդակով սպառման ռեժիմ (հոդված 211),

- հեղինակներին, կատարողներին, հնչունագրեր արտադրողներին, հեռարձակող կազմակերպություններին վերապահել Համաձայնագրի համապատասխանաբար՝ 213-216-րդ հոդվածներով նախատեսված բացառիկ իրավունքները (հոդվածներ 213-216),

- պահպանել Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրության դրույթները, Ապրանքային նշանների իրավունքի մասին պայմանագրի և Նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ Նիցցայի համաձայնագրի պահանջները (հոդված 224),

- նախատեսել ապրանքային նշանների գրանցման համակարգ, որտեղ ապրանքային նշանների հարցերով համապատասխան մարմնի կողմից կայացված յուրաքանչյուր վերջնական բացասական որոշում հաղորդվում է գրավոր և պատշաճորեն հիմնավորված է (հոդված 226 (1)),

- տրամադրել ապրանքային նշանների հայտերի և ապրանքային նշանների գրանցումների վերաբերյալ տվյալների հանրամատչելի էլեկտրոնային բազա (հոդված 226(3)),

- հանրահայտ ապրանքային նշանների պահպանությունն ուժի մեջ դնելու նպատակով, ինչպես նշված է Փարիզյան կոնվենցիայի (1967 թվական) 6 bis հոդվածում և ԹՐԻՓՍ համաձայնագրի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններում, կիրառել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) անդամ պետությունների ասամբլեաների 1999 թվականի սեպտեմբերի 20-29-ը տեղի ունեցած հանդիպումների երեսունչորսերորդ շարքին Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզի Միության ասամբլեայի և ՄՍՀԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Հանրահայտ նշանների պաշտպանության մասին դրույթների վերաբերյալ համատեղ առաջարկությունը (հոդված 227),

- Հայաստանի Հանրապետության այն ավելի վաղ գրանցված ապրանքային նշանները, որոնք բաղկացած են Եվրոպական միության «Կոնյակ» կամ «Շամպայն» աշխարհագրական նշումից կամ պարունակում են այդ նշումները՝ ներառյալ նման արտադրանքի համար գրանցված և համապատասխան հատկորոշմանը չհամապատասխանող սղագրության կամ թարգմանության մեջ, անվավեր կամ չեղյալ ճանաչել կամ փոփոխել, որպեսզի վերացվի այդ անվանումը որպես ամբողջ ապրանքային նշանի տարր Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո «Կոնյակի» և «Շամպայնի» համար համապատասխանաբար ամենաուշը 14 տարվա և երկու տարվա ընթացքում (հոդված 235(5)),

- պահպանել Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի դրույթները և գործադրել բոլոր խելամիտ ջանքերը Արտոնագրային իրավունքի մասին պայմանագրին համապատասխանելու համար (հոդված 246),

- ապահովել քաղաքացիական դատավարության պատշաճ ընթացակարգեր և իրավական պաշտպանության միջոցներ առևտրային գաղտնիքի տիրապետող ցանկացած անձի համար՝ առևտրային գաղտնիքի ձեռքբերումը, օգտագործումը կամ բացահայտումը կանխելու, և դրա դիմաց վնասի փոխհատուցում ստանալու համար, երբ դա իրականացվել է ազնիվ առևտրային գործելակերպին հակասող ձևով (հոդված 249),

- պաշտպանել բույսերի սորտերի նկատմամբ իրավունքները Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային կոնվենցիային (UPOV) համապատասխան, որը ներառում է նաև սելեկցիոների իրավունքներից բացառությունները, որոնք նշված են այդ Կոնվենցիայի 15-րդ հոդվածում, և համագործակցել այդ իրավունքները պաշտպանելու և դրանց իրականացումն ապահովելու նպատակով, ոչ ուշ, քան Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի հետո (հոդված 253),

- ապահովել, որ դատական մարմինները կարողանան, դիմումատուի պահանջով, ենթադրյալ իրավախախտի մասով ձեռնարկել հայցի ապահովման միջոց՝ մտավոր սեփականության իրավունքի ցանկացած նախապատրաստվող խախտում կանխելու համար (հոդված 258(1)),

- ապահովել, որ այն դեպքում, երբ դիմումատուն ներկայացնում է այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են վտանգել վնասների հատուցումը, դատական մարմինները կարողանան հանձնարարել ենթադրյալ իրավախախտի շարժական և անշարժ գույքի վրա, որպես նախազգուշական միջոց, արգելանք դնել, ինչպես նաև սառեցնել նրա բանկային հաշիվները և այլ ակտիվներ (հոդված 258(3)),

- հաստատել 2012 թվականի «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրով (ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագիր) ստանձնած փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրով սահմանված այդ իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ ՀՀ՝ իր I Առդիրի համապատասխան հավելվածներով սահմանված մասնագրերը Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում և կիրառվում են վեճերի երկկողմ կարգավորման ժամանակ, ինչպես նախատեսված է 13-րդ գլխով (հոդված 269),

- ինչպես ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի I Առդիրի համապատասխան հավելվածներով, այնպես էլ Համաձայնագրի XI Հավելվածով կարգավորվող գնումների նկատմամբ կիրառել Համաձայնագրի 271-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ կանոնները (հոդված 271),

- ապրանքներ տրամադրող կամ ծառայություններ մատուցող ձեռնարկություններին չտրամադրել սուբսիդիաներ, եթե այդ սուբսիդիաները բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել մրցակցության կամ առևտրի վրա (հոդված 290),

- ապահովել, որ ձեռնարկությունները ՀՀ կողմից տրամադրվող սուբսիդիաներն օգտագործեն միայն հանրային քաղաքականության այն նպատակով, որի համար սուբսիդիաները տրվել են (հոդված 296),

- Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան հաստատել կամ պահպանել դատական, արբիտրաժային կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր՝ Համաձայնագրով կարգավորվող հարցերի հետ կապված վարչական միջոցները շտապ վերանայելու և, հիմնավորված դեպքերում, ուղղելու նպատակով (հոդված 312(1)),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Եվրոպական միության իրավասու մարմինների հետ համագործակցեն՝ եվրոն և դրամը կեղծումից արդյունավետորեն պաշտպանելու նպատակով:

տակով: Այդ համագործակցությունը պետք է ներառի եվրոյի և դրամի կեղծումը կանխելու և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ աջակցությունը ներառյալ տեղեկությունների փոխանակումը (հոդված 352),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իշխանությունները Եվրոպական հանձնաժողովին անհապաղ փոխանցեն Եվրոպական միության ֆինանսական միջոցների իրականացման հետ կապված խարդախության, կոռուպցիայի կամ ցանկացած այլ չարաշահման, այդ թվում՝ շահերի բախման կասկածվող կամ փաստացի դեպքերի մասին իրենց հայտնի դարձած ցանկացած տեղեկություն. խարդախության և կոռուպցիայի կասկածի դեպքում պետք է տեղեկացվի նաև Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը (հոդված 355(1)),

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի շրջանակներում, Եվրոպական միության ֆիզիկական և իրավաբանական անձինք ունենան իրենց անձնական և գույքային իրավունքների պաշտպանության նպատակով ՀՀ իրավասու դատարաններ և վարչական մարմիններ դիմելու իրավունք՝ առանց խտրականության՝ ՀՀ քաղաքացիների համեմատ (հոդված 367) և այլն:

8. Համաձայնագրի VI մասի 13-րդ գլխով սահմանվում են Համաձայնագրի VI մասի դրույթների մեկնաբանման և կիրառման հետ կապված վեճերի լուծման կառուցակարգերը: Մասնավորապես սահմանվում է, որ եթե Կողմերը վեճը չեն կարգավորում խոհրդակցությունների միջոցով, ինչպես նախատեսված է 318-րդ հոդվածով, ապա խորհրդակցություններ պահանջող Կողմը կարող է պահանջել ստեղծել արբիտրաժային կոլեգիա, որի ստեղծման կարգը և խնդիրները սահմանվում են Համաձայնագրի 13-րդ գլխով:

Համաձայնագրի 340-րդ հոդվածով սահմանվում է, որ երբ ծագում է վեճ որևէ առանձին միջոցի շուրջ, որով խախտվում է Համաձայնագրով սահմանված որևէ պարտավորություն և երկու Կողմերի մասնակցությամբ մեկ այլ միջազգային համաձայնագրով, այդ թվում՝ ԱՀԿ համաձայնագրով սահմանված որևէ էականորեն համարժեք պարտավորություն, ապա իրավական պաշտպանություն փնտրող Կողմն ընտրում է վեճի կարգավորման հարթակը: Համաձայնագրի 342-րդ հոդվածը նախատեսում է, որ Համաձայնագրի 169, 180, 189 և 192-րդ հոդվածների մոտարկման վերաբերյալ դրույթների մեկնաբանման առնչությամբ առաջացող վեճի արդյունքում Եվրոպական միության օրենսդրության դրույթի մեկնաբանության հարց առաջանալու դեպքում արբիտրաժային կոլեգիան դիմում է Եվրոպական միության արդարադատության դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ ընթացակարգային որոշում կայացնելու համար՝ պայմանով, որ այդ հարցն անհրաժեշտ է արբիտրաժային կոլեգիայի որոշման համար: Նման դեպքերում արբիտրաժային կոլեգիայի ընթացակարգային որոշումների նկատմամբ կիրառվող վերջնաժամկետները կասեցվում են մինչև

Եվրոպական միության արդարադատության դատարանի որոշման կայացումը: Եվրոպական միության արդարադատության դատարանի որոշումը պարտադիր է արբիտրաժային կոլեգիայի համար:

9. Համաձայնագրի VIII մասի 1-ին գլխով նախատեսվում է Գործընկերության խորհրդի ստեղծում, որը վերահսկում և պարբերաբար դիտարկում է Համաձայնագրի կիրարկումը: Գործընկերության խորհուրդը բաղկացած է Կողմերի նախարարական մակարդակով ներկայացուցիչներից և հանդիպում է պարբերաբար՝ տարին առնվազն մեկ անգամ և երբ հանգամանքները պահանջում են: Գործընկերության խորհուրդը կարող է հանդիպել ցանկացած կազմով՝ փոխադարձ համաձայնությամբ: Գործընկերության խորհուրդն ուսումնասիրում է Համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած էական նշանակություն ունեցող հարց և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմանի կամ միջազգային բնույթի այլ հարցեր՝ Համաձայնագրի նպատակներն իրագործելու համար:

10. Համաձայնագրի 385-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագիրը ենթակա է վավերացման կամ հաստատման՝ Կողմերի ընթացակարգերին համապատասխան, և այն ուժի մեջ է մտնում վավերացման կամ հաստատման մասին վերջին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

Չնայած վերոգրյալին, սահմանվում է, որ Եվրոպական միությունը և Հայաստանի Հանրապետությունը կարող են ժամանակավորապես կիրառել Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասամբ՝ իրենց համապատասխան ներքին ընթացակարգերի համաձայն՝ ըստ կիրառելիության: Ժամանակավոր կիրառումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից հետևյալն ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը՝ (a) Եվրոպական միության ծանուցումը՝ այդ նպատակի համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին՝ Համաձայնագրի այն մասերի մատնանշմամբ, որոնք պետք է կիրառվեն ժամանակավորապես, և (b) Հայաստանի Հանրապետության իր ներպետական ընթացակարգերի համաձայն ի պահ հանձնված վավերացման մասին փաստաթուղթը:

Հիշյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության 2018 թվականի փետրվարի 6-ի տեղեկանքի համաձայն՝ Եվրոպական միությունը 2017 թվականի դեկտեմբերի 22-ին Համաձայնագրի 385-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ծանուցել է հայկական կողմին, որ ավարտել է Համաձայնագրի ժամանակավոր կիրառման համար նախատեսված ընթացակարգերը: Ծանուցման մեջ նշված են Համաձայնագրի այն դրույթները, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագիրը վավերացվելուց հետո մինչև դրա ուժի մեջ մտնելը Եվրոպական միության և Հայաստանի միջև կգործեն ժամանակավորապես, այնքանով, որքանով դրանք վերաբերում են Եվրոպական միության իրավասությանը, այդ թվում՝ Եվրոպական միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքա-

կանության մշակման և իրականացման իրավասությանը: Ժամանակավոր կիրառվելիք դրույթներն են. ա) I մասը, բ) II մասի 3, 4, 7 և 8-րդ հոդվածները, գ) III մասի 12 և 15-րդ հոդվածները, 14-րդ հոդվածի 1-ին կետը, դ) V մասի (i) 1-ին գլուխը՝ բացառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի, (ii) 2-րդ գլուխը բացառությամբ 42-րդ հոդվածի 2-րդ կետի (f) ենթակետի և 42-րդ հոդվածի 2-րդ կետի (g) ենթակետի՝ միջուկային անվտանգությանն առնչվող հղումներ, (iii) 3-րդ գլուխը բացառությամբ 46-րդ հոդվածի 1-ին կետի (a), (c) և (e) ենթակետերի, և (iv) 7, 10, 14 և 21-րդ գլուխները, ե) VI մասը բացառությամբ 205-րդ հոդվածի 2-րդ կետի (b) և (c) ենթակետերի, 203-րդ հոդվածը ժամանակավորապես կկիրառվի միայն ուղղակի ներդրումների դեպքում, զ) VII մասը, է) VIII մասը բացառությամբ 380-րդ հոդվածի 1-ին կետի, քանի դեռ այդ մասի դրույթները սահմանափակված են Համաձայնագրի ժամանակավոր կիրառումն ապահովելու նպատակով, ը) I հավելվածը և II հավելվածը բացառությամբ Եվրատոմին արվող հղումների, որոնք վերաբերում են ենթակառուցվածքների, կանոնակարգերի կիրառման և միջուկային քաղաքականություններին, III, VI, VIII, IX, X, XI և XII հավելվածները, ինչպես նաև «Ֆինանսական աջակցություն և խարդախության դեմ պայքարի ու վերահսկողության վերաբերյալ դրույթներ», VII մասի «Խարդախության դեմ պայքարի ու վերահսկողության վերաբերյալ դրույթներ» 2-րդ գլխի վերաբերյալ I արձանագրությունը և «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» II արձանագրությունը:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ. «Եթե միջազգային պայմանագրով նախատեսվում է, որ դա ուժի (գործողության) մեջ է մտնում ստորագրման պահից, կամ մինչև ուժի մեջ մտնելը պայմանագիրը ամբողջությամբ կամ որոշակի մասով կարող է ժամանակավորապես կիրառվել, ապա հայկական կողմից այդ պայմանագիրն ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը պարտավոր է բանակցությունների ընթացքում՝ նախքան ստորագրելը, մյուս կողմի հետ հասնել այն բանին, որ տեքստի նման դրույթները փոխարինվեն այնպիսի դրույթներով, որոնք **բացառեն հայկական կողմի համար պայմանագրի կիրառումը նախքան սույն օրենքով սահմանված կարգով դրա վավերացումը կամ հաստատումը**»:

Վերոշարադրյալի առնչությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության և Համաձայնագրի դրույթների համակարգված վերլուծության հիման վրա Մահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Համաձայնագրի 385-րդ հոդվածի դրույթները բացառում են դրա ժամանակավոր կիրառումը մինչև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացման համար սահմանված ներպետական ընթացակարգերի իրականացումը:

11. Համաձայնագրի առանձին դրույթներով ստանձնված պարտավորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետությունը նաև պարտավորվում է ըստ ժամանակացույցի իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության մոտարկում Համաձայնագրի I-VII և XII հավելվածներում նշված միջազգային փաստաթղթերին, Եվրոպական միության ինստիտուտների կողմից ընդունված իրավական ակտերին կամ դրանց առանձին դրույթներին:

Եվրոպական միության իրավական ակտերի մասով խոսքը վերաբերում է, մասնավորապես, Եվրոպական միության Խորհրդի, Խորհրդարանի, Հանձնաժողովի կողմից ընդունված հրահանգներին (դիրեկտիվներին), կանոնակարգերին, պատվիրակված կանոնակարգերին, որոշումներին: Ընդ որում, Համաձայնագրի 372(2)-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական միությունը գնահատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկելու գործընթացը Համաձայնագրով սահմանված կարգով: Այդ գնահատումը ներառում է կիրարկման և իրականացման ասպեկտները: Այդ գնահատումները կարող են իրականացվել Եվրոպական միության կողմից առանձին կամ Հայաստանի Հանրապետության հետ համաձայնությամբ: Գնահատման գործընթացը դյուրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական միությանը հաշվետվություն է ներկայացնում մոտարկման գործընթացում գրանցված առաջընթացի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում՝ նախքան Համաձայնագրով սահմանված անցումային ժամանակահատվածի ավարտը:

Համաձայնագրի 362(8)-րդ հոդվածի համաձայն. «Գործընկերության խորհուրդն ունի Հավելվածները թարմացնելու կամ փոփոխելու լիազորություն՝ չհակասելով սույն Համաձայնագրի VI մասով սահմանված հատուկ դրույթներին»: Իսկ 371-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանն աստիճանական մոտարկման նպատակին համահունչ՝ Գործընկերության խորհուրդը պարբերաբար դիտարկում և թարմացնում է Համաձայնագրի հավելվածները, *inter alia*, Եվրոպական միության օրենսդրության զարգացումը և Կողմերի կողմից պատշաճ համարվող միջազգային փաստաթղթերով սահմանված կիրառելի ստանդարտներն արտացոլելու նպատակով՝ **հաշվի առնելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարումը**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համաձայնագրին կից հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը, ինչպես նաև այն, որ հիշատակված հավելվածները Հայաստանի Հանրապետության համար առաջացնում են ուղղակի պարտավորություններ, հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերի վերաբերյալ օրենսդրության պահանջները և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր մի շարք որոշումներով

(ՄԴՈ-287, ՄԴՈ-525, ՄԴՈ-576 և այլն) արտահայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային (միջպետական) պայմանագրերի փոփոխությունները և լրացումները ենթակա են վավերացման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, դրանցում կատարվող յուրաքանչյուր հավելում կամ փոփոխություն Հայաստանի Հանրապետության համար իրավաբանական ուժ է ստանում միայն դրանց վավերացման ընթացակարգն անցնելուց հետո, **ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրի 371-րդ հոդվածի՝ «հաշվի առնելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարումը» դրույթը համապատասխանում է միջազգային պայմանագրերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին ու ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, և այն պետք է մեկնաբանվի բացառապես դրանց համատեքստում: Դա ենթադրում է, որ Գործընկերության խորհրդի կողմից Համաձայնագրի հավելվածների թարմացումները կամ փոփոխությունները Հայաստանի Հանրապետության համար իրավական հետևանքներ կարող են առաջացնել միայն Համաձայնագրի վավերացման համար նախատեսված ընթացակարգերն անցնելուց հետո:**

12. Համաձայնագրի VIII հավելվածով, որն իր հերթին բաղկացած է 7 հավելվածներից, ներկայացվում են Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության ծառայությունների առևտրի և հիմնադրման վերաբերյալ հանձնառություններն ու վերապահումները՝ Համաձայնագրի VI մասի 5-րդ գլխին համապատասխան: Համաձայնագրի VIII հավելվածի VIII-A-ից VIII-D հավելվածները վերաբերում են Եվրոպական միության հանձնառություններին և կատարված վերապահումներին, իսկ VIII-E-ից VIII-G հավելվածները՝ Հայաստանի Հանրապետության հանձնառություններին և կատարված վերապահումներին: Ընդ որում, հիշյալ Հավելվածում վերապահումները կատարված են ինչպես Եվրոպական միության անունից, այնպես էլ Եվրոպական միության անդամ առանձին պետությունների անունից:

Հայաստանի Հանրապետությունը կատարել է մի շարք հորիզոնական և ոլորտային վերապահումներ: Հորիզոնական վերապահումների մասով նշվում է, որ «Հայաստանն իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու ցանկացած միջոց, որով տրամադրվում է տարբերակված ռեժիմ գործող կամ մինչև սույն Համաձայնագիրն ուժի մտնելու օրը կնքված ցանկացած միջազգային ներդրումային պայմանագրի կամ այլ առևտրային համաձայնագրի համաձայն: Հայաստանն իրավունք է վերապահում ընդունելու կամ պահպանելու ցանկացած միջոց, որով երկրին տրամադրվում է տարբերակված ռեժիմ՝ ցանկացած գործող կամ հետագայում կնքվելիք երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի համաձայն, որով (a) ստեղծվում է ծառայությունների և ներդրումների միասնական շուկա, (b) շնորհվում է հիմնադրման իրավունք, կամ (c) պահանջվում է օրենսդրության մոտարկում մեկ կամ ավելի տնտեսական ոլորտներում: ... Կոմունալ

ծառայություններ համարվող տնտեսական գործունեության վրա կարող են տարածվել պետական մենաշնորհները կամ մասնավոր օպերատորներին շնորհված բացառիկ իրավունքները: ... Օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում օտարերկրյա ֆիզիկական անձինք չեն կարող Հայաստանում ձեռք բերել հողի սեփականության իրավունք»:

Միաժամանակ, ոլորտային վերապահումների մասով Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ. «Իրավական փաստաթղթերի վարման և սերտիֆիկացման ծառայությունների առնչությամբ նոտարական ծառայությունները վերապահվում են Հայաստանի Հանրապետությանը: Աուդիտորական ծառայությունների առնչությամբ՝ այն իրավաբանական անձը, որը գրանցված է որպես փակ բաժնետիրական ընկերություն կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի պահանջներին, ունի աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա ստանալու իրավասություն: ... Տեխնիկական փորձարկման և վերլուծության ծառայություն մատուցողները պետք է լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստեղծված իրավաբանական անձինք: ... Բեռների փոխադրման գործակալության ծառայությունների և բեռների զննման առնչությամբ մաքսագերծումը պետք է կատարվի Հայաստանում գտնվող լիցենզավորված մաքսային գործակալի կողմից»:

Համաձայնագրի VIII հավելվածով Հայաստանի Հանրապետությունը նաև պարտավորվում է թույլ տալ Եվրոպական միության՝ պայմանագրային հիմունքներով ծառայություն մատուցողների և անկախ մասնագետների կողմից ՀՀ տարածքում ծառայությունների մատուցումը VIII-G հավելվածով ներկայացված տնտեսական գործունեության համար ֆիզիկական անձանց ներկայությամբ՝ Համաձայնագրի 156 և 157-րդ հոդվածներին համապատասխան և համապատասխան սահմանափակումների կիրառմամբ:

13. Համաձայնագրի 2-րդ՝ «Մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցության վերաբերյալ» վերտառությամբ արձանագրությամբ սահմանվում է կողմերի պարտավորությունը՝ օգնել միմյանց իրենց իրավասության շրջանակներում գտնվող ոլորտներում Արձանագրությամբ սահմանված ձևով և պայմաններով՝ ապահովելու համար մաքսային օրենսդրության ճիշտ կիրառումը, մասնավորապես՝ կանխելով և ուսումնասիրելով այդ օրենսդրությունը խախտող գործողությունները և պայքարելով դրանց դեմ:

14. ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն

վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Համաձայնագրով ամրագրված պարտավորությունների վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի բովանդակությանը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ քննության առարկա Համաձայնագրով ստանձնված պարտավորությունների իրացումը, ի թիվս այլնի, նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության առանձին հիմնական նպատակների իրականացմանը նպաստելուն և խթանմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

16 մարտի 2018 թվականի
ՄԴՈ-1407



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԼՈՒՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ԿՈՇՏՈՑԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈԴՈՍՅԱՆԻ,
ՆԱԴԻՆԵ ՊՈԴՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-Ը ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 154-Ը
ՀՈԴՎԱԾԻ, 158-Ը ՀՈԴՎԱԾԻ 2-Ը ՄԱՍԻ, 159-Ը ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների ներկայացուցիչ Ա. Կիվիրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լուսինե Ավետիսյանի, Անահիտ Կոչտոյանի, Անդրանիկ Պողոսյանի, Նարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ հոդվածի 2-րդ մասի, 159-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(91)2018

Գործի քննության ամիսը Լ. Ավետիսյանի, Ա. Կոչտոյանի, Ա. Պողոսյանի, Ն. Պողոսյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Քաղաքացիական հայցվորը» վերտառությամբ 60-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս»:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Քաղաքացիական հայցի քննության ընթացքում կիրառվող օրենսդրությունը» վերտառությամբ 154-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

3. Քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

4. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները»:

Օրենսգրքի՝ «Քաղաքացիական հայցի հարուցումը» վերտառությամբ 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ մասը սահմանում է.

«2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար»:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Հայցադիմում ընդունելուց հրաժարվելը» վերտառությամբ 159-րդ հոդվածը սահմանում է.

«Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել հայցադիմումն ընդունելուց, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին»:

Օրենսգրքի 60-րդ հոդվածը փոփոխության է ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի մայիսի 25-ին ընդունված ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով, որով 60-րդ հոդվածի 1-ին մասում «արգելված» բառը փոխարինվել է «չթույլատրված» բառով: Օրենսգրքի 154-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածները որևէ օրենսդրական փոփոխության կամ լրացման չեն ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2016 թվականի մայիսի 27-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան է ներկայացվել ամբաստանյալ Վ. Պերմյակովի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով տուժողների իրավահաջորդներ Լ. Ավետիսյանի, Ա. Կոշտոյանի, Ա. Պողոսյանի, Ն. Պողոսյանի ներկայացուցիչ Ա. Կիվիրյանի քաղաքացիական հայցն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության թիվ ՇԴ/0072/01/15 քրեական գործով ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2016 թվականի հունիսի 30-ին որոշում է կայացրել հիշյալ հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին:

Վերոնշյալ որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

Վերոնշյալ որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի նոյեմբերի 17-ին կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը թիվ ՇԴ/0072/01/15 քրեական գործով 2016 թվականի օգոստոսի 23-ին կայացրել է դատավճիռ:

Վերոնշյալ դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք, այդ թվում՝ նաև քաղաքացիական հայցն ընդունելուց հրաժարվելու որոշման մասով, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ մերժվել է: Հիշյալ որոշմամբ, մասնավորապես, նշվել է, որ հայցադիմումը վարույթ ընդունելուց հրաժարվելու մասին որոշում կայացնելով՝ դատարանը ոչ թե տուժողների իրավահաջորդներին զրկել է

իրենց հարազատների կյանքի իրավունքի խախտման համար ոչ նյութական վնասի հատուցման իրավունքից, այլ միայն փաստել քրեական գործի շրջանակներում նման հայցի քննության ոչ ենթակա լինելը:

Վերոհիշյալ որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 2017 թվականի ապրիլի 18-ին կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

3. Դիմողները գտնում են, որ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ հոդվածի 2-րդ մասի և 159-րդ հոդվածի կարգավորումներն այնքանով, որքանով չեն սահմանում քրեական դատավարության կարգով ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունքը, հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 24-րդ, 25-րդ, 61-րդ, 63-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

Դիմողները բարձրացնում են նաև օրենսդրական բացի հիմնախնդիր պայմանավորված այն հանգամանքով, որ Օրենսգրքը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի ներդրման, չի նախատեսում քրեական դատավարությունում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտ, ինչը հանգեցնում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բացակայության, որն էլ, իր հերթին, հանգեցնում է սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների խախտման:

Դիմողները գտնում են, որ քրեական դատավարությունում առկա օրենսդրական բացի, ինչպես նաև վիճարկվող իրավակարգավորումների իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանելու հետևանքով տուժողների իրավահաջորդները փաստորեն հնարավորություն չեն ունեցել արդյունավետ և ճշգրիտ կազմակերպել իրենց վարքագիծը՝ ուղղված ոչ նյութական վնասի հատուցմանը, և փաստացի գրկվել են այդ իրավունքից, ինչը հետևանք է վիճարկվող օրենսդրական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը (այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային) հակասելուն:

Դիմողների ներկայացրած դիրքորոշումների հաջորդ ելակետը վերաբերում է քաղաքացիական հայցը քրեական գործի հետ համատեղ քննելու օրենսդրական երաշխիքի անհրաժեշտությանը: Նշված դիրքորոշումը դիմողները ներկայացնում են այն հիմնավորմամբ, որ նշված երկու հարաբերությունները սերտորեն փոխկապակցված հարաբերություններ են, և դրանց համաժամանակյա, նույն վարույթում քննելու անհրաժեշտությունը բխում է քաղաքացիական հայցվորների արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության և ողջամիտ ժամկետներում գործի քննության (արդարադատության ժամանակին իրականացման) իրավունքներից: Նշված տեսակետը ներկայացնելիս դիմողները նաև

վկայակոչում են միմյանց հետ փոխկապակցված տարբեր գործերի մեկ դատարանում քննելու անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը և գալիս այն եզրահանգմանը, որ հիմնական՝ քրեական գործի շրջանակներում ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցի քննարկման և լուծման օրենսդրական երաշխիքի և համապատասխան արդյունավետ կառուցակարգի բացակայությունը հանգեցնում է Սահմանադրությամբ ամրագրված՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման՝ առաջադրելով բարոյական վնաս կրած տուժողին իր իրավունքի վերականգնմանը հասնելու համար նոր, տևական և ծախսատար գործընթաց, ինչը, ինքնին, հանգեցնում է արդյունավետ դատական պաշտպանության և արդարադատության ժամանակին իրականացման իրավունքների խախտման և դրանով պայմանավորված՝ նոր վնասի:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, 154-րդ հոդվածը, 158-րդ հոդվածի 2-րդ մասը և 159-րդ հոդվածը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ քրեական դատավարության ընթացքում քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունք վերապահող իրավակարգավորումների էությունից բխում է, որ քրեական դատավարության ընթացքում քաղաքացիական հայց ներկայացնելը տուժողի իրավունքն է, և նա գործնականում կարող է նախընտրել իրեն հանցագործությամբ պատճառված գույքային և ոչ գույքային բնույթի վնասի հատուցում պահանջելու համար առանձին հայց ներկայացնելը քաղաքացիական դատավարության ընթացակարգով: Պատասխանողը նշում է, որ այս կարգավորման էությունը կայանում է նրանում, որ գույքային վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները ենթարկվում են հայցային վաղեմության ժամկետի ներգործությանը, և գործնականում քրեական դատավարության ընթացքում գույքային վնասի հետ կապված պահանջների քննությունը, մի կողմից, առավել արդյունավետությամբ է օժտում այդ պահանջների քննությունը, մյուս կողմից՝ դրա համար դատավարության ընթացքում կիրառելի ապացուցողական բազան առավելապես համընկնում է հանցագործության փաստի ապացուցման համար կիրառվող փաստական հանգամանքների հետ:

Պատասխանողը գտնում է, որ ընթացակարգային առանձնահատկություններով պայմանավորված պատճառած ոչ նյութական վնասի հատուցման հարցը քրեական դատավարության ընթացակարգով քննելը կարող է անհարկի բարդացնել, ընդլայնել կամ երկարաձգել գործի քննության ընթացքը: Ուստի ոչ նյութական վնասի փոխհատուցման հայցապահանջների հետ կապված գործերի քննության առանձին և հատուկ, քրեա-

կան դատավարությունից զատ, ընթացակարգ սահմանելը նպատակ ունի ապահովել նման պահանջների համակողմանի և օբյեկտիվ քննության առավել լայն նախադրյալներ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ վիճարկվող իրավակարգավորումներով հանցագործությամբ պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցման հնարավորություն չնախատեսելն ինքնին չի կարող հանգեցնել և չի հանգեցնում տվյալ նորմերի հակասահմանադրականությանը: Ինչ վերաբերվում է իրավական բացի առկայության մասին դիմողների փաստարկին, ապա, ըստ պատասխանող կողմի, այնքանով, որքանով անձնական ոչ գույքային իրավունքների հետագա պաշտպանության իրականացումը լիովին հնարավոր է կազմակերպել քաղաքացիական դատավարության շրջանակներում, իրավական բացի մասին խոսելն ըստ էության հիմնավոր չէ:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումը, ըստ էության, վերաբերում է քրեական դատավարության շրջանակներում ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու և քրեական գործի հետ համատեղ քննելու անհնարինությանը, ինչը, մասնավորապես, հանգեցնում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Կոնվենցիա) 6-րդ հոդվածով և սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Իր մի շարք որոշումներով (մասնավորապես՝ ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289, ՄԴՈ-1293, ՄԴՈ-1296) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դա-

տաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, իր 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ նշել է, որ դատարանի մատչելիության մակարդակը կամ այդ իրավունքի էությունն սկզբունքորեն բնորոշվում է որպես մի քանի բաղադրիչների ամբողջություն՝ հատկանշելով հետևյալ առաջնահերթ տարրերը.

- հայցադիմում ներկայացնելու, վնասի հատուցում պահանջելու և դատարանի որոշումն ստանալու իրավական հնարավորություն,
- ընթացակարգային այնպիսի սահմանափակումների (ձևական, ժամկետային /այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման հետ կապված/ և այլն) սահմանում, որպիսիք չպետք է խաթարեն մատչելիության իրավունքի բուն էությունը,
- իրավաբանական օգնություն ստանալու կամ սեփական շահերի պաշտպանությունն անձամբ իրականացնելու անձի իրավունքի ապահովումը,
- գործով ըստ էության կայացված դատական ակտի վերջնականություն,
- դատարանի վերջնական ակտի ողջամիտ ժամկետում կատարման երաշխավորում:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները:

Սարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում ևս բազմիցս անդրադարձել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը: Դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն իրավական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (*Golder v. United Kingdom*, 21 Feb. 1975, *Fayed v. United Kingdom*, 25 Aug. 1994, *Ashingdane v. United Kingdom*, 28 May 1985, *Garcia Manibardo v. Spain* (15 Feb. 2000), 29.06.2000, *Bellet v. France*, 20 Nov. 1995, *Philis v. Greece*, 27 Aug. 1991, *Tolstoy Miloslavsky v. United Kingdom*, 23 Jun. 1995):

6. Քրեական դատավարության շրջանակներում վնասի հատուցման իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, մասնավորապես, որ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է անձին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելու հիմքերը, համաձայն որի՝ քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս: Նշյալ դրույթից բխում է, որ քրեական դատավարության շրջանակներում անձը կարող է ներկայացնել միայն գույքային վնասի հատուցման պահանջ: Իսկ Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Այսինքն՝ նշված դրույթի տրամաբանությունը նույնպես հանգում է քրեական դատավարության շրջանակներում միայն գույքային վնասի հատուցման պահանջ ներկայացնելուն:

Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը: Օրենսգրքի «Տուժողի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 59-րդ հոդվածով սահմանվում է, որ տուժողը, նույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի, ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը:

Օրենսգրքի՝ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 45-րդ կետի համաձայն՝ վնասը դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասն է:

Օրենսգրքի վերոնշյալ իրավակարգավորումները սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների հետ համադրելու արդյունքում Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ թեև Օրենսգրքով «վնաս» հասկացության սահմանման մեջ ներառվում է նաև «բարոյական» եզրույթը, բայց քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցով չի նախատեսվում բարոյական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն:

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ սույն գործի շրջանակներում դիմող կողմը բարձրացնում է օրենսդրական բացի հարց: ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-917, ՄԴՈ-922, ՄԴՈ-933, ՄԴՈ-1020, ՄԴՈ-1056, ՄԴՈ-1143, ՄԴՈ-1154, ՄԴՈ-1255 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումն օրենսդիր իշխանության իրավասությունն է: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Չարգացնելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Օրենսդիրը, ինչպես փաստվում է սույն գործով պատասխանողի գրավոր բացատրությամբ, գտել է, որ պատճառած ոչ նյութական վնասի առկայության կամ բացակայության ապացուցման համար անհրաժեշտ փաստերը, դրանց ապացուցման գործընթացը, ինչպես նաև ընթացակարգային այլ առանձնահատկություններն էականորեն տարբեր են քրեական դատավարության ընթացակարգից, ուստի այն նույն վարույթում քննելը կարող է անհարկի բարդացնել, ընդլայնել կամ երկարաձգել գործի քննության ընթացքը:

Ի դեպ, հարկ է նշել, որ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատարանը՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ապահովումը դիտարկում է պետության լայն հայեցողության շրջանակներում: (**CASE OF KÁROLY HEGEDŰS v. HUNGARY**, (Application no. 11849/07), JUDGMENT, November 2011, FINAL, 03/02/2012):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վնասի (նյութական և ոչ նյութական) հատուցման ինստիտուտը հանդիսանում է քաղաքացիաիրավական ինստիտուտ, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես, 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում: Հարկ է նշել, որ սույն գործով դիմող կողմը ևս նշում է, որ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը ներդրված է ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ՇԴ2/0013/01/11 որոշմամբ հայտնել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության շրջանակներում ենթակա են հատուցման՝

ա) քրեական օրենքով արգելված արարքով անմիջականորեն պատճառված գույքային վնասը,

բ) վնասված կամ ոչնչացված (կորսված) գույքը վերականգնելու, գնելու ծախսերը,

գ) տուժողի բուժման կամ հուղարկավորության համար կատարված անհրաժեշտ ծախսերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հիշյալ որոշմամբ նշել է նաև, որ քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա են միայն վերոնշյալ վնասները, իսկ հանցագործության հետևանքով պատճառված այլ վնասների հատուցման վերաբերյալ պահանջները չեն կարող քննության առնվել քրեական գործի հետ համատեղ և պետք է թողնվեն առանց քննության, ինչը շահագրգիռ անձին հնարավորություն կտա իր գույքային պահանջները ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴՈ-1121 որոշմամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցման օրենսդրական ներդաշնակության ապահովման անհրաժեշտության վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքը լրացվել է 162.1-րդ հոդվածով, որով սահմանվել է ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը: Նշված հոդվածը հետագայում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-184-Ն ՀՀ օրենքով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցագործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավակարգավորումները սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ: Իսկ այդ իրավակարգավորումների սահմանադրականության գնահատումը սույն գործի շրջանակներից դուրս է:

8. Միաժամանակ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հանցագործությամբ պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական) հատուցման իրավակարգավորումները թե՛ իրավական եզրույթների սահմանումների հստակեցման և թե՛ ընդհանուր հայեցակարգային և համակարգային կարգավորման ամբողջականության ապահովման առումով ենթակա են հետագա օրենսդրական կատարելագործման՝ հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի, մասնավորապես, 2013 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1102 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական հանձնառությունները: Մասնավորապես, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման խնդրում Եվրոպայի խորհրդի շրջանակներում ներդրված իրավական սկզբունքները հանգում են հետևյալին, որ՝

- տուժող կողմը պետք է տեղեկացվի քրեական դատավարության ընթացքում վնասի հատուցում, իրավաբանական օգնություն և խորհրդատվություն ստանալու իր հնարավորությունների մասին,

- քրեական գործերով դատարանը պետք է հնարավորություն ունենա որոշում կայացնել հանցանք կատարած անձի կողմից տուժողին փոխհատուցում տրամադրելու մասին: Այդ նպատակով գոյություն ունեցող սահմանափակումները, սահմանները և տեխնիկական խոչընդոտները, որոնք կանխում են այդպիսի հնարավորության գործնական իրականացումը, պետք է վերացվեն,

- տուժողի կրած բոլոր վնասների և կորուստների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի դատարանին, որպեսզի այն կարողանա պատժի ձևի և չափի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել.

ա) տուժողի՝ վնասի հատուցում ստանալու անհրաժեշտությունը,

բ) հանցանք կատարած անձի կողմից կատարված վնասի հատուցումը կամ այդ նպատակով գործադրված ջանքերը.

- դատավճռի կատարման փուլում, եթե փոխհատուցումը քրեական սանկցիա է, ապա այն պետք է իրականացվի տուգանքների հավաքման համար սահմանված կարգով և առաջնահերթություն ունենա հանցանք կատարած անձի վրա դրված ցանկացած տեսակի այլ ֆինանսական սանկցիայի նկատմամբ: Բոլոր այլ դեպքերում տուժողին պետք է աջակցություն ցուցաբերվի գումարի հնարավորինս հավաքման հարցում (Հանձնարարական No. R (85) 11 on the position of the victim in the framework of criminal law and procedure (Adopted by the Committee of Ministers on 28 June 1985 at the 387th meeting of the Minister’s Deputies):

Միաժամանակ, կարևորվել է նաև, որպեսզի՝

- փոխհատուցում ստանալու հարցում, ապահովագրական ընկերությունների կամ այլ կազմակերպությունների կողմից վճարվող գումարների և, հնարավորության դեպքում, պետության կողմից տրվող փոխհատուցում ստանալու հարցում աջակցություն տրամադրվի (Հանձնարարական Rec(2006)8 of the Committee of Ministers to member states on assistance to crime victims (Adopted by the Committee of Ministers on 14 June 2006 at the 967th meeting of the Ministers' Deputies),

- պետությունները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար տուժողների քաղաքացիական պաշտպանության միջոցների մատչելիությունը և ապահովեն ողջամիտ ժամկետում իրավասու դատարանների մատչելիության իրավունքը և համապատասխան դեպքերում՝ իրավաբանական օգնությունը,

- պետությունները սահմանեն տուժողների համար քրեական դատավարության շրջանակներում հանցագործություն կատարած անձից վնասի փոխհատուցում հայցելու ընթացակարգեր: Տուժողներին նաև պետք է տրամադրվի խորհրդատվություն և աջակցություն այդ հայցերը կազմելու և սահմանված վճարները գանձելու ուղղությամբ,

- փոխհատուցումը հատկացվի ֆիզիկական և բարոյական վնասների վերականգնման և բուժման համար (Rec(2006)8 հանձնարարականի հավելված):

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ ամրագրված արժանապատվության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքների, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման սահմանադրական պահանջների կենսագործման նկատառումներից ելնելով և վերոնշյալի հաշվառմամբ հանցագործությամբ պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական) հատուցում պահանջելու իրավունքի իրացման ապահովման ամբողջական և արդյունավետ օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Լուսինե Ավետիսյանի, Անահիտ Կոչտոյանի, Անդրանիկ Պողոսյանի, Նարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3(91)2018

հոդվածի 2-րդ մասի, 159-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մարտի 2018 թվականի
ՄԴՈ-1408



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ԼՈՒՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ԿՈՇՏՈՑԱՆԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ,
ՆԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 154-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ, 158-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 159-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՄԴՈ-1408 որոշմամբ կարճել է «Լուսինե Ավետիսյանի, Անահիտ Կոշտոյանի, Անդրանիկ Պողոսյանի, Նարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ հոդվածի 2-րդ մասի, 159-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը:

Սահմանադրական դատարանը գտել է, որ հանցագործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավակարգավորումները սահմանվում են քաղաքացիական օրենսդրությամբ, որպիսի իրավակարգավորումների սահմանադրականության գնահատումը դուրս է տվյալ գործի շրջանակներից:

Դատարանի մեծամասնության եզրակացությանը համաձայնել չենք կարող և գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենսգրքի մեկ այլ՝ 74-րդ հոդվածի 1-ին մասը չեն համապատասխանում Սահմանադրության 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին՝ հետևյալ պատճառաբանություններով.

1. Ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներն (17, 162.1, 1087.2, 1087.3 հոդվածներ) առավելապես վերաբերում են հանրային իշխանության կողմից

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018

պատճառված վնասին՝ բաց թողնելով միմյանց նկատմամբ ենթակայական հարաբերությունների մեջ չգտնվող անձանց կողմից պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը: Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի համաձայն՝ ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոսնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ: Այնուհետև նշված հոդվածի երկրորդ մասով սահմանվում է, որ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն **իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված որոշ հիմնարար իրավունքներ:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ և 1087.3-րդ հոդվածներից նույնպես բխում է, որ հատուցման ենթակա է **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը:**

Վերոգրյալից հետևում է, որ քաղաքացիական օրենսդրության վերը նշված իրավակարգավորումները տուժողներին հնարավորություն չեն տալիս հանցագործության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար դրսևորել համապատասխան վարքագիծ և այդ իրավունքի իրացմանը հասնել քաղաքացիական դատավարությունում:

2. Հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի համար փոխհատուցում պահանջելու՝ անձի իրավունքը սահմանված է քրեական դատավարական օրենսդրությամբ, որը, սակայն, այդ վնասի հատուցման հստակ ընթացակարգեր դեռևս չի նախատեսել:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ գտել է, որ՝ «Օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավա-

կան երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, **կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը»:**

Քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածով տրվում է տուժողի հասկացությունը, համաձայն որի՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է **բարոյական**, ֆիզիկական կամ **գույքային վնաս**: Նույն հոդվածի համաձայն՝ տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել **բարոյական**, ֆիզիկական կամ **գույքային վնաս**, եթե ավարտվել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանվում է, որ տուժողը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և օրենքով սահմանված կարգով, իրավունք ունի, ի թիվս այլնի, ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը, իսկ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 45-րդ կետում «վնասը» մեկնաբանվում է նաև որպես **դրամական չափման ենթակա բարոյական վնաս**:

Մյուս կողմից՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է անձին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելու հիմքերը, որի համաձայն՝ քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա **գույքային վնաս**: Այդ իրավակարգավորման հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենսգրքի մեկ այլ՝ 74-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով **գույքային վնաս** պատճառած մեղադրյալի գործողությունների համար:

Վերոնշյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ թեև օրենսդիրն ընդունում է, որ հանցագործությամբ անձին կարող է պատճառվել ոչ միայն գույքային, այլ նաև բարոյական վնաս և ճանաչում է դրա համար փոխհատուցում ստանալու տուժողի իրավունքը, այնուամենայնիվ, Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 74-րդ հոդվածի 1-ին մասերով

առանձնացնելով միայն գույքային վնասը, ըստ էության արգելափակել է նույն օրենսգրքով նախատեսված **դրամական չափման ենթակա** բարոյական վնասի հատուցման՝ դիմողների իրավունքի իրացումը: Նման իրավիճակը չի բխում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

3. Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը կարևորում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման գործուն մեխանիզմների անհրաժեշտությունը:

Այսպես «...Դատարանը համապատասխան գործերով բավարարում է արդարացի փոխհատուցման պահանջը՝ ցավը, լարվածությունը, անհանգստությունը և հիասթափությունը ճանաչելով որպես ոչ նյութական վնասի փոխհատուցման հիմք» (**«Poghosyan and Baghdasaryan v. Armenia», app. no. 2999/06, 12.06.2012**): ՄԻԵԴ-ը նկատի ունենալով, որ Հայաստանի օրենսդրությունը ոչ նյութական վնասի փոխհատուցում չի տրամադրում, գտել է, որ դիմումատուն զրկված է եղել արդյունավետ պաշտպանության միջոցից:

Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ վճռով փոխհատուցման հարցը լուծելիս հաշվի է առնում գույքային վնասը, այսինքն՝ իրական վնասը, որը հանդիսանում է հայտարարված խախտման ուղղակի հետևանքը, և **բարոյական վնասը**, այսինքն՝ տազնապի, անհանգստության և անվստահության վիճակը, որը վրա է հասել այդ խախտման արդյունքում, ինչպես նաև այլ ոչ գույքային վնասներ (**«Khachatryan and others v. Armenia», app. no. 23978/06, 27.02.2013, «Comingersoll S.A. v. Portugal», app. no. 35382/97, 06.04.2000**):

Հարկ է նշել, որ բազմաթիվ վճիռներով դատարանը նաև գտել է, որ հանցագործության համար մեղավոր անձի դատապարտումը բարոյական վնասի համարժեք փոխհատուցում է, այնուամենայնիվ, վերը նշված՝ Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության

գործով կայացված վճռում ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ՝ «...Կոնվենցիայի առավել հիմնարար դրույթներ հանդիսացող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը պետք է սկզբունքորեն հասանելի լինի իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում» (§ 46):

ՀՀ սահմանադրական դատարանը 2013 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1102 որոշմամբ, անդրադառնալով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտին և հղում կատարելով միջազգային պրակտիկային, այդ թվում՝ հարցի առնչությամբ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի հունիսի 14-ի Rec(2006)8 և 1985 թվականի հունիսի 28-ի R(85)11 հանձնարարականներին, որոնցով կարևորվել է տուժողների համար քրեական դատավարության շրջանակներում վնասի, ներառյալ բարոյական վնասի փոխհատուցման ապահովումը, գտել է, որ այդ խնդրի օրենսդրական կարգավորման մակարդակում պետք է հաշվի առնվեն նաև միջազգային պրակտիկայում հաստատագրված հայեցակարգային մոտեցումները՝ որպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթներից անմիջականորեն բխող պահանջներ:

4. Կարծում ենք, որ վիճելի իրավակարգավորման սահմանադրականության հարցն անհրաժեշտ էր քննարկել նաև ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և 63-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի համատեքստում: Արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ներառում են դատարանի մատչելիությունը, ողջամիտ ժամկետում համապատասխան վճռի կայացումը և այդ վճռի կատարումը, ինչպես նաև վճռի բողոքարկման իրավունքը և կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը կամ համարժեք փոխհատուցումը, եթե հնարավոր չէ վերականգնել մինչև խախտումը եղած վիճակը:

ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1102 որոշմամբ կարևորել է «օրենսդրական կարգավորման մակարդակում հայեցակարգային այնպիսի մոտեցման հետևողական կիրառման անհրաժեշտությունը, որի դեպքում կերաշխավորվի **մեկ գործի շրջանակներում արդարադատական միասնական ընթացակարգով, հնարավորինս պարզեցված կարգով** այդ վնասի արագ, լիարժեք ու արդյունավետ (արդարացի) վերականգնումը (հատուցումը): Այդպիսի իրավապայմանների՝ օրենքով երաշխավորման անհրաժեշտությունը սահմանադրաիրավական պահանջ է, բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ և բազմաթիվ

այլ հողվածներից»: Այդ երաշխիքների ապահովմամբ արդարադատության իրականացման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-929 և ՄԴՈ-983 որոշումներով:

Թեև վերը նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցման առնչությամբ, այն հավասարապես կիրառելի է նաև բարոյական վնասի հատուցման պահանջի դեպքում: **Առավել ևս, որ առկա չէ գույքային և բարոյական վնասների առանձնահատկություններով պայմանավորված որևէ հանգամանք, որը թույլ կտար պնդել, որ քրեական գործով ներկայացված քաղաքացիական հայցի շրջանակներում կարող է պահանջվել միայն գույքային բարոյական վնասի հատուցում, իսկ բարոյական վնասի հատուցում չի կարող պահանջվել:**

Խնդրո առարկա իրավակարգավորումն անձի արդյունավետ դատական պաշտպանության ապահովման և դատավարական սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների պահպանման տեսանկյունից գնահատելու նպատակով անհրաժեշտ ենք համարում վկայակոչել 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում «իր գործի ... քննության իրավունք» ձևակերպման սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 3-ի ՄԴՈ-787 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը:

5. Վնասի հատուցման պահանջն առանձին վարույթում հարուցելու առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առանձնացրել է հնարավոր երկու հետևանքներ, որոնք կարող են թուլացնել այդ միջոցի արդյունավետությունը: Առաջինը վերաբերում է հատուցման այդ միջոցի արագությանը, երկրորդը՝ դատական ծախսերին (**«McFarlane v. Ireland», app. no. 31333/06, §122, 10.09.2010**):

ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ «...հատուկ ուշադրություն պետք է դարձնել, *inter alia*, փոխհատուցման միջոցի արագությանը, չբացատրելով, որ հատուցման համարժեքությունը կարող է դրա չափազանց տևողության պատճառով թուլանալ (նսեմացվել)» (**«Vidas v. Croatia», app. no. 40383/04, §36, 03.07.2008**):

Դատավարական ծախսերի առնչությամբ Եվրոպական դատարանը գտել է, «որ որոշակի ամրագրված ծախսեր կարող են զգալիորեն խոչընդոտել հատուցում ստանալուն ուղղված ջանքերին» (**«Cocchiarella v. Italy», app. no. 64886/01, §102, 29.03.2006**):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից հայցվորներն ազատվում են միայն հանցագործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, իսկ նույն հոդվածի վերջին մասի համաձայն՝ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար ընդհանրապես պետական տուրք չի գանձվում, հետևաբար՝ քաղաքացիական դատավարության կարգով բարոյական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում դիմողները հարկադրված են լինելու կրել լրացուցիչ ֆինանսական բեռ:

Քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 74-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «գույքային» եզրույթը ոչ միայն թույլ չի տալիս ապահովել տուժողի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը, այլ նաև նրան ծանրաբեռնում է լրացուցիչ պարտավորությամբ: Բացառելով հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի հատուցման պահանջի լուծումը մեկ գործի՝ տվյալ քրեական գործի շրջանակներում, ներկա իրավակարգավորումը պարտավորեցնում է, որպեսզի անձը պարտադրված դիմի տարբեր դատարաններ, ինչը ոչ միայն դժվարացնում է նրա իրավունքների պաշտպանության գործընթացը՝ խաթարելով ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման արդյունավետության սկզբունքը, այլև հնարավոր է դարձնում, որ անձը՝ բարոյական վնասի հատուցման առանձին պահանջ ներկայացնելով, վերապրի հանցագործության հետևանքով հարազատներին կորցնելու ցավն ու տառապանքը:

Ելնելով վերոշարադրյալից, կարծում ենք, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Քաղ. Երևան
29 մարտի 2018թ.

Ա. Գյուլումյան
Ֆ. Թոխյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Լուսինե Ավետիսյանի, Անահիտ Կոչոտոյանի, Անդրանիկ Պողոսյանի, Նարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ հոդվածի 2-րդ մասի, 159-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 19 մարտի 2018 թվականի ՄԴՈ-1408 որոշման վերաբերյալ

ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1408 որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ ունեմ հետևյալ առարկությունները:

Դատարանն իր հիշյալ որոշման պատճառաբանական մասի հիմքում իրավական տեսանկյունից ըստ էության օբյեկտիվ է դիտարկել «տուժող» քրեադատավարական սուբյեկտի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի կիրառման հանգամանքը, միաժամանակ գտնելով, որ օրենսգրքի հիշյալ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում առկա է իրավական բաց, քանի որ «...անձը կարող է ներկայացնել միայն գույքային վնասի հատուցման պահանջ», հետևաբար իրավական այդ «բացով» պայմանավորված օրենսդրական զարգացումների անհրաժեշտությունն արձանագրելով է դատարանը պայմանավորել գործով վարույթի կարճումը:

Մինչդեռ, անդրադառնալով հիշյալ գործի շրջանակներում վիճարկվող նորմատիվ դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմողների հարցադրումներին եւ փաստարկներին, Սահմանադրական դատարանը կարեւոր պետք է համարեր նախ՝ հարցը դիտարկել հանցավոր արարքով անձին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունների ընդհանուր իրավակարգավորումների շրջանակներում: Իսկ այդ հարաբերությունները կարգավորող քրեադատավարական նորմերի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(91)2018

համակարգային ուսումնասիրումը վկայում է, որ օրենսդիրը վնասի հատուցման կանոնակարգման հիմքում **տուժողին** (58-րդ հոդված) տարբերակել է **քաղաքացիական հայցվորից** (60-րդ հոդված)՝ ելնելով քրեական գործի վարույթի շրջանակներում այդ սուբյեկտների իրավական կարգավիճակի առանձնահատկություններից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի եւ 59-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն **տուժող** է ճանաչվում այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), ում (որին) քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը: Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն **քաղաքացիական հայցվոր** է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակագույքային վնաս: Ընդ որում, «վնաս» եզրույթի ներքո, ըստ օրենսգրքի 6-րդ հոդվածի 45-րդ կետի, օրենսդիրը մասնավորապես նկատի է ունեցել դրամական չափման ենթակա վնասը:

Այսպիսով, տուժողի եւ քաղաքացիական հայցվորի իրավական կարգավիճակների հիմքում օրենսդիրը դիտարկել է, նախեւառաջ, քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի արդյունքում այդ անձանց պատճառված վնասի անմիջականության աստիճանը, ընդ որում, ի տարբերություն քաղաքացիական հայցվորի, տուժողի կարգավիճակ ձեռք է բերում այն անձը, որին հանցավոր արարքի արդյունքում վնասը պատճառվել է **անմիջականորեն**:

Տուժողը եւ քաղաքացիական հայցվորը վնասի հատուցման իրենց սահմանադրական իրավունքն իրացնում են համապատասխանաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի եւ 61-րդ հոդվածի հիմքերով՝ նույն օրենսգրքի 20-րդ գլխում նախատեսված ընթացակարգերի շրջանակներում:

Այսպիսով, քրեական վարույթի շրջանակներում օրենսդիրը տարբերակել է որպես տուժող ճանաչված անձին պատճառված վնասի (այդ թվում՝ բարոյական) հատուցման նորմատիվ կարգավորումները՝ որպես քաղաքացիական հայցվոր ճանաչված սուբյեկտի համանման իրավունքի իրացման կարգավորումներից, ելնելով մասնավորապես այն առանձնահատկությունից, համաձայն որի՝ ի տարբերություն քաղաքացիական հայցվորի, տուժողը թե՛ ֆիզիկական ու գույքային, եւ թե՛ բարոյական վնասի փոխհատուցման իրավունքունի: Հետեւաբար, քրեական գործի վարույթի

շրջանակներում վնասի հատուցման հետ կապված դատավարական նորմերի կիրառման հիմքում, ըստ գործող օրենսգրքի, պետք է դրվի հենց այդ տարբերակումը, այսինքն՝ որպես «տուժող» ճանաչված դատավարական սուբյեկտին պատճառված վնասի հատուցման իրավունքն իրացնելի է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, ինչպես կարծել են գործով դիմողները, այլ՝ օրենսգրքի 59-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի հիմքով, ելնելով այդ իրավունքի իրացման՝ օրենսգրքի 20-րդ գլխում (այդ թվում՝ 154-րդ, 158-րդ, 159-րդ հոդվածներում) նախատեսված ընթացակարգերից: Այդ իրավապայմանի շրջանցումն է ըստ էության հանգեցրել գործով տուժողների իրավունքների խախտմանը եւ հանգեցրել նորմատիվ դրույթների կիրառման իրավաչափության խնդրին, ինչը ենթակա էր լուծման ոչ թե սահմանադրական վեճի այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական բողոքարկման շրջանակներում:

Գործում առկա դատական ակտերի ուսումնասիրումը վկայում է, որ հանցավոր արարքի արդյունքում վնասը պատճառվել է քրեադատավարական իմաստով որպես տուժող ճանաչված անձանց: Հետեւաբար, այդ անձանց պատճառված վնասի հատուցման (այդ թվում՝ բարոյական) հետ կապված պահանջներն ընդհանուր իրավասության դատարանում ենթակա էին լուծման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ, 59-րդ եւ օրենսգրքի 20-րդ գլխում նախատեսված նորմատիվ պահանջների կիրառմամբ, ինչը պետք է արձանագրվեր սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում եւ միաժամանակ պետք է փաստագրվեր, որ իրավական առումով դիմողների համար առաջացած անբարենպաստ հանգամանքները՝ կապված քրեական գործով վարույթի շրջանակներում վնասի հատուցման գործող կարգավորումների ենթադրյալ սահմանադրականության հետ, կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետեւաբար, խնդրո առարկա նորմատիվ դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, ներկայացնելով այն այդ նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության տեսանկյունից: Այլ կերպ, գործով սահմանադրականության հարց կարող էր քննվել սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, եւ այն դեպքում, երբ նման վեճ քրեական վարույթի շրջանակներում ծագեր վիճարկվող իրավանորմերի՝ օրենսգրքի վերոհիշյալ պահանջներին համապատասխան կիրառվելու արդյունքում, նկատի ունենալով նաեւ այն **էական հանգամանքը**, որ սահմանադրական դատարանի իրավասությունից դուրս է դատական ակտերի իրավաչափության կամ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծումը:

Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճելիս պետք է առաջնորդվեր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեռականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջացնող դիմումներ:

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ

13 սեպտեմբերի 2018թ.

**ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

Ս.թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Ազգային ժողովի ԱԺՈ-016-Ա որոշմամբ Արման Դիլանյանն ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր:

ԱՐՄԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԴԻԼԱՆՅԱՆ

Ծնվել է 1974 թվականին Արարատի մարզի Գետափնյա գյուղում:

1996 թվականին ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը:

2004 թվականին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական կոչում՝ «Միջազգային հանրային իրավունք» մասնագիտացմամբ: Ատենախոսության թեման՝ «Միջազգային դատարանները և միջպետական վեճերի խաղաղ կարգավորման հիմնահարցերը»:

21.08.1996 թվականից աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանում՝ որպես աշխատակազմի քարտուղարության առաջին կարգի մասնագետ, ապա՝ նախագահի տեղակալի օգնական, իսկ այնուհետև՝ իրավախորհրդատվական ծառայության (վարչության) անհատական դիմումների վերլուծության բաժնի վարիչ:

29.09.2012 թվականից մինչև 26.04.2013 թվականը կատարել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության (վարչության) պետի պարտականությունները:

03.04.2006 թվականից մինչ օրս դասավանդում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում («Միջազգային իրավունք», «Միջազգային արդարադատություն» առարկաներ): Նույն թվականից մինչև 2013 թվականի փետրվար ամիսը հանդիսացել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի վարիչը:

2013 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ վարչական դատարանի դատավոր:

2015 թվականից դասավանդում է ՀՀ Փաստաբանական դպրոցում («Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում», «Ներկայացուցչությունը վարչական վարույթում» առարկաներ):

2017 թվականի ապրիլի 28-ին ՀՀ դատավորների միության ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է ՀՀ դատավորների միության խորհրդի անդամ: Ընդգրկված է «Դատական իշխանություն» ամսագրի խմբագրական խորհրդի կազմում:

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

Ամուսնացած է: Ունի երկու զավակ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
«ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ. ՏԵՂԵԿԱԳԻՐ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ. ՏԵՂԵԿԱԳԻՐ»
պարբերականի խմբագրական խորհուրդ՝ հետևյալ կազմով.
 Հ. Թովմասյան – ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ
 Ա. Գյուլումյան – ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
 Ֆ. Թոխյան - ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
 Ա. Թունյան - ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
 Ա. Խաչատրյան - ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
 Հ. Նազարյան - ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
 Ա. Պետրոսյան - ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի՝ «Սահ-
մանադրական դատարանի «Տեղեկագրի» նախապատրաստման և հրա-
տարակման նպատակով խմբագրական խորհրդի ստեղծման մասին»
1996թ. դեկտեմբերի 18-ի ՍԴԱՈ-55 աշխատակարգային որոշումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 սեպտեմբերի 2018 թվականի
ՍԴԱՈ-69

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 02.10.2018թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(91)2018
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(91)2018
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(91)2018